

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԸ

XVII դ. - XVIII դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԱՆ

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԸ XVII Դ. - XVIII Դ.
ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

(պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)



Երևան
Հեղինակային հրատարակություն
2024

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 583

Գիրքը հրատարակվում է
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի
ֆինանսական աջակցությամբ:



Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.թ. **Պոտ Երանյան**

Եսայան Անդրանիկ

Ե 583 Տավուշ գավառը XVII դ. - XVIII դ. առաջին քառորդին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) / Ա. Եսայան.- Եր.: Հեղ. հրատ., 2024.- 196 էջ + քարտեզ:

Գիրքը նվիրված է Տավուշ գավառի 1600-1725 թթ. պատմությանը, հատուկ ուշադրություն է դարձվում պատմաժողովրդագրական հարցերին: Հիմք ընդունելով 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ը՝ ներկայացվում են հայերի և գավառում ու հարակից տարածքներում հայտնված թյուրքական ցեղերի բնակության արեալը, Տավուշի գյուղերն ու հարկատու հայ բնակիչները՝ անուն առ անուն, ինչպես նաև գավառի տնտեսական դրությունը: Անդրադարձ է կատարվում տեղի հայկական մելիքության ու հոգևոր-մշակութային կյանքի պատմությանը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և առհասարակ Հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Աղբյուրների և գրականության տեսություն	13

Գլուխ I

ՊԱՐՍԿԱ-ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌՈՒՄ XVII Դ. ՍԿԶԲԻՆ

ա) Նախընթաց պատերազմների հետևանքները	19
բ) Տավուշ գավառը շահաբաայան բռնագաղթի տարիներին	25
գ) Օտար էթնիկ տարրերի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում	35
զ) Տավուշ-Շամշադին տեղանունների նույնացումը	42

Գլուխ II

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԸ ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ (1606-1725) ԹԹ.

ա) Ռազմական գործողությունների ավարտն ու երկար-ամյա հաշտության հաստատումը	47
բ) Տավուշի հայկական մեղիքությունը	48
գ) Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը	54

Գլուխ III

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ա) Ռազմաքաղաքական դրությունը XVII դ. վերջին XVIII դ. սկզբին	68
---	----

բ) Լեզգիների արշավանքները հյուսիսարևելյան Հայաստան	71
գ) Թուրքական նվաճումներն Այսրկովկասում	76

Գլուխ IV

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌՆ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ «ԳԱՆՁԱԿ- ՂԱՐԱԲԱԳԻ ԷՅԱԼԵԹԻ 1727 Թ. ԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՖԹԱՐ»-Ի

ա) Ընդհանուր տեղեկություններ վավերագրի վերաբերյալ	81
բ) Թավուս (Տավուշ) նահիյեի հայկական բնակչությունն ու բնակավայրերը	88
գ) Թավուս (Տավուշ) նահիյեի մահմեդական բնակչությունն ու բնակավայրերը	96
դ) Լքված գյուղեր	102
ե) Ախընջայի (Ախնջի) նահիյե	105
զ) Հասանսուի նահիյե	109
է) Հասանսուի նահիյեի մահմեդական բնակչությունը	112
ը) Անմարդարևակ գյուղեր	114
թ) Ասրիկ և Յալ նահիյե	117
ժ) Անկոտիում	123
Վերջաբան	127
Հավելված	
ա) Աղյուսակներ	130
բ) Հարկատուների ցանկեր	134
գ) Բնագիր տեքստ	144
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ	165
Summary	178
Անվանացանկեր	182

ԱՌԱՋԱԲԱՆ

Տավուշ գավառը Տուչքատակ (որոշ ձեռագրերում՝ Տուչկատակ, Տուս-Քուսատակ, Ուշանատակ և այլն) որպես Մեծ Հայքի Ուտիք նահանգի հինգերորդ գավառ վկայված է «Աշխարհացոյց»-ում¹: Բացի այդ, Մովսես Խորենացու պատմության՝ Վարդգես Մանկան վերաբերյալ ավանդազրույցում հիշատակված Տուիք գավառը Պարույր Մուրադյանը նույնացնում է Տավուշի հետ²: Գավառի զբաղեցրած տարածքի հարցի շուրջ ուսումնասիրողների կարծիքները զանազանվում են, ուստի նպատակահարմար ենք գտնում հակիրճ ներկայացնելու այդ հակամետ տեսակետները:

Աշխարհացոյցյան Տավուշի տեղագրությանն անդրադարձել է Ղուկաս Ինճիճյանը³, որը հիմնականում ի մի է բերել միջնադարյան հայ հեղինակների՝ Տավուշի վերաբերյալ հաղորդած տեղեկությունները: Ղևոնդ Ալիշանը փորձել է հստակեցնել գավառի սահմանները⁴ և առաջ քաշել այն տեսակետը, ըստ որի Տավուշ գավառը համապատասխանում է համանուն գետի վերին հոսանքին, իսկ սահմանները հասնում են մինչև Կածարեթ ամրոց⁵:

¹ Մովսես Խորենացի, *Աշխարհացոյց, Մատենագիրք հայոց* (հետայսու՝ ՄՀ), Կ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153:

² Պ. Մուրադյան, «Տուիսց գաստի» տեղորոշման հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես» (հետայսու՝ «ՊԲՀ»), 1979, № 1, էջ 245–250:

³ Ղ. Ինճիճեան, *Ստորագրութիւնք Հին Հայաստանայց*, Վենետիկ. 1822, էջ 349–352:

⁴ Ղ. Ալիշան, *Տեղագրութիւնք Հայաստանի, Ուտի, Բագմավեպ, Վենետիկ-Ս. Ղազար*, 1990, № 3–4, էջ 361:

⁵ Տե՛ս նույն տեղում: Այս ամրոցի ավերակները գտնվում են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Տավուշ գյուղի տարածքում:

Սուրեն Երեմյանը նույնպես աչքաթող չի արել միջնադարյան Տավուշի տեղադրության հարցը: Ըստ նրա՝ Տուչքատակի նախնական ձևը պետք է լինի Տուս-Քուստակը: Ի տարբերություն Ալիշանի՝ Երեմյանը հանգել է այն տեսակետին, որ գավառի տարածքը համապատասխանում է Տավուշ գետի ստորին ավազանին՝ զբաղեցնելով մոտ 700 քառ. կմ տարածք⁶: Ինչ վերաբերում է գետի վերին ավազանին՝ հեղինակը, Արցախ նահանգի Քուստի-Փառնես գավառը բաժանելով երկու մասի՝ Քուստ և Փառնես, դրանցից առաջինը տեղադրում է Տավուշ գետի վերին հոսանքի շրջանում⁷:

Կարծում ենք, որ Բաբկեն Հարությունյանի տեղորոշումն առավել ընդունելին ու ճշգրիտն է: Հանգամանորեն նկարագրելով ու տեղորոշելով Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգների գավառները՝ նա եզրակացնում է, որ Տուչքատակը համապատասխանում է Տավուշ, Վարազաջուր (Հախում, Հասանսու), Ախնջի, Խնձորուտ գետերի ավազաններին, իսկ սահմանները ձգվում են մինչև Կուր գետ⁸: Այսինքն, հարավից գավառի սահմանն Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառն էր, հյուսիս-արևելքում հասնում էր Կուր գետին, արևելքում և հարավ-արևելքում սահմանակից էր Ուտիքի Գարդման, իսկ արևմուտքում և հյուսիս-արևմուտքում՝ Աղուե գավառներին⁹: Տավուշն, ըստ Հարությունյանի, ընդգրկում է նաև Վարազաջուր գետի ավազանը՝ հասնելով մինչև Կուր գետին՝ արևելքում սահման ունենալով Պայտապարի (Հախումի) լեռները, իսկ արևմուտքում՝ Գարդմանի լեռները: Տիգրան Գևորգյանը, հիմնականում համերաշխվելով

⁶ Ս. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երևան, 1963, էջ 86:

⁷ Նույն տեղում, էջ 90:

⁸ Բ. Հարությունյան, *Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի*, *Հայոց Արևելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, հողվածների ժողովածու*, Երևան, 2016, էջ 71: Տե՛ս ներդիր քարտեզը, էջ 72:

⁹ Աղուե գավառն ըստ հեղինակի տեղակայված էր Աղստև գետի միջին հոսանքում: Այնքան Հակոբյանը, սակայն, այն տեղադրում է Գետիկի ավազանում: Տե՛ս Ա. Յակոբեան, *Պատմա-աշխարհագրական և վիճակագրագիտական հետազոտություններ (Արցախ և Ուտիք)*, Վիեննա-Երևան, 2009, տե՛ս ներդիր քարտեզ:

Հարությունյանի հետ, սխալմամբ նույնացնում է Տավուշ բերդն ու Տուս գյուղը՝ վերջինս տեղադրելով Տավուշ գետի գետաբերանում¹⁰:

Արտաշեսյան և Արշակունի արքանների օրոք Ուտիքն իր գավառներով մտնում էր Մեծ Հայքի թագավորության կազմի մեջ: Արշակ II թագավորի (350–368) կառավարման շրջանում արքայի դեմ սկսված ապստամբությունն ու պարսկական արշավանքների պատեհ առիթն օգտագործելով՝ Աղվանից պետությունը, ի թիվս Կուրի աջափնյակում ընկած մի շարք գավառների, Մեծ Հայքի թագավորությունից նվաճում է նաև Տավուշը: Սակայն Պապ թագավորի (374–378) իշխանության տարիներին սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին հաջողվում է այդ տարածքները վերստին միավորել Մեծ Հայքին¹¹:

Արաբական պատժիչ զորքերը, որոնք Բուղայի հրամանատարությամբ IX դ. կեսերին արշավել էին Հայաստան, անցան նաև հյուսիսարևելյան Հայաստանի գավառներ: Տավուշին արևելքից սահմանակից Գարդմանը գրավելուց հետո նրանք շարժվում են առաջ և Տուս¹² գյուղում ձերբակալում Կոն մականվամբ հայտնի Սևորոյաց Ստեփանոս իշխանին¹³:

Աշոտ I (885–890) Բագրատունին թագադրվելուց անմիջապես հետո իրեն է ենթարկում նաև հյուսիսարևելյան Հայաստանը: Այդ անցքերի մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Դրասխանակերտցին՝ Ուտի գավառի կենտրոնախույս բնակչությանը տալով «ելուզակ» մակդիրը. «Այլ եւ զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց եւ

¹⁰ Տ. Գևորգյան, *Հայոց Արևելից կողմերը ըստ «Աշխարհացոյց»-ի*, թեկնածուական ատենախոսություն, (անտիպ), Երևան, 2013, էջ 135–136:

¹¹ Փավստոս Բուզանդ, *Բուզանդյարան պատմությունը*, ՄՀ, հ. Ա, Անթրիլիաս-Լիբանան, 2003, էջ 390:

¹² Տուս գյուղը մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպում է Հովհաննես Դրասխանակերտցու երկում և համապատասխանում է ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Տավուշ գյուղին:

¹³ Յովհաննես Դրասխանակերտցի, *Պատմություն Հայոց*, ՄՀ, հ. ԺԱ, Անթրիլիաս-Լիբանան, 2010, էջ 436 (հետայսու՝ Դրասխանակերտցի):

գելուզակուտ մարդիկ Ուտի¹⁴ գաառի առ հասարակ ընդ ձեռամբ նուաճէր...»¹⁵: Բագրատունի արքաները մեծ ուշադրություն էին դարձնում ռազմավարական նշանակություն ունեցող հյուսիսարևելյան սահմաններին, ինչի արդյունքը կարելի է համարել նրանց օրոք կառուցված բերդերի խիտ ցանցը¹⁶:

Տավուշի ու հարևան գավառների իշխանական տները պարբերաբար դրսևորում էին կենտրոնախույս տրամադրություններ՝ ջանալով ազատվել Բագրատունի արքաների գերակայությունից: Այս ամենը հաշվի առնելով՝ Աշոտ II (914–928) արքան իր գահակալության սկզբնական տարիներին ստեղծեց Ուտի գավառ վարչական միավորը և նշանակեց վերակացու¹⁷: Արտաշես Շահնագարյանի կարծիքով՝ հենց IX դ. վերջում և X դ. առաջին տասնամյակին Սմբատ I (890–914) արքայի կառավարման շրջանում կառուցվում է Տավուշ բերդը, որն էլ դառնում է արքունապատկան վարչական միավորի կենտրոնը¹⁸:

Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսն իր պատմության հետագա շարադրանքում գավառը հիշատակում է Տավուշ ձևով: Կարելի է ենթադրել, որ Տուչքատակ, Տուս-Քուստակ տեղանունից անցումը Տավուշին, ամենայն հավանականությամբ, կատարվել է Բագրատունյաց շրջանում՝ X դ. երկրորդ կեսին¹⁹: Ուտի վարչական միավորի սահմաններում ընդգրկված Դրասխանակերտցու հիշատակած Տավուշի ձորը համապատասխանում է գետի վերին հոսանքի շրջանին: Հետևաբար, հետագայի աղբյուրներում վկայվող Տավուշ գավա-

¹⁴ Չշվիորթի «Պատմություն Ադուանից» երկի հեղինակների հիշատակած Ուտի գավառի հետ: Վերջինիս տեղագրության մասին մանրամասն տե՛ս Հ. Առաքելյան, *Երկին առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջ*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, № 6, էջ 69–86 (հետայսու՝ ԼՀԳ):

¹⁵ Դրասխանակերտցի, էջ 444:

¹⁶ Նշանավոր բերդերից են Գազը, Ղալինջաքարը, Գավարգինը, Կածարերը, Տավուշը և այլն:

¹⁷ Տե՛ս Ա. Շահնագարյան, *Ուտի գավառը*, «Բանբեր հայագիտության», 2020, № 2, էջ 26–42:

¹⁸ Տե՛ս Ա. Շահնագարյան, *Տավուշ բերդը*, «Հայագիտության հարցեր», 2022, 25 (1), էջ 33–42:

¹⁹ Պ. Մուրադյան, «Տուխաց գավառի» տեղորոշման հարցի շուրջ, էջ 248:

որը հիմնականում համապատասխանում է գետի վերին հոսանքն ընդգրկող և Հովհաննես կաթողիկոսի հիշատակած Տավուշի ձորին: Այսինքն, աշխարհացույցյան Տուչքատակ-Տավուշ գավառը հանդես է գալիս որպես ավելի փոքր միավոր, որը ներառում էր համանուն բերդն ու հարակից բնակավայրերը: Շփոթից խուսափելու համար հարկ է իրարից զանազանել աշխարհացույցյան Տուչքատակ-Տավուշ աշխարհագրական միավորը X դարից հիշատակվող Տավուշ գավառից: Վերջինս, ի տարբերություն աշխարհացույցյան Տուչքատակի, զբաղեցնում էր ավելի փոքր տարածք: Տավուշ գավառի տարածքի մի մասն այժմ գտնվում է ՀՀ կազմում և համապատասխանում է Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքին: Ինչ վերաբերում է Տավուշ գետի ստորին՝ դեպի Կուր գետ ընկած շրջաններին՝ դրանք ներկայումս գտնվում են Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) Թովուզի շրջանի կազմում:

Բագրատունյաց թագավորության անկումից և սելջուկների տիրապետության հաստատումից հետո (XI դ.) Տավուշ գավառն անցնում է Բագրատունիների կրտսեր ճյուղերից Կյուրիկյաններին²⁰: Կյուրիկյան իշխանները հաստատվում են Մաժնաբերդում, Տավուշում և Նոր բերդում²¹: Առավել երկար կյանք են ունենում Նոր բերդի և Մաժնաբերդի իշխանությունները:

Նոր բերդի Դավիթ Կյուրիկյանի անվան հետ է կապված նաև XIII դ. վերջին Նոր Վարագավանքի վանական համալիրի կառուցումը, որը սկզբնապես հայտնի էր Անապատ անվամբ²²: Նոր-բերդի և Մաժնաբերդի Կյուրիկյան իշխանությունները XIII դ. ընդգրկված էին Զաքարյանների կրտսեր ճյուղի՝ Վահրամյանների տիրույթների կազմում: Վերջիններիս հաջողվեց սելջուկներից ազատագրել հյուսիս-

²⁰ Դեռևս X դ. սկզբներից Կյուրիկյանները տիրում էին հյուսիսային Հայաստանի մի շարք գավառների, տե՛ս Վարդան Վարդապետ, Հասարմնն պատմություն, Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 90:

²¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 152 (հետայսու՝ Գանձակեցի):

²² Նույն տեղում, էջ 153:

արևելյան Հայաստանի մի շարք գավառներ ու բերդեր՝ այդ թվում Տավուշ բերդը²³: Այս տարածքները կազմեցին Աղստեհի ստորին հոսանքի ձախափնյակում ընկած Գագ բերդից մինչև Շամքոր ընկած Վահրամյանների իշխանությունը²⁴:

Տավուշում XIII դ. սկիզբը նշանավորվեց նաև հոգևոր մշակութային վերելքով: Այն մեծապես կապված էր Վանական վարդապետ Տավուշեցու (1181–1251) անվան հետ²⁵: Նրա ջանքերով կառուցվեց Խորանաշատի հռչակավոր վանական համալիրը²⁶: Սուրբ Աստվածածին անունը կրող գլխավոր եկեղեցու շինարարությունը Վանականն ավարտում է 1222 թ.: Նրա ջանքերով Խորանաշատում հիմնրվեց նաև գրչատուն ու վարդապետարան, որտեղ կրթություն են ստացել հայ պատմագրության այնպիսի երևելիներ, ինչպիսիք են՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ակնեցցին²⁷:

Վահրամյանների իշխանությանը վիճակված չէր երկար գոյատևել. շուտով տարածաշրջանում հայտնվեցին մոնղոլները: Գանձակին տիրելով՝ նրանց գործի մի մասը Մուլար նոյինի գլխավորությամբ մտավ Վահրամ Գագեցու տիրույթներ²⁸: Կարճ ժամանակում մոնղոլներին հաջողվեց նվաճել հյուսիսարևելյան Հայաստանի կարևորագույն ամրոցներն ու բերդերը՝ այդ թվում Տավուշը, որը մոնղոլների ձեռքն անցավ 1236 թ.²⁹: Շարունակելով իրենց նվաճումները՝ մոնղոլները գրավեցին ամբողջ Հայաստանը և ավելի քան 100 տարի երկիրը մնաց նրանց տիրապետության տակ: Այնուհետև՝ XV դ. սկզբից Հայաստանում հաջորդաբար իշխում են թուրքմենական կարա-կոյունլու, այնուհետև ակ-կոյունլու ցեղերը:

²³ Կիրակոս Գանձակեցի, էջ 163:

²⁴ Տե՛ս Ա. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը*, Երևան, 1990:

²⁵ Տե՛ս Ա. Շահնազարյան, *Վանական վարդապետ Տավուշեցի*, (Մահվան 750-ամյակի առթիվ), «Էջմիածին», 2001, № ԺԲ, էջ 51–62:

²⁶ Գանձակեցի, էջ 346:

²⁷ Հ. Ոսկեան, *Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը*, Վիեննա, 1922, էջ 12:

²⁸ Վարդան Վարդապետ, *կշվ. աշխ.*, էջ 144–145:

²⁹ Գանձակեցի, էջ 243, հմմտ. Գրիգոր Ակնեցցի, *Պատմութիւն թայթարաց*, Երուսաղեմ, 1974, էջ 23:

Ենթարկվելով գանազան բանակների ու քոչվոր ցեղերի արշավանքներին, կրելով տարբեր պետությունների ու միավորումների գերիշխանությունը՝ տարածաշրջանում տնտեսական բնականոն կյանքը խաթարվեց: Աստիճանաբար սկսում է փոխվել նաև երկրամասի ժողովրդագրական պատկերը: Դա նախնատաջ պայմանավորված էր թյուրքական ցեղերի՝ Հայաստանի տարբեր շրջաններում հայտնվելով: Այդ գործընթացը, որը սկսվել էր դեռևս սելջուկ-թյուրքերի արշավանքներից, շարունակվեց մոնղոլների, ինչպես նաև կարա-կոյունլու ու ակ-կոյունլու թյուրքմենական ցեղերի տիրապետությունների շրջանում³⁰:

Տավուշ գավառի հարթավայրային շրջանները, գտնվելով Թիֆլիսը Գանձակին կապող հիմնական երթուղիների վրա, մշտապես տուժում էին պատերազմական գործողություններից: Նշված տարածքներն աստիճանաբար սկսում են յուրացվել եկամուտ քոչվոր ցեղերի կողմից: Հայկական բնակչությունը հիմնականում ապավինում է գավառի լեռնային շրջաններին: Նշված գործընթացները շարունակվում են XVI–XVII դդ., երբ Հայաստանի տարածքը դառնում է Օսմանյան կայսրության ու Սեֆյան Իրանի ռազմական գործողությունների ասպարեզ:

Սույն աշխատանքում կփորձենք վեր հանել Տավուշ գավառի պատմության մի վճռորոշ շրջանի՝ XVII–XVIII դդ. կարևորագույն դրվագները՝ առավել կենտրոնանալով երկրամասի ժողովրդագրական գործընթացների քննության վրա: Կարծում ենք, որ այդ ժամանակաշրջանի իրադարձություններն ու ժողովրդագրական տեղաշարժերը որոշ չափով պայմանավորում են նորագույն շրջանի մի շարք իրողություններ:

Տավուշ գավառի տվյալ ժամանակահատվածում պատմաժողովրդագրական գործընթացների անաչառ քննությունը խիստ արդիական է հատկապես մեր օրերում, երբ հարևան Ադրբեջանում պե-

³⁰ Տե՛ս Հ. Մարգարյան, *Եշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսին*, Երևան, 2023, էջ 18–19:

տական մակարդակով հետևողականորեն փորձ է արվում սեփական-
նեղ տարածաշրջանի պատմությունը: Մասնավորապես հյուսիսարևել-
յան Հայաստանը ներկայացվում է որպես եկվոր ադրբեջանցիների
պատմական հայրենիք, տեղաբնիկ հայերին՝ XIX դ. Ռուսաստանի
կողմից վերաբնակեցված ժողովուրդ: Վերջին տարիներին հրա-
տարակված գրքերում ադրբեջանցի հեղինակները, խեղաթյուրելով
ու կամայականորեն մեկնաբանելով պատմական փաստերը, նոր
«բարձունքների» են հասցնում սեփական պատմագրության տխուր
ավանդույթները³¹: Այս ամենին զուգահեռ՝ իրենց վերահսկողության
տակ գտնվող տարածքներում միտումնավոր կերպով վերացնում են
հայկական մշակութային ժառանգությունը՝ բացառելով հայկակա-
նության որևէ ապացույցի առկայություն:

XVII դարի առաջին տասնամյակից տարածաշրջանում հաս-
տատվում է Սեֆյան Իրանի գերիշխանությունը: Հայտնի է, որ Սեֆ-
յան դինաստիան հաստատվեց ղզլբաշական թուրքմեն ցեղերի օգ-
նությամբ: Դրանց մի մասը աստիճանաբար հաստատվեց Սեֆյան
Իրանի կողմից նվաճված ողջ տարածքում, այդ թվում՝ Այսրկովկա-
սում: Տեղերում իշխանությունն իրականացվում էր այդ ցեղերի միջո-
ցով, այլ կերպ ասած՝ նրանք կենտրոնական իշխանության ներկայա-
ցուցիչներն էին: Հայ բնակչությունը աստիճանաբար սկսում է հեռա-
նալ թյուրքական ցեղերի զբաղեցրած հարթավայրային շրջաններից
և քաշվում նախալեռնային ու լեռանային գոտիները: Կենտրոնանա-
լով բարձրադիր շրջաններում՝ հայ բնակչությունը համեմատաբար
խաղաղ պայմաններում կարողանում է տնտեսական ու մշակութային
որոշակի զարգացում գրանցել: Սկսած XVIII դ. Իրանը սկսում է թու-

³¹ Տե՛ս *Şamşəddil nahiyəsinin Kameral təsviri. 1860-cı il* (Tərcümə, tərtib, ön söz və qeydlərin müəllifi Nazir Əhmədli). Bakı: 2019, տե՛ս *Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri, Layihənin rəhbəri və ön sözü*n müəllifi: Yaqub Mahmudov, Bakı, 2010, տե՛ս նաև *Kadim Vatan Karabağ, Divan Kitap*, Editörler: K. Yerdelen, A. Yalçınkaya, İ. Memmedova, Baskı, 2022, տե՛ս Я. Махмудов, Т. Мустафазаде и ուրիշներ, *Ирванскоє Ханство, Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана*, Баку, 2010:

լանալ, սկսվում են նաև լեզգիների՝ դեպի տարածաշրջան կողոպտիչ արշավանքները: Այս ամենի հետևանքով Իրանի հետ մրցակցող Օսմանյան պետությանը 1725 թ. հաջողվում է նվաճել Այսրկովկասը, այդ թվում՝ Արևելյան Հայաստանը:

Աղբյուրների և գրականության տեսություն

Լինելով Հայաստանի սահմանային գավառներից մեկը՝ Տավուշը խոշոր հաշվով դուրս է մնացել ժամանակի պատմիչների տեսադաշտից: Այդուհանդերձ Առաքել Դավրիժեցու պատմությունը հնարավորություն է տալիս ընդհանուր գծերով պարզաբանել երկրամասի՝ շահաբասյան բռնագաղթից հիմնականում զերծ մնալու հանգամանքը³²: Պարսկա-օսմանյան պատերազմներին հաջորդած խաղաղության շրջանի վերաբերյալ արժեքավոր սկզբնաղբյուր է Ջաքարիա Քանաքեռցու աշխատությունը³³: Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի պատմությունը հարուստ նյութ է պարունակում տարածաշրջանի XVIII դ. առաջին քառորդի քաղաքական անցուդարձի, ինչպես նաև լեզգիների արշավանքների մասին³⁴: Սեֆյան Իրանի վարչական կառուցվածքի, ինչպես նաև հյուսիսարևելյան Հայաստանում հայտնված քոչվոր ճեղերի մասին կարևոր վկայություններ կարելի է հանդիպել Սեֆյան արքունիքի պալատական պատմագիր Իսկանդեր Մունշիի երկում³⁵: Սեֆյան շահերի վարչական ու հարկային քաղա-

³² Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմությանց, աշխատասիրությանք Լ. Խանկարյանի*, Երևան, 1990 (հետայսու՝ Առաքել Դավրիժեցի):

³³ Ջաքարիա Քանաքեռցի, *Պատմություն*, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Երևան 2015 (հետայսու՝ Ջաքարիա Քանաքեռցի):

³⁴ *Աղուանից կաթողիկոս Տ. Եսայի Հասան-Ջալալյանց*, Պատմություն համառոտ Աղուանից երկրի, նախաբանն ու ծանոթագրությունները Ա. Մարտիրոսյանի, Ստեփանակերտ, 2007 (հետայսու՝ Եսայի պատմիչ):

³⁵ Eskandar beg Monshi, *History of Shah Abbas the Great*, vol. I, II, Boulder, Colorado, 1978.

քականության վերաբերյալ կարևորագույն աղբյուր է «Թագքիրաթ ալ-մուլուք» (Արքաների հիշատակարան) վավերագիրը³⁶:

Դրա հետ մեկտեղ՝ աշխատանքի՝ սկզբնաղբյուրային նյութի մեծ բաժինն են կազմում հյուսիսարևելյան Հայաստանի գրչօջախներում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանները՝ տպագրված ու անտիպ³⁷:

Տավուշ գավառի XVI–XVIII դդ. պատմության ուսումնասիրության համար առանցքային նշանակություն ունեն օսմանյան ու վրացական աղբյուրները, առանց որոնց անհնար կլիներ մի շարք հարցերի հստակեցումը³⁸: Թուրքական աղբյուրներից կարևորագույն նշանակություն ունեն 1593 թ Գանձակ-Ղարաբաղի էյալեթի համառոտ³⁹ և 1727 թ. ընդարձակ դաֆթարները⁴⁰: Դրանք հնարավորություն են ընձեռում քննելու տարածաշրջանի էթնոկրոնական կազմը, հայերի ու թյուրքական նորեկ ցեղերի բնակության արեալը, մեզ հետաքրքրող

³⁶ Միրզա Սամի'ա, *Թագքիրաթ ալ-մուլուք (Արքաների հիշատակարան)*, թարգմանությունը և ծանոթագրությունը՝ Գ. Կոստիկյանի և Ժ. Մեշքանբաբյանսի, Երևան, 2019: Հմմտ. Tadhkirat Al-Muluk, a manual of Safavid administration, translated and explained by V. Minorsky, London, 1943:

³⁷ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, (1641–1660 թթ.), հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1984: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Գ, կազմեց Օ. Եգանյան, Երևան, 2007: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, խմբագրությամբ Գ. Տեր-Վարդանեանի, հ. Թ, Երևան, 2017: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (հետայսու՝ ՄՄ) ձեռ. № 365, № 3813, № 6705, № 6822, № 7501:

³⁸ Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հ. Ա, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961: Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հ. Բ, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Երևան, 1964: Вахушти Багратиони, *История царства Грузинского*, Тбилиси, 1976: Л. Մելիքետե-Բեկ, *Վրաց աղբյուրների Հայաստանի և հայերի մասին*, հ. Գ (ԺԸ–ԺԹ դդ.), Երևան, 1955:

³⁹ *Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi*, Gence-Karabağ Eyaleti'nin İcmal Defteri, Tapu-Tahrir Defteri (TT. d.), No. 699.

⁴⁰ *Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi*, Gence-Karabağ Eyaleti'nin Mufassal Defteri, (TT. d.), No. 903.

շրջանների վարչական բաժանումը, գանձվող հարկերի չափն ու տնտեսական ընդհանուր դրությունը:

Տարածաշրջանի վիմագրերի հետազոտությունն ու դրանց տվյալների՝ գրչագրերի հետ համադրումն օգնում են մեզ համար կարևոր մի շարք հարցերի պարզաբանմանը: Այս առումով տեղին է նշել, որ ներկայիս Բերդ խոշորացված համայնքի վիմագրերը երբևէ ամբողջական չեն ուսումնասիրվել⁴¹: Այս բացը լրացվում է Քաջիկյանի կողմից Թիֆլիսի «Արձագանք» շաբաթաթերթում XIX դ. վերջում հրատարակած «Ճանապարհորդական յիշատակարան»-ի տվյալները, որտեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է հյուսիսարևելյան Հայաստանի հուշարձանները, դրանց արձանագրությունները, ինչպես նաև տեղում պահվող ձեռագրերի հիշատակարանները⁴²: Նմանաբնույթ արժեքավոր տվյալներ է հաղորդում նաև Մակար Բարխուդարյանցն իր աշխատության էջերում⁴³: Չափազանց մեծ արժեք ունի Սամվել Կարապետյանի աշխատությունը⁴⁴: Շրջելով հյուսիսարևելյան Հայաստանի՝ այժմ ԱՀ կազմում գտնվող նաև ինդրո առարկա շրջաններում, նա ընթերցողին է հասցրել հարյուրավոր արձանագրությունների վերծանումներ ու հուշարձանների հատակագծեր: Հետեվաբար նրա աշխատությունն ունի նաև սկզբնաղբյուրային արժեք:

Չսայած հյուսիսարևելյան Հայաստանի միջնադարյան պատմության որոշ հարցեր գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում⁴⁵, այդուհանդերձ XVII–XVIII դդ. վերաբերող որևէ ուսումնա-

⁴¹ Թերևս բացառություն կարելի է համարել Կարո Ղաֆաղարյանի գլխավորությամբ 1935 թ. տեղի ունեցած գիտարշավը, որի նյութերը տպագրվել են հեղինակի մահից հետո, տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Շամշադիևի 1935 թվի հնագիտական գիտարշավը*, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 231–307:

⁴² Քաջիկյան, *Ճանապարհորդական յիշատակարան*, «Արձագանք», № 7. Թիֆլիս, 1888, էջ 86–90:

⁴³ Մակար եպս. Բարխուտարեանց, *Աղուսնից երկիր ևս դրացիք*. Արցախ, Երևան, 1999 (հետայսու՝ Բարխուտարեանց):

⁴⁴ Ս. Կարապետյան, *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004:

⁴⁵ Ա. Շահնագարյան, *Վահրամյանների իշխանությունը*, Երևան, 1990, նույնի՝ *Ուտի գավառը*, «Բանբեր հայագիտության», 2020, № 2, էջ 26–42, նույնի՝ *Տավուշ բերդը*, «Հայագիտության հարցեր», 2022, № 25 (1), էջ 33–42: Ռուբեն Մաթևոսյանը

սիրություն հրապարակում առկա չէ: Տավուշ գավառի պատմության տարբեր հարցերին անդրադարձել է Ռուբեն Միմոնյանը⁴⁶: Հյուսիսարևելյան Հայաստանի գրչության կենտրոններին նվիրված իր աշխատությունում Թամարա Մինասյանը անդրադարձ է կատարել նաև գավառի պատմության որոշ հարցերի⁴⁷:

Քննվող ժամանակահատվածում Տավուշ գավառն ընդգրկված էր Սեֆյան տերության կազմում, ուստի այդ պետության վարչական կառուցվածքի, քաղաքական ու տնտեսական դրության վերաբերյալ ուսումնասիրությունները մեզ համար կարևոր նշանակություն ունեն: Այդ առումով կարելի է առանձնացնել Ռուդի Մաթթիի⁴⁸ աշխատությունները: Նշանակալի է նաև Իլյա Պետրուշևսկու⁴⁹ մենագրությունը, որտեղ ի թիվս այլ հարցերի՝ հեղինակը քննում է մահմեդական տարբեր ցեղերի՝ տարածաշրջանում հայտնվելու պատճառներն ու ժամանակը: Նմանատիպ ուսումնասիրությունների շարքում արժեքավոր են հայ հեղինակներ Լեոյի⁵⁰, Հակոբ Փափազյանի⁵¹, Մանվել Զուլպյա-

Լոռու Կյուրիկյանների պատմության համատեքստում անդրադարձ է կատարել նաև նրանց՝ Տավուշում հաստատված ճյուղին, տես Ռ. Մաթթևոսյան, *Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ*, «ՊԲՀ», 1968, № 3:

⁴⁶ Ռ. Միմոնյան, *Տավուշի մարզ*, Երևան, 2012:

⁴⁷ Թ. Մինասյան, *Ուտիքի գրչության կենտրոնները*, Երևան, 2020:

⁴⁸ Տես R. Matthee, *Persia in crisis, Safavid decline and the fall of Isfahan*, Chapter 4, Monetary policy and the disappearing mints, 1600–1700, London, 2012, նույնի՝ *The politics of trade in Safavid Iran: Silk for silver, 1600–1730*, Cambridge, 1999, նույնի՝ *Relations between the center and the periphery in Safavid Iran*, The Historian, vol. 77, № 3, (2015) Published By: Taylor & Francis, pp. 431–463, նույնի՝ *Was Safavid Iran an Empire?*, Journal of the economic and social history of the orient, Published by Brill, № 53 (2010), pp. 233–265, նույնի՝ *The Ottoman-Safavid war of 986-998/1578-90: motives and causes*, International journal of Turkish studies, 2014, vol. 20, pp. 2–20, նույնի՝ *Safavid Iran and the "Turkish question" or how to avoid a war on multiple fronts*, Iranian Studies, 2019, vol. 52, № 3–4, pp. 513–542:

⁴⁹ И. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв.*, Ленинград, 1949.

⁵⁰ Լեո, *Հայոց պատմություն*, հ. III, գիրք I, Երևան, 1969, նույնի՝ *Հայոց պատմություն*, հ. III, գիրք II, Երևան, 1973:

⁵¹ Հ. Փափազյան, *Հորվածներ*, հ. Ա, Բ, Երևան 2020:

նի, Արամ Սաֆրաստյանի⁵², Հուսիկ Նաջարյանի⁵³, Քրիստինե Կուտիկյանի⁵⁴, Արտակ Մաղալյանի⁵⁵ գործերը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ բնակչության թվաքանակի մոտավոր հաշվարկման առումով կարևոր են Աշոտ Մելքոնյանի⁵⁶, Գոռ Երանյանի⁵⁷ և Միքայել Մալխասյանի⁵⁸ հետազոտությունները:

Սույն հետազոտությամբ փորձել ենք պատասխանել մեր առջև դրված հետևյալ խնդիրներին՝

1. Ի՞նչ ազդեցություն են ունեցել պարսկա-օսմանյան պատերազմները տարածաշրջանում,

2. արդյո՞ք Տավուշը Հայաստանի բազում գավառների օրինակով ենթարկվել է շահ Աբասի իրականացրած լայնամասշտաբ բռնագաղթին,

⁵² Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանոնաձևներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Խ. Սաֆրաստյանի և Մ.Կ. Չուլպյանի, Երևան, 1964, Մ. Չուլպյան, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500–1555 թթ.), «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1959, № 3, էջ 49–60, նույնի՝ Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում, Հայոց պատմություն, հ. II, գիրք II, Երևան, 2014, նույնի՝ Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:

⁵³ Հ. Նաջարյան, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959, նույնի՝ Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:


⁵⁴ Զ. Կոստիկյան, Գեղարքունիքի Մեյիք-Շահնագարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2005, հ. XXIV, նույնի՝ Ճագի Բնկ Իսֆահանի տարեգրությունը որպես հայ ժողովրդի ԺԶ–ԺԷ դարերի պատմության աղբյուր, գիտաժողով նվիրված հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի (1928–1988) ծննդյան 90-ամյակին, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2019:

⁵⁵ Ա. Մաղալյան, Արցախի մեկիբությունները և մեկիբական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, նույնի՝ Արցախի մեկիբությունները և Ղարաբաղի խանության ծագումը, «Հայոց պատմության հարցեր», 2009, № 10, էջ 87–112:

⁵⁶ Ա. Մելքոնյան, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994:

⁵⁷ Գ. Երանյան, Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակի ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների (Վասպուրականի օրինակով), Երևան, 2015:

⁵⁸ Մ. Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դ. առաջին կեսին, «Հայագիտության հարցեր», 2016, 1 (7), էջ 94–104:



3. Ինչ ազդեցություն է ունեցել պարսկա-օսմանյան խաղաղության տևական շրջանը Տավուշում, ո՛րոնք էին այն նպաստավոր գործոնները, որոնցով պայմանավորված գավառում գոյություն ուներ հայկական մելիքություն,

4. Մեֆյանների օրոք ինչ նոր ցեղեր են հայտնվել տարածաշրջանում և ինչպես են փոխել գավառի էթնիկ դիմագիծը,

5. XVIII դարասկզբին Իրանի թուլացումը, լեզգիների արշավանքները, այնուհետև դրան հաջորդած թուրքական նվաճումը ինչ ազդեցություն են ունեցել Տավուշի վրա:

Աշխատանքն ամփոփում ենք 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի՝ Տավուշ գավառին վերաբերող տվյալների քննությամբ: Դրանց հիման վրա փորձել ենք ուրվագծել տվյալ ժամանակ այդ գավառների բնակչության կազմը, էթնոկրոնական պատկերը, սոցիալ-տնտեսական վիճակը, բնակավայրերի քանակը: Համադրելով առկա սկզբնաղբյուրային նյութերը՝ հնարավորության սահմաններում կատարել ենք նաև այդ բնակավայրերի տեղորոշում:

ԳԼՈՒԽ I

ՊԱՐՍԿԱ-ՕՍՄԱՆԱՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌՈՒՄ XVII Դ. ՍԿԶԲԻՆ

ա) Նախընթաց պատերազմների հետևանքները

XVI դ. Հայաստանը հայտնվում է մահմեդական երկու խոշոր պետությունների՝ Օսմանյան կայսրության ու Սեֆյան Իրանի հակամարտության ոլորտում⁵⁹: Ի տարբերություն առաջինի, որն արդեն գտնվում էր իր հզորության գագաթնակետին, Սեֆյան Իրանը դեռևս կազմավորման փուլում էր⁶⁰:

Օգտագործելով Սեֆյան տան հեղինակությունն ու ազդեցությունը՝ Իսմայիլ I-ին (1502–1524) հաջողվեց իր իշխանության ներքո համախմբել թյուրքական⁶¹ մի շարք ցեղերի⁶², որոնք հայտնի էին նաև

⁵⁹ Պարսկա-օսմանյան պատերազմի առաջին փուլի մասին տե՛ս Մ. Զուլայան, *Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500–1555 թթ.)*, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1959, № 3, էջ 49–60:

⁶⁰ Հետազոտողներից ոմանք Սեֆյան Իրանը որոշ վերապահումներով կայսրություն են համարում, տե՛ս R. Matthee, *Relations between the center and the periphery in Safavid Iran*, *The Historian*, vol. 77, № 3, (2015) p. 433. Նույնի՝ *Was Safavid Iran an Empire?*, *Journal of the economic and social History of the orient* № 53 (2010), pp. 233–265, հմմտ. D. Streusand, *Islamic gunpowder empires: Ottomans, Safavids, and Mughals*, Published by Westview Press, 2011, p. 135:

⁶¹ Նշված ցեղերի մասին տե՛ս Don Juan of Persia, *A shi'ah catholic, 1560–1604*, translated and edited with an introduction by G. Le Strange, London, 1926, էջ 45.

ղզլբաշ ձևով⁶³: Ստեղծված պետական կազմավորումն ըստ էության ղզլբաշական ցեղերի համադաշնությունն էր, որտեղ գրիշխող դիրք ունեին թյուրքական (թուրքմենական) ցեղերը⁶⁴: Հետագայում Մեֆյանների գերիշխանության տակ անցան նաև զանազան քոչվոր ցեղեր՝ համալրելով ղզլբաշների շարքերը: Շահ Իսմայիլիին հաջողվեց պարտության մատնել ակ-կոյունլուներին և իր իշխանությունը հաստատել ամբողջ Իրանում⁶⁵: Այսպիսով Արևելյան Հայաստանի մեծ մասն անցնում է Իրանի իշխանության ներքո:

Մեֆյանների հզորացումը մարտահրավեր էր Օսմանյան կայսրությանը, հետևաբար այս երկու տերությունների միջև շուտով սկսվեցին ռազմական գործողություններ, որոնք ծավալվում էին հիմնականում Հայաստանի տարածքում:

Ամասիայի 1555 թ. հաշտության պայմանագրով Հայաստանը բաժանվեց Մեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև: Իրանին անցած Արևելյան Հայաստանի հետ՝ նրա մեջ մտնող Տավուշ գավառը նույնպես անցավ Մեֆյաններին: Այն ընդգրկվեց Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության կազմի մեջ, որի կենտրոն դարձավ Գանձակ քաղաքը⁶⁶: Դեռևս նախընթաց դարերից, աշխարհագրական դիրքով պայմանավորված, հյուսիսարևելյան Հայաստանի գավառները սերտ առնչություններ ունեին Գանձակի հետ: Բավական է միայն նշել, որ Տավուշ գետի ստորին ավազանն ընդգրկող հարթավայրային շրջաններով էին անցնում դեպի Գանձակ ձգվող առևտրական հիմնական

⁶² Մեֆյանների արքունիքում խոսակցական լեզուն այսպես կոչված ատրպատական կամ ղզլբաշական թյուրքերենն էր, պաշտոնական գրագրություններում զուգահեռաբար գործածվում էր նաև պարսկերենը, տե՛ս **W. Floor, H. Javadi, Role of Azerbaijani Turkish in Safavid Iran**, Cambridge University Press, Iranian Studies, (2013) vol. 46, Issue 4, p. 569–581:

⁶³ **И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв.**, Ленинград 1949, с. 68.

⁶⁴ **D. Streusand, Islamic Gunpowder Empires**, Boulder, 2011, p. 135.

⁶⁵ **Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության**, գիրք II, Երևան, 1959, էջ 16:

⁶⁶ **Tadhkirat Al-Muluk, a manual of Safavid Administration**, p. 101.

ուղիները⁶⁷: Հարակից գավառների հայ բնակչությունն իր տնտեսական գործունեության բերումով բազմաթիվ թելերով կապված էր Գանձակին: Այս ամենի վկայությունն է նաև հյուսիսարևելյան Հայաստանի տարբեր շրջաններից հայտնի գրավոր աղբյուրներում Գանձակը որպես մայրաքաղաք կոչելու ավանդույթը⁶⁸: Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք պնդել, որ հայերեն ձեռագրերի հիշատակագիր վկայություններում ու այլ աղբյուրներում հանդիպող «Գանձակի երկիր» ընդհանրացված միավորն իր մեջ ներառել է նաև Տավուշն ու հարակից գավառները:

Ամասիայի հաշտության պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Օգտվելով Իրանի ներքին անկայուն վիճակից՝ օսմանյան զորքերը 1578 թ. Մուստաֆա Լալա փաշայի ղյխավորությամբ ներխուժեցին Արևելյան Հայաստան⁶⁹: Սեֆյան շահ Խուդաբանդայի (1578–1587) որդի գահաժառանգ Համզա Միրզան սկզբնական շրջանում բավականին բարեհաջող դիմագրավում էր թուրքերին⁷⁰: Այդուհանդերձ մի քանի տարվա մեջ թուրքերը կարողացան շոշափելի արդյունքներ գրանցել: Լալա փաշային փոխարինած Ֆարհադ փաշան 1582 թ. գրավեց Արևելյան Հայաստանի ու Վրաստանի մեծագույն մասը: Սակայն Գանձակ-Ղարաբաղի բեկյարբեկության զգալի մասը դեռևս գտնվում էր գահաժառանգ Համզա Միրզայի վերահսկողության տակ: Այստեղ էր գտնվում նաև Խուդաբանդա շահը: Հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը՝ վերջիններս հակված էին զինադադար կնքել օսմանցիների հետ: Այդ կերպ նրանք ժամանակ կշահեին

⁶⁷ Տե՛ս Ռ. Սիմոնյան, *Տավուշի մարզի միջնադարյան ճանապարհները*, «Էջմիածին», 2001, № 6, էջ 94–107:

⁶⁸ Գանձակեցի, էջ 200: Տարածաշրջանի կենտրոն ընկալվելու մասին է վկայում նաև Տավուշ բերդի տարածքում գտնվող եկեղեցու պեղումներից հայտնաբերված արձանագրության մեջ Գանձակի վերաբերյալ հետևյալ բանաձևումը. «Չտիեզերուհոչակ քաղաքն Գանձակ»: Տե՛ս Հ. Եսայան, Ս. Սաղումյան, Ա. Ծախնազարյան, *Տավուշ ամրոցի պեղումները*, «ԼՀԳ», 1991, № 2, էջ 137:

⁶⁹ R. Matthee, *The Ottoman-Safavid war of 986-998/1578-90: motives and causes*, International journal of Turkish studies, 2014, vol. 20, № 1–2, pp. 16–17.

⁷⁰ Տե՛ս Eskandar beg Monshi, *History of Shah Abbas the Great*, vol. 1, էջ 444–455:

և պահպանելով տիրույթների զգալի մասը՝ կինազանդեցնեին մի շարք կենտրոնախույս ղզլբաշական ցեղապետերի: Սակայն շուտով Համզա Միրզան Գանձակի շրջակայքում սպանվում է⁷¹, իսկ Խուդաբանդա շահը, Խորասան հեռանալով, շատ չանցած գահից հրաժարվում է հոգուտ մյուս որդու՝ շահ Աբասի I-ի (1587–1629)⁷²:

Սեֆյանների տերության ներսում ղզլբաշական որոշ ազդեցիկ ցեղերի կենտրոնախույս ձգտումների հետևանքով առաջացած ճգնաժամը նպաստում է Օսմանյան կայսրության հաջող ռազմական գործողություններին: Ինչպես ժամանակի հայկական մի սկզբնաղբյուր է ավանդում, Սուլթան Մուրադ III-ը (1574–1595) օսմանյան զորքերի նոր հրամանատար Ֆարհադ փաշային հրամայում է գնալ Գանձակ և կարմրագլուխների⁷³ Սեֆյանների զորքերի մնացորդներին այնտեղից հեռացնել⁷⁴: Գանձակի ղաջարական ցեղի զիադոլուն ճյուղի բեկլարբեկ Մուհամադ խան Զիադոլուն իր ցեղակիցների հետ առանց դիմադրության թողնում է քաղաքը և հեռանում:

Տավուշ գավառին հյուսիսարևմուտքից մերձակա Ադստն գետի ստորին հովտում հաստատված ղազախլու ցեղի առաջնորդ Նազար սուլթան Ղազախլուն էլ, հպատակություն հայտնելով, անցավ օսմանյան զորքի կողմը⁷⁵՝ վարձատրվելով փաշայի տիտղոսով⁷⁶: Թուր-

⁷¹ *Eskandar beg Monshi, History of Shah Abbas the Great*, vol. I, p. 484.

⁷² *Լեո*, հ. III, գիրք I, էջ 200:

⁷³ Սեֆյանների զորքերը կրում էին կարմիր գլխանոցներ: Այստեղից էլ առաջացել է նրանց տրվող «ղզլբաշ» անունը: Ժամանակի հայկական աղբյուրներում հանդիպում է նաև «կարմիր գլակ», «կարմիր գլուխ», «կարմրագլուխ» տարբերակներ:

⁷⁴ «Իսկ ի ՌԼԷ (1588) թվականին դարձեալ հրաման էլ Մուրատ խոնդկեարեն յուճեմն Ֆարհատ կոչեցելոյ, յառողի և շինողի Յերևանայ, զոր յառաջ քան զՕսմանն նայ յունէր զգորապետութիւն կողմանս յարևելից յետ Լալային, և այժմ վերստին զիր յառաջին իշխանութիւնն շնորհեաց նմայ. և առաքեաց ի վերայ Գանձայոյ՝ հեռացուցանել զմնացեալ Կարմրագլուխքն, որ յանդ և շինել ի նմա բերդ և դառնալ: Որ և եկն իսկ ծանր զաւրու և արար ըստ հրամանի խոնդկեարին», տե՛ս *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.*, հ. II, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 246:

⁷⁵ Այս ցեղի առաջնորդները, պատերազմների վճռորոշ պահերին նշմարելով հաղթողին, պարբերաբար տիրափոխ էին լինում, տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմության*, գիրք I, Երևան, 1957, էջ 460: Նշենք, որ XVIII դ. 20-ականներին՝ տարածաշրջան թուրքերի մուտք գործելուց հետո, նրանք

քերին հաջողվեց նվաճել Գանձակը, ինչից հետո նրանք ձեռնամուխ եղան պաշտպանական ամրությունների կառուցմանը. «Եւ ի ամ ամի շինեցին բազում ամուր բերդս ի Տփխիս, ի Գարի, և ի Թամանիս, ի Թավրեզ, և ի Գանջայ, ի Շամախի և այլ տեղիս բազումս, որ էր թուով ԻԵ (25) բերդ»⁷⁷: Նպատակ ունենալով զարգացնել իրենց հաջողությունները, ինչպես նաև զգուշանալով ղզլբաշների հետագա հնարավոր հարձակումներից՝ թուրքերը կառուցեցին կամ վերանորոգեցին տարածաշրջանի ռազմավարական նշանակություն ունեցող բերդերը:

Կասկածից դուրս է, որ այս բերդերը կառուցվում էին երկրամասի բնակիչների ներգրավմամբ, ինչի հետևանքով նրանք զրկվելու էին իրենց տնտեսական կարիքները հոգալու հնարավորությունից: Հետևաբար Տավուշ գավառը ևս այս առումով պետք է հայտնված լիներ ոչ շահեկան դրության մեջ: Ենթադրելի է, որ Հովհաննեսիկ Ծարեցու հիշատակած 1579–1580 թթ. մոլեզված համաճարակն ու սովն իրենց դրսևորումներն են գտել նաև Տավուշում, թեպետ դրա մասին ուղղակի վկայություններ չկան⁷⁸:

Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև 1590 թ. Կոստանդնուպոլսում կնքվեց հաշտության պայմանագիր, որով վերջինիս անցան Հայաստանը, Վրաստանը, Շիրվանն ու Ատրպատա-

կրկին հայատակվեցին թուրքերին, տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 153: Ուշագրավ է՝ անտեսելով առկա փաստերը. թուրք և աղբյուրների որոշ ուսումնասիրողներ դազախյուցեղը ներկայացնում են որպես Սեֆյանների կողմից հայաժված, տե՛ս օրինակ *Türkler*, Cilt 7, Orta Çağ, editörler: Hasan Celal Güzel, Kemal Çiçek, Salim Koca. Ankara. 2002, էջ 23: Մ. Չուլպյանը գրում է, թե դազախյու, բորչալու և շամսաղիդնյու ցեղերը հակաթուրքական ապստամբություն են բարձրացրել, այնինչ դազախյուների օսմանյան գործի կողմն անցնելը հայտնի փաստ է, տե՛ս Մ. Չուլպյան, *Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1555–1595 թթ.)*, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1961, № 3, էջ 47:

⁷⁶ Eskandar beg Monshi, *History of Shah Abbas the Great*, vol. II, Boulder, Colorado, 1978, p. 583.

⁷⁷ Հայերուն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 217:

⁷⁸ Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II, էջ 242–244:

կանը⁷⁹: Տավուշ գավառը՝ Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության հետ անցավ Օսմանյան կայսրությանը: Բեկլարբեկության վարչական սահմանները թողնելով նույնը՝ օսմանյան իշխանություններն ավելի ամրացրին Գանձակը՝ այնտեղ տեղակայելով կայազոր⁸⁰: Բերդերի շինարարությունից բացի, նրանք նորանվաճ տարածքներում իրենց օրենքները ներդնելու ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկեցին: Օսմանյան կայսրության կողմից որևէ տարածք նվաճելուց հետո այդտեղ սովորաբար անց էր կացվում ընդհանուր աշխարհագիր, որի հիման վրա հստակեցվում էին հարկերն ու տուրքերը, վարչական բաժանումը և այլն⁸¹: Հայաստանի ու Օսմանյան կայսրության կազմում գտնվող այլ երկրների մասին հարուստ տեղեկություններ պարունակող այս աշխարհագիր մատյանների մեծ մասը գտնվում են Թուրքիայի Հանրապետության արխիվներում⁸²:

Հյուսիսարևելյան Հայաստանում իրականացված աշխարհագրի տվյալներն ամփոփված են 1593 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալերի համառոտ դաֆթար»-ում⁸³: Համաձայն դրա՝ Գանձակ-Ղարաբաղի էյալերը բաժանված էր 7 սանջակների (գավառների)՝ Գանձակ, Խաչեն, Գարգար, Աղստաբաղ, Վարանդա, Դիզակ և Հաքարի: Սանջակներն իրենց հերթին բաժանված էին ավելի փոքր վարչամիավորների՝ նահիյեների (գյուղախումբ): Սանջակներից ամենաընդարձակը Գանձակն էր, որը բաժանված էր Գանձակի և Բարդայի քաղաների (գավառակ): Դրանք միասին ունեին 25 նահիյե: Խաչենն ուներ 5, Գարգարը՝ 3, Աղստաբաղը՝ 6, Վարանդան՝ 1, իսկ Դիզակը և Հաքար-

⁷⁹ R. Matthee, *Safavid Iran and the "Turkish question" or how to avoid a war on multiple fronts*, Iranian Studies, 2019, vol. 52, № 3–4, p. 525.

⁸⁰ Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 148:

⁸¹ Ա. Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 17-րդ դարում*, «Արևելագիտական ժողովածու», 1960, № 1, էջ 291:

⁸² Տե՛ս Osman Gümüüşü, *The Ottoman tahrir defters as a source for Historical Geography*, Belleten, Türk Tarih Kurumu, Ankara, Aralık 2008, Cilt 72, էջ 911:

⁸³ *Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi*, Gence-Karabağ Eyâleti'nin İcmal Defteri, Tapu-Tahrir Defteri (TT. d.), No. 699.

րին՝ 4-ական նահիյեներ: Գանձակի քազայի կազմում որպես առանձին նահիյե հիշատակված է նաև Տավուշը: Հարկամատյանը տեղեկություններ է պարունակում նաև երկրամասում հաստատված տարբեր քոչվոր ցեղերի ու նրանց զբաղեցրած տարածքների վերաբերյալ:

բ) Տավուշ գավառը շահաբասայան բռնագաղթի տարիներին

Չհամակերպվելով տարածքային մեծ կորուստների հետ՝ շահ Աբասը քայլեր էր ձեռնարկում կորցրածը հետ բերելու ուղղությամբ: Շուտով Օսմանյան կայսրությունում բռնկվեց ջալալիների ապստամբությունը⁸⁴: Բանակն ուժեղացրած շահ Աբասը, օգտվելով նպաստավոր պայմաններից, 1603 թ. սկսեց ռազմական գործողությունները: Ղզլբաշական զորքերն ամռանը գրավեցին Թավրիզը, այնուհետև՝ Նախիջևանը, իսկ 1604 թ. մայիսի 28-ին տիրեցին Երևանի բերդին⁸⁵:

Այլ կերպ զարգացան իրադարձությունները հյուսիսարևելյան Հայաստանում: Նախքան Երևանի բերդի գրավումը՝ շահ Աբասն, իր զորապետերից Ամիրգունա խանի գլխավորությամբ զորախումբ է ուղարկում հյուսիսարևելյան Հայաստան: Վերջինս պետք է հարձակողական գործողություններով թուլացներ Գանձակի կայազորը, որպեսզի այն հանկարծակի չհարձակվեր դեպի Երևան շարժվող պարսկական հիմնական զորքերի վրա: Շահի հանձնարարությունը ճշտորեն կատարվում է: Ամիրգունա խանը երկու ամիս շարունակ ասպատակում է Գանձակն ու շրջակայքը՝ թուրքական զորքերին ու տեղական բնակչությանը պատճառելով մեծ կորուստներ. «Եվ նա գնացեալ ի Գանջայ եկեց ամիսս երկուս, և իբրև գիտաց թե տկար են

⁸⁴ Տե՛ն Մ. Չուլպյան, *Չալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ*, Երևան, 1966, էջ 45:

⁸⁵ Մ. Չուլպյան, *Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում*, Հայոց պատմություն, հ. II, գիրք II, Երևան, 2014, էջ 602:

Օսմանցիք՝ և ոչ կարեն զայն առնել, յայնժամ գերկիրն Գանձակայ՝
նոր և կարաց հասնել, հրո ճարակ տուեալ և սրով մաշեալ, զոչս կո-
տորեաց, զօրս ատերեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած
յերևան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին Պարսից»⁸⁶: Հասկանալի
է, որ այս արշավանքի ծանր կացության մեջ դրեց Գանձակի նաև հա-
րակից գավառների բնակչությանը: Քանի որ թուրքական կայազորը
պատսպարվել էր Գանձակի բերդում, առավելապես տուժեցին տա-
րածաշրջանի հայկական բնակավայրերը⁸⁷: Միքայել Մալխասյանը
ենթադրում է, որ գուցե Գանձակի ուղղությամբ տեղացիները դիմադ-
րություն փորձ են արել, որի պատճառով էլ պարսից զորքերն այս
տարածքներում մասնակի կոտորած են իրականացրել⁸⁸:

Գերեվարվածների թվաքանակի մասին տվյալներ չկան: Սակայն
Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկությունն ու ի մասնավորի
նրա՝ գերվածների ճակատագրի մասին ակնարկած «ի լիութիւն և ի
յղփութիւն բանակին Պարսից» արտահայտությունը ստիպում են կար-
ծել, որ տեղի ունեցածը համակարգված բռնագաղթ չի կարելի համա-
րել: Պարսկական զորքը բնակչությանը գերեվարում էր՝ հետագայում
վաճառելու կամ տարաբնույթ ծանր աշխատանքներում օգտագործե-
լու նպատակով: Դավրիժեցու հաղորդածից կարող ենք նաև ենթադ-
րել, որ գերեվարվածների մեջ զգալի թիվ են կազմել կանայք:

Երևանի բերդը գրավելուց հետո պարսկական զորքերը շարժ-
վում են Կարսի ուղղությամբ, սակայն հասնելով Շիրակավան՝ լուր
են ստանում, որ օսմանյան զորքերը Ջլալ օղլի Մինան փաշայի գլխա-
վորությամբ արդեն էրզրում քաղաքում են⁸⁹: Խուսափելով ճակատա-
մարտից՝ շահ Աբասը հրամայում է Երևանով նահանջել դեպի Թավ-
րիզ, այրել հացահատիկի պաշարները, իսկ բնակչությանը գաղթեց-

⁸⁶ Առաքել Դավրիժեցի, էջ 70:

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ Մ. Մալխասյան, *Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթի տարածքային ընդգրկման խնդիրը*, «Հայագիտության հարցեր», 2019, 3 (18), էջ 52:

⁸⁹ Առաքել Դավրիժեցի, էջ 77:

նել դեպի թիկունք: Ավերվում ու ամայացվում է թուրքական ռազմերթի հնարավոր երթուղին, իսկ ժողովուրդը բշվում է Արարատյան դաշտ ապա դեպի Իրան:

Առաքել Դավրիժեցին Տավուշից բնակչության գերեվարության և բռնագաղթի մասին որևէ հիշատակություն չի թողել, իսկ հյուսիսարևելյան Հայաստանից տեղահանվածները հենց այն գերիներն էին, որոնց դեռևս Երևանի պաշարման ժամանակ Ամիրգունա խանը բերել էր բանակատեղի: Հավանաբար նրանք գերեվարվել էին Գանձակի շրջակայքի հայկական բնակավայրերից: Այս բնակչությունը, ըստ Առաքել Դավրիժեցու՝ Պարսկաստան էր տեղափոխվել դեռևս 1604 թ. մեծ գաղթից առաջ⁹⁰:

Տեղահանության փաստն ու դրա հիշատակություններն արդեն իսկ վկայում են, որ նրանք որոշակի թիվ են կազմել: Այդուհանդերձ, կարելի է պնդել, որ Տավուշը, ինչպես նաև ամբողջ հյուսիսարևելյան Հայաստանը, տեղահանությունից հիմնականում զերծ է մնացել: 1614 թ. գրված մի հիշատակարանում գրիչը Առաքել Դավրիժեցու թվարկածներից բացի նշում է նաև այլ գավառներ: Մասնավորապես ըստ նրա՝ 1604 թ. տեղահանվել են նաև Շաքիի, Շիրվանի ու Գանձակի բնակիչները⁹¹: Կարծում ենք՝ այս տեղեկությունները այդքան էլ հավաստի չեն, քանի որ թվարկված բնակավայրերի մի զգալի մասում 1604 թ. ղզլբաշական զորքեր դեռևս չէին եղել: Բացի այդ, հիշատակարանը գրված է Վանում, իսկ մեզ հետաքրքրող շրջանի՝ այդ տարիների ձեռագրերի հիշատակարաններն այլ պատկեր են ներկայացնում: Մեր տեսակետի օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որ Տավուշ գավառի տարբեր բնակավայրերում պահպանվել են XVI դ. վերջի և XVII դ. առաջին տասնամյակի երկրորդ կեսով թվագրվող բավականին թվով խաչքարեր ու տապանագրեր: Օրինակ, ՀՀ Տա-

⁹⁰ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 75–76:

⁹¹ *Ցուցակ ձեռագրաց որ ի Հանդես Անուշուխայ, խմբագրությանը* Հ. Ոսկևանի, Վիեննա, 1976, էջ 114:

վուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի տարածքում գտնվող հին գերեզմանոցներում կարելի է գտնել XVII դարասկզբով թվագրվող տապանաքարեր: Սա ևս մեկ կարևոր վկայություն է առ այն, որ հյուսիսարևելյան Հայաստանը մեծամասամբ զերծ է մնացել բնակչության բռնի տեղահանությունից: Նշենք նաև, որ համայնքի տարբեր հանդամասերում ևս առկա են շահաբասյան բնագաղթին հաջորդող ժամանակաշրջանի բազմաթիվ գյուղատեղիներ և եկեղեցիների ու մատուռների ավերակներ:

Ամիրգունա խանը թեև սկզբում ասպատակեց Գանձակի շրջակայքը, սակայն քանի դեռ Երևանի բերդը գրավված չէր՝ Գանձակի նվաճումը ղզլբաշների ծրագրերում չկար: Երբ պարսկական զորքերը սկսեցին նահանջել, Գանձակում պատասխարված թուրքերը գործողությունների ազատություն ստացան: Երկար ժամանակ կտրված լինելով որևէ մատակարարումից, նրանք սկսեցին շրջակա տարածքների կողոպուտը: Բնագաղթից զերծ մնացած բնակավայրերը ենթարկվեցին օսմանյան կայագործի կողոպուտին: Այս իրողությունն իր արձագանքն է գտել 1604 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում: Հակոբ անունով քահանան, նկարագրելով թուրքերի ավերածությունները, նշում է. «Ես մեղաւոր [Ակոբ] երէցս գիրեցի զգիրս ի դառն և ի դժար ժամանակի, որ շահ Ապազն ելաւ ի Խորասանայ աւեր[ե]աց զՀայոց աշխարհս՝ Արգրումայ մինչև ի Շրվան: Յումանկուն Բ [2] անգամ գնաց ի երկիրն Գեղամայ, բազում գերիս գեր[ե]աց՝ ի քահանայի[ց] և սարկաւաքաց, Աւերարանաց և ի գրոց: Տարան ի քաղաքն Գանձակոյ վաճառեցին որդիքն ի վեր[այ] հարցն, կինն ի վերայ յայրոն, որն 6 (100) մարչիլ, որն 5 (50), այլ աւել և պակաս»⁹²: Ստացվում է, որ թուրքական զորքերը Գանձակի շրջակայքով չեն բավարարվել և հասել են Գեղամա երկիր: Օսմանյան կայագործի կողոպուտի ընդլայնված աշխարհագրությունը թերևս հուշում է, որ Ամիրգունա խանի արշավանքի հետևանքով Գանձակի շրջակայքն արդեն իսկ կողոպտ-

⁹² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620), հ. Ա, էջ 134:

ված ու ավերված էր, այդ իսկ պատճառով՝ թուրքական զորքերը ներխուժել էին համեմատաբար քիչ տուժած Սևանի ավազան: Հակոբ քահանայի հաղորդածը հաստատում է նաև Դավիթ եպիսկոպոսը 1606 թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում: Նա գրում է. «Յորժամ հեռացաւ շահն երկրէս Հայոց, արձակեցաւ անողորմ ազգն Ասմանին ի վերա մնացելոցն երկրին Գեղամայ, որ ոչ կարացին տանել ազգն Պարսից...»⁹³: Այսպիսով, Գանձակից Սևանի ավազան ընկած գավառները, որոնք բռնագաղթի չէին ենթարկվել, մեծ կորուստներ կրեցին թուրքական զորքերի կողոպուտներից:

Անցնելով Արևելյան Հայաստան՝ Սինան փաշան տեսավ ամայացած ու ավերված բնակավայրեր: Հասկանալով, որ հետագա առաջխաղացումը վտանգավոր է, և առկա է թիկունքից վերջնականապես կտրվելու սպառնալիք, նա նահանջեց Վան՝ ձմեռելու⁹⁴: Հաջորդ տարի Սինան փաշայի ձեռնարկումները հաջողություններ չունեցան: Պատերազմող կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Թավրիզից ոչ հեռու՝ Սոֆիան գյուղի մերձակայքում, որտեղ օսմանյան զորքերը ջախջախվեցին⁹⁵: Սինան փաշան փախավ Ամիդ, որտեղ էլ շուտով մահացավ⁹⁶:

Սինան փաշայի պարտությունից հետո, 1606 թ. գարնանը շահ Աբասը ձեռնամուխ է լինում հյուսիսարևելյան Հայաստանի նվաճմանը: Ղզլբաշական զորքերը գրավում են երկրամասի մեծ մասը և պաշարում Գանձակի բերդը: Ի վերջո բերդը գրավվում է, իսկ նրա 2500-անոց թուրքական կայազորը՝ հանձնվում: Շահ Աբասը, տեղում թողնելով մեծաթիվ ղզլբաշական զորքեր, Գանձակը կրկին հանձնում է ղաջարական զինադուլու ցեղին⁹⁷:

⁹³ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620), հ. Ա, էջ 218:

⁹⁴ Առաքել Դավրիժեցի, էջ 89:

⁹⁵ Հ. Նաջարյան, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, էջ 63:

⁹⁶ Առաքել Դավրիժեցի, էջ 103:

⁹⁷ Ղաջարների ցեղը ղզլբաշական ազդեցիկ միավորումներից էր: Թահմասպ 1-ի (1524–1576) օրոք նրանց մի ճյուղը հաստատվեց Գանձակում և շրջակայքում: Ղա-

Հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ արշավանքի՝ պարսկական զորքերն այս անգամ բնակչության նկատմամբ ավելի մեղմ էին տրամադրված: Անձամբ շահն էր զորքերին կարգադրել հալածանքների չդիմել. «...հրաման արարեալ իւրոց զօրացն մի՛ գոք խուել՝ և մի՛ գոք բռնադատել ի բնակչաց երկրին»⁹⁸: Բացի այդ, ինչպես նշվեց, թուրքական զորքերը մեծ նեղություն էին պատճառել շրջակա բնակավայրերին, բնակչությունը ծանր հարկերի պատճառով անտանելի պայմաններում էր հայտնվել: Ուստի պատահական չէր, որ շատ վայրերում շահ Աբասն օժանդակություն էր ստանում տեղական հայ ավագանուց⁹⁹: Առանձին շրջաններում հայ մելիքներն ունեին որոշակի տիրույթներ և շահ Աբասի արշավանքների ժամանակ, գանազան ծառայություններ մատուցելով վերջինիս, պահպանեցին իրենց իրավունքները: Տեղի բնակչությունը հիմնականում չտեղահանվեց Պարսկաստանի խորքեր: Նպատակ ունենալով հետագայում արշավել Վրաստան ու Շիրվան՝ շահը հավանաբար հակված չէր ամայացնելու իր ապագա զորաշարժի երթուղին: Տիրելով Գանձակին՝ նա անցավ Վրաստան և առանց դիմադրության հանդիպելու՝ մտավ Թիֆլիս. «զի միաբանութիւն էր ի մէջ Պարսից և Վրաց»¹⁰⁰:

շարների գիյադօղլու ցեղի առաջնորդները ժառանգաբար զբաղեցնում էին Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկի պաշտոնը: Օսմանյան զորքերի կողմից երկրամասը գրավելուց հետո, ունենալով բավականին մեծ ուժեր և չհաշտվելով իրենց տիրույթների կորուստյան հետ՝ նրանք քայլեր ձեռնարկեցին Գանձակը հետ վերցնելու ուղղությամբ: Մինչ նոր գահ բարձրացած շահ Աբասը բանակցություններ էր վարում Օսմանյան կայսրության հետ, Մուհամեդ խան գիյադօղլուն պաշարեց Գանձակը: Օսմանյան կողմի բողոքներից հետո շահ Աբասը ստիպված էր Մուհամեդ խանին զգուշացնել, որ վերացնի պաշարումը: Ավելի ամուր արմատներ ձգելով տարածաշրջանում՝ դաշարների այս ճյուղը կարճատև ընդհատումներով մինչև 1804 թ. տիրեց Գանձակին ու շրջակայքին: Տե՛ս М. Альтман, *Исторический очерк города Гандзак, часть 1*, Баку, 1949, էջ 44–46, հմմտ. Н. Петрушевский, *Изл. узл.*, էջ 122–124:

⁹⁸ Առաքել Դավրիժեցի, էջ 112:

⁹⁹ Գեղարքունիքի մելիք Շահնազարն, ով քաջությամբ աչքի էր ընկել թուրքերի դեմ կռիվներում, կարողացել էր իր տարածքի բնակչությանը զերծ պահել թուրքական գերությունից ու կոտորածից: Շահն անձամբ պատվեց մելիքին՝ հյուրընկալվելով նրա տանը և տալով պարգևներ: Առավել մանրամասն տե՛ս Հայերեն ձևագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ, էջ 219:

¹⁰⁰ Առաքել Դավրիժեցի, էջ 114:

Ավարտելով իր արշավանքը՝ շահը Գեղարքունիքով վերադարձավ Թավրիզ: Այսպիսով, 1606 թ. Տավուշը և ամբողջ հյուսիսարևելյան Հայաստանը կրկին անցան Մեֆյաններին: Վերականգնվեց Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկությունը, իսկ վարչամիավորի կենտրոնն Գանձակ քաղաքը վերակառուցվեց ու ամրացվեց:

Մի քանի տարվա ռազմական գործողություններն իրենց բացասական ազդեցությունը թողեցին Տավուշի ու հարակից գավառների վրա: Վրաստանի հարևանությամբ գտնվելու հանգամանքը նույնպես կարևոր ազդեցությունն էր ունենում տարածաշրջանի վրա: Բանն այն է, որ Քարթլիում ու Կախեթեում պարբերաբար բռնկվող հակաիրանական ապստամբությունները հաճախ խաթարում էին երկրամասի բնականոն կյանքը՝ պատճառ դառնալով գերեվարության, ավերածությունների ու ավարառության:

Այդ առումով հատկապես հիշատակության է արժանի Գեորգի Սաակաձեի գլխավորությամբ 1625 թ. Վրաստանում բռնկված հուժկու ապստամբությունը¹⁰¹: Դրա ծավալների ու սկզբնական հաջողության մասին է վկայում այն փաստը¹⁰², որ պարսից նշանավոր զորապետներից առնվազն երեքը սպանվեցին վրացիների ձեռքով¹⁰³:

Ապստամբները սկսեցին պարսկական զորքերին իրենց երկրից վնդդել ու հետապնդել: Այնուհետև ռազմական գործողությունները շարունակվեցին հյուսիսարևելյան Հայաստանում: Գեորգի Սաակաձեն ասպատակեց Գանձակն ու շրջակա գյուղերը, այնուհետև արշավեց դեպի Բարդա¹⁰⁴: Անակնկալի եկած ու ցաքուցրիվ պարսկական

¹⁰¹ Առաքել Դավրիժեցի, էջ 481:

¹⁰² Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հ. Ա, էջ 59: Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ, էջ 186, հմմտ. Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, աշխատախրությամբ Կ. Մաթեոսյանի, Երևան, 2014, էջ 331:

¹⁰³ Երևանի նշանավոր բեկլարբեկ և զորապետ Ամիրզունա խանը, այս ապստամբությունը ճնշելու նպատակով շտապում է օգնության, սակայն շատ չանցած՝ պատերազմում ստացած վերքերից մահանում է:

¹⁰⁴ Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հ. Ա, էջ 91:

գորքերն անկարող եղան լուրջ դիմադրություն ցույց տալ: Վրաց ապստամբ գորքերը, հետապնդելով ու հալածելով Սեֆյանների գորքերին ու նրանց հավատարիմ ցեղերին՝ առանց խտրություն դնելու կոտորում ու գերեվարում էին նաև հայ բնակչությանը և հրի մատնում հայկական բնակավայրերը¹⁰⁵:

Այս ամենի մասին հայերեն մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Նորոգեցո գիրս այն տարին, որ ազգն Վրաց՝ Մովրա¹⁰⁶ ասին անուն նորայ, վասն մեր մեղաց եկեալ բազում հեծելաւք հասսօ ի Գանձակ, որ այժմ] Գանջայ ասի: Եւ ոչ ոք եզ անդ ազգէն ղզըլպաշի, քանզի [յ]որժամ լուան գալն Վրաց՝ փախըստական եղէն ի նմանէ: Եւ յանիրաւ ազգն Վրաց արձակեցօ ի վերա Հայոյց ազգիս՝ Գետաշենու հետ մինչ ի պարսումեցիք Ա [I] ատուր գերացուցին դաշտ ու սար, հայք և թուրք ի միասին. // և զձեռն անկեալն զոմն սպանին, զոմն վիրաւորեցին և բազումս գերի տարան որ անթիւ, շատ աւերս ած ի վերայ աշխարհիս»¹⁰⁷: Քանի որ դեպի Գանձակ ու Բարդա արշավող ապստամբների երթուղին անցել էր նաև Տավուշի և Զակամի ցածրադիր շրջաններով, այս ռազմական գործողությունների հետեւանքներն ու ծանրությունն անկասկած զգացել են նաև այդ տարածքների բնակիչները:

Չնայած ապստամբների նախնական հաջողություններին՝ պարսիկներին ի վերջո հաջողվում է ճնշել ապստամբությունը¹⁰⁸: Տարածաշրջանում վերստին հաստատվում է Սեֆյանների իշխանությունը: Սակայն մի քանի տարի անց՝ 1629 թ. Կախեթի թագավոր Թեյմուրազ I-ը (1605–1648) լայնամասշտաբ կողոպտիչ արշավանք է ձեռնարկում դեպի Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկություն: Վրաց պատմագիր

¹⁰⁵ Տե՛ս *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.*, հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 145, 146:

¹⁰⁶ Գեորգի Մաակաձեն ժամանակի հայկական, վրացական և թուրքական աղբյուրներում հիշատակվում է «Մովրավ», «Մադրավ» ձևերով:

¹⁰⁷ *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.)*, հ. Բ, էջ 206:

¹⁰⁸ *Eskandar Beg Monshi*, vol. II, p. 1250.

Վախուշտին նշում է, որ Թեյմուրազն ավերում ու դատարկում է Արաքսից այն կողմ ընկած տարածքները՝ Բարդան, Ղարաբաղը, Ղազախը և Շամշադինը¹⁰⁹: Գանձակում նրան տեսակցած Գանձասարի կաթողիկոսը հորդորում է դադարեցնել հայերի գերեվարությունն ու կողոպուտը՝ և արշավել դեպի Իրան: Այդ պարագայում կաթողիկոսը նաև խոստանում է Ղարաբաղի հայ մելիքների գորքերից օժանդակ ուժեր տրամադրել: Սակայն այս հորդորները որևէ արդյունք չեն տալիս. փոխարենը Թեյմուրազը գերեվարում է նաև կաթողիկոսին՝ իր բանակի հետ տանելով Գորիի¹¹⁰:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Ամիրգունա խանի հետախուզական արշավանքի հետևանքով հյուսիսարևելյան Հայաստանից գերեվարվել ու գաղթեցվել է Գանձակի շրջակայքի հայ բնակչության մի հատվածը: Թեպետ Տավուշը կրել է ռազմական գործողությունների բեռը, բայց զերծ է մնացել համակարգված բռնագաղթից: Այդուհանդերձ, որոշ ուսումնասիրողներ Տավուշը նույնպես ներառում են շահ Աբասի կողմից բռնագաղթի ենթարկված գավառների շարքում¹¹¹, ինչն աղբյուրագիտական նյութերով չի հաստատվում: Դրանք ավելի ուշ՝ հիմնականում բանավոր կերպով փոխանցված տեղեկություններ են, որոնց համաձայն՝ այս կամ այն բնակա-

¹⁰⁹ Տե՛ս **В. Баграмян**, *Изв. изв.*, էջ 86, հմմտ. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Գ (ԺԸ–ԺԹ դդ.), Երևան, 1955, էջ 68:

¹¹⁰ **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. III, գիրք II, Երևան, 1973, էջ 15, հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Բ, Երևան, 1936, էջ 112: Լեոն և Մելիքսեթ-Բեկը, այս տեղեկությունը քաղելով վրաց XVII դ. հեղինակ Փայրսադան Գորգիջանիձեից, չեն հիշատակում հայրապետի անունը: Հայտնի է սակայն, որ 1606–1634 թթ. Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսական աթոռը զբաղեցնում էր Հովհաննեսը: Տե՛ս *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք, պրակ երկրորդ, (1601–1650)*, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1959, էջ 84, 110: Տե՛ս **Ա. Մաղալյան**, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը*, «ՊԲՀ», 2008, № 3, էջ 270:

¹¹¹ Տե՛ս *Հայաստանի ազգային ատրաս*, հ. Բ, Երևան, 2008, էջ 51, հմմտ. *Հայաստանի պատմության ատրաս (Ա մաս)*, Երևան, 2005, 2006, էջ 89, նաև՝ **Ա. Տեր-Գրիգորյան**, *Տավուշ (Շամշադին)*, Երևան, 2013, էջ 61:

վայրի հայաթափումն ավանդաբար կապվում է շահ Աբասի բռնագաղթի հետ¹¹²:

Տեղահանությունից Տավուշի գերծ մնալու մասին է հուշում նաև այն հանգամանքը, որ շահաբասյան բռնագաղթին հաջորդած տարիներին Տավուշի մի շարք բնակավայրեր քանիցս վկայվում են հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Այսպես, 1608 թ. հիշատակվում է Բերդը, 1619 թ.՝ Չինչինը, հետագա տարիներին՝ Տավուշ գյուղը և այլն: Հիշատակարաններում տեղ գտած գրիչի կամ պատվիրատուի մերձավորների ու ընտանիքի անդամների անունների բավականին երկար ցանկերը գալիս են ևս մեկ անգամ ապացուցելու մեր այն պնդումը, որ հատկապես այդ գյուղերից բռնագաղթ տեղի չի ունեցել¹¹³:

Վրացական թագավորությունների հարևանությամբ գտնվելով՝ Տավուշն ու հարակից շրջանները տուժում էին պարբերաբար լարվող վրաց-իրանական հարաբերություններից: Միմյանց դեմ կռվող վրացական ու ղզլբաշական զորքերի ճանապարհին գտնվելով՝ տեղի բնակավայրերը հավասարապես տուժում էին այդ զորքերի ավերածություններից: Որոշ առումներով վրաց-իրանական հակամարտությամբ էր պայմանավորված նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանում հետզհետե սկսեցին կարևոր գործոն դառնալ դեռևս նախորդ դարում այստեղ հաստատված և շահ Աբասի կողմից հովանավորվող թյուրքական ցեղերը: Շահ Աբասը, զգուշանալով վրացական խռովությունից, հայ-վրացական սահմանին սկսեց ավելի ամրապնդել թյուրքական ցեղերի իշխանությունը¹¹⁴: Այս ամենի հետևանքով Տավուշ, Աղստև, Ջակամ, Վարագաջուր (Հախում) գետերի ստորին հո-

¹¹² Բարխուտարեանց, էջ 329: Տե՛ն Գ. Ղարախանյան, *Չինարին նոր հազարամյակի սկզբին*, Երևան, 2005, էջ 13:

¹¹³ Տե՛ն Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 284, էջ 688–689:

¹¹⁴ Մ. Չուլայան, *Թուրք-պարսկական պատերազմների Հայաստանի տեղիտորրիսյի վրա և նրանց հետևանքները (1555–1595 թթ.)*, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1961, № 3, էջ 47–48:

ասանքներն ընդգրկող շրջաններում XVI–XVIII դդ. աստիճանաբար ստվարացավ մահմեդական թյուրքալեզու բնակչությունը:

զ) *Օտար էթնիկ տարրերի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում*

Սեֆյան պետությունը, լինելով մի շարք խոշոր ու մանր ցեղերից կազմավորված միություն, առանձնանում էր իր պետական կառուցվածքով: Մասնավորապես, արքունի կարևոր պաշտոնները զբաղեցնում էին առավել ազդեցիկ ղզլբաշական ցեղերի առաջնորդները: Նահանգների ու գավառների կառավարումը հանձնվում էր համեմատաբար քիչ ազդեցություն ունեցող ցեղապետերին՝ ըստ նշված տարածքի սահմանների ու եկամտաբերության: Մովորաբար այդ տարածքները նրանք ստանում էին որպես ժառանգական տիրույթ՝ օլքա¹¹⁵:

Այս տրամաբանությամբ, մի շարք ցեղապետեր Սեֆյաններից օլքա ստացան Հայաստանի տարածքում ու իրենց ցեղերով հաստատվեցին այդտեղ¹¹⁶: Այս ամենի հետևանքով նշված տարածքների ժողովրդագրական պատկերը սկսեց փոփոխվել¹¹⁷: Ջբաղեցնելով ավե-

¹¹⁵ Օլքա հին թուրքերենից բառացի թարգմանաբար նշանակում է «երկիր»: Հոդային այնպիսի տիրույթ էր, որը որպես ավատ տրվում էր քոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը: Տե՛ս *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականք, պ. առաջին (ԺԵ–ԺԶ դդ.)*, կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 123: Որպես օրինաչափություն, ղզլբաշական ցեղապետերը մեծամասամբ խուսափում էին արքունիքում ծառայելուց՝ ջանալով ամեն կերպ ստանալ ժառանգական տիրույթ, որտեղ նրանք փաստացի կտնօրինեին ամեն ինչ՝ ստանալով ավելի մեծ եկամուտներ: Տե՛ս Հ. Փափազյան, *Պևտական և արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում XVI–XVII դարերում*, «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, Երևան, 1967, էջ 97:

¹¹⁶ Հ. Փափազյան, *Սոցիալ-տնտեսական հարաբերությունների Արևելյան Հայաստանում XVI–XVIII դարերում*, Հոդվածներ, հ. Ա, էջ 379:

¹¹⁷ Վ. Իվանենկոն նշում է, որ այս ցեղերը, որոնց թիվը հասնում էր 35000-ի, Վրաստանի հետ սահմանագծում բնակեցնելով՝ Սեֆյան տիրակալները կանխում էին ալպազայում Քարթլիում ու Կախեթում հնարավոր հակաիրանական ապստամբությունները, տե՛ս *В.Н. Иваненко, Гражданское управление Закавказьем от присоеди-*

լի նպաստավոր շրջաններ և գտնվելով արտոնյալ պայմաններում՝ այդ ցեղերը հետզհետե ամրապնդվում ու քանակապես աճում էին: Դրանով պայմանավորված՝ տեղաբնիկ հայ բնակչությունը կենտրոնանում էր պաշտպանության տեսանկյունից նպաստավոր, սակայն տնտեսական գործունեության առումով ոչ այնքան հարմար վայրերում:

Չնայած այն հանգամանքին, որ շահ Աբասի օրոք կատարվեցին ցեղապետերի ազդեցությունը թուլացնելուն միտված քայլեր¹¹⁸, այնուամենայնիվ տերության ծայրագավառներում հաստատված ցեղապետերը պահպանում էին իրենց ազդեցիկ դիրքը: Որոշ դեպքերում, նրանց կենտրոնախույս տրամադրությունները հաճախ պատճառ էին դառնում, որ նրանք տիրույթներ ստանան երկրի ծայրամասերում, ինչը Սեֆյան շահերին հնարավորություն էր տալիս նրանց հեռու պահել արքունիքից:

Սեֆյան տերության Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության կառավարումը դեռևս շահ Թահմասպ Ի-ի (1524–1576) կողմից հանձնվել էր ղզլբաշական նշանավոր ղաջարական ցեղի զիյադօղլու ճյուղին¹¹⁹: Բեկլարբեկության տարածքում գտնվող գավառները որպես օլքա հանձնվել էին ավելի մանր ցեղերի առաջնորդներին, որոնք ենթարկվում էին ղաջար բեկլարբեկերին: Մրանք կոչվում էին հաքիմներ և կրում սուլթան տիտղոս: Ավելի փոքր վարչական միավորների՝ գյուղախմբերի կառավարիչները, որոնք ավելի ցածր խավերից էին, կոչվում էին նայիբ կամ միրբուլուք՝ կրելով բեկ տիտղոս¹²⁰:

Սեֆյանների օրոք Աղստևի ստորին հոսանքն ընդգրկող շրջանները որպես օլքա հանձնված էին ղազախլու ցեղին: Ինչպես նշվեց, Օսմանյան տիրապետության շրջանում ղազախլուների առաջնորդ

нения Грузии до наместничества великаго князя Михаила Николаевича. Исторический очерк, Тифлис, 1901, էջ 26:

¹¹⁸ R. Matthee, *Relations between the center and the periphery in Safavid Iran*, *The Historian*, vol. 77, № 3, p. 440.

¹¹⁹ Տևս Ի. Սեֆրաբեկույն, *նշլ. աշխ.*, էջ 122:

¹²⁰ Հ. Փափազյան, *Հողիստներ*, հ. Ա, էջ 382:

Նազար Սուլթան Ղազախլուն ընդունել էր թուրքական գերիշխանություն՝ ստանալով փառայի տիտղոս: Նրա որդիներից Մուհամմեդ Խան Ղազախլուն օսմանցիներից ստացել էր Լոռին և մինչև իրանական գորքերի կողմից Գանձակի գրավումը հավատարիմ էր թուրքերին: Այնուհետև զգալով մոտալուտ վտանգն ու շահ Աբասի դաժան հաշվեհարդարի հեռանկարը նա ներկայացավ շահին և ներում ստացավ: Մրանով հանդերձ՝ Մուհամմեդ Ղազախլուն հետագայում էլ աչքի չէր ընկնում Սեֆյաններին իր հավատարմությամբ: Ի վերջո նա իր վախճանը գտավ վրաց ազնվականների կողմից: Անդրադառնալով նրա սպանության պատճառներին՝ Մունշին ուշագրավ մանրամասներ է հայտնում: Բանն այն է, որ Մուհամմեդ Ղազախլուն, քաջածանոթ լինելով շրջակա տարածքներին, ամեն կերպ օժանդակել էր թուրքերի կողմից Վրաստանի նվաճմանն ու ավերմանը: Բացի դրանից, նա իր ցեղակիցների հետ պարբերաբար ասպատակում էր Վրաստանը՝ գերեվարելով կանանց ու մանուկներին¹²¹:

Մուհամմեդ Խան Ղազախլուի սպանությունից հետո նրա եղբայր Մուստաֆան նույնպես հավատարիմ չէր Սեֆյաններին: Շահ Աբասի հավանությամբ ղազախլուների այս առաջնորդը Շամքորում մահապատժի է ենթարկվում Դելի Մուհամմադ Շամսադդինլուի կողմից¹²²: Նկարագրելով այս ցեղի ու նրանց պարագլուխների դավաճանությունները՝ Մունշին չի թաքցնում իր հակակրանքը՝ անդադար մատնանշելով նրանց ուրացող ու դավաճան լինելը:

Հաշվի առնելով ղազախլուների անհավատարմությունն ու նրանց զբաղեցրած ռազմավարական նշանակություն ունեցող շրջանները՝ շահ Աբասն այս ցեղի նոր առաջնորդ նշանակեց իրեն հավատարիմ մնացած Շամսի Խան Ղազախլուին¹²³: Այնուհետև շահը կար-

¹²¹ *Eskandar beg Monshi*, vol II, p. 1066.

¹²² Նույն տեղում, էջ 1097:

¹²³ Վերջինս նույնպես համագործակցել էր թուրքերի հետ, բայց շահ Աբասի երևանյան արշավանքի ժամանակ ներկայացավ նրան և ներում ստանալուց զատ պարզևատրվեց խանի տիտղոսով: Ի տարբերություն իր ցեղակից այլ առաջնորդնե-

գաղբեց նրան իր ցեղով տեղափոխվել Իրանի Ֆարս նահանգ: Մուն-
շիի հետագա շարադրանքից սակայն պարզ է դառնում, որ այս որո-
շումը վերանայվել է: Ավելին՝ Շամսի Խան Ղազախուն շատ չանցած
ստանում է նաև ստրատեգիական կարևորագույն նշանակություն
ունեցող Ախալցխա ամրոցը¹²⁴:

Այսպիսով, չնայած ղազախուների կրկնվող դավաճանություն-
ներին, նրանք շարունակեցին տիրել Աղստևի ստորին հովտին՝ հետզ-
հետե ավելի ընդլայնելով իրենց տիրույթները: Տավուշի հարևանությ-
յամբ հաստատված այդ ցեղը, որն ասպատակում էր Վրաստանը՝ գե-
րեվարելով նրա բնակիչներին, դժվար թե շրջանցեր ավելի անպաշտ-
պան հայկական գավառները: Հետագա տարիներին Աղստևի ստո-
րին հովիտն այդ ցեղի անունով սկսեց կոչվել Ղազախ¹²⁵:

Ղզլբաշական զուլբադար¹²⁶ ցեղախումբը և նրա կազմում
գտնվող շամսադդիևլու ենթանյուրը, դեռևս Իսմայիլ I (1502–1524) շա-
հի օրոք հաստատվել էր Ջակամ գետի ավազանում¹²⁷՝ սկզբնապես
զբաղեցնելով ստորին շրջանները: Զուլբադարները Սեֆյան Իրանի
ամենահայտնի ու խոշոր ցեղերից էին, որի մեջ բացի շամսադդիևլու-
ներից կային նաև բազմաթիվ մանր ենթախմբեր: Այս ցեղը տեղա-
փոխվել էր Փոքր Ասիայից¹²⁸ և Սեֆյանների օրոք հաստատվեց հյու-
սիսարևելյան Հայաստանում¹²⁹: Ղազախուների օրինակով շամսադ-

րի՝ Շամսի Խան Ղազախուն հավատարիմ էր Սեֆյաններին և մասնակցեց նաև
Շիրվանի գրավմանը, տե՛ս Eskandar beg Monshi, vol. II, էջ 862, 839:

¹²⁴ Նույն տեղում, էջ 1284:

¹²⁵ Այս մասին հաղորդում է նաև XVII դ. երկրորդ կեսին այդ վայրերով անցած
ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը: Տե՛ս Ж. Шарден, Путешествие Ша-
рдена по Закавказью в 1672–1673 гг., Тифлиси, 1902, էջ 237–238:

¹²⁶ Տե՛ս Մ. Չուլպյան, Թուրք-պարսկական պատերազմների Հայաստանի տերի-
տորիայի վրա և նրանց հետևանքները (1555–1595 թթ.), «Տեղեկագիր հասարակական
գիտությունների», 1961, հ. 3, էջ 47:

¹²⁷ Տե՛ս Н. Петрушевский, *Ազլ. աշխ.*, էջ 135:

¹²⁸ Դարեր անց, այս ցեղի ներկայացուցիչներից Չուլբադարով Բեկը Մակար
Բարխուդարյանցին բավականին հանգամանալից ներկայացնում է նախնիների տե-
ղափոխության երթուղին: Տե՛ս Բարխուտարեանց, էջ 189:

¹²⁹ А. Бакиханов, *Гюлистан-и Ирам*, Баку, 1991, с. 48–49.

դիկունների առաջնորդները ևս 1590 թ. թուրքական արշավանքի ընթացքում հպատակություն հայտնեցին վերջիններին՝ մնալով իրենց տիրությունում¹³⁰: Նրանց դավաճանությունը նույնպես անհետևանք մնաց, և շահ Աբասը չպատժեց նրանց¹³¹: Ավելին՝ շամսադդիկու ցեղապետերից Ալիխան Սուլթանը հետագայում Տավուշ և Զակամ գավառներում ունեցած տիրություններից գատ շահ Աբասից օլքա ստացավ նաև Շիրվանում¹³²: Ռազմական հաջողություններից հետո, երբ Մեֆյան զորքերը օսմանցիներից գրավեցին Ախալցխա ամրոցը, Ալիխան Սուլթանի հաջորդ Սելիմ Խան Շամսադդիկուն տեր է դարձավ նաև այդ ամրոցին¹³³:

Շամսադդիկունների զբաղեցրած տարածքը սկզբնապես համապատասխանում էր Գանձակից արևմուտք գտնվող տարածքներին՝ հիմնականում Տավուշից դեպի Շամքոր ընկած շրջաններին¹³⁴, այնուհետև նրանք հայտնվում են Ադստև ու Վարազաշուր գետերի ստորին հոսանքների շրջանում:

Ալիխան Սուլթանի անունը պահպանվել է Զակամ գավառի Մեծ Ղարամուրատ բնակավայրում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում. «Գրեցաւ ձեռեամբ մեղաւոր և խմար գրչի Դաւիթ սուտանուն եպիսկոպոսի և անարժան Յովասափ երիցոյ, ի թուականիս Հայոց ՌԾ և Թ (1610), ի երկիրն Զակամայ, ի գեղն Ղարամուրատոյ, ի կաթողիկոս տէր Յոհաննիսին, և [Ի?] եպիսկոպոսութեան երկրիս տէր Մելքիսեթին, որ էր իշխան երկրիս՝ հոգևոր և մարմնաւոր, և

¹³⁰ *Eskandar beg Monshi*, vol II, p. 593.

¹³¹ Նույն տեղում, էջ 839:

¹³² Տե՛ս **II. Петрушевский**, *Изв. узл.*, էջ 135: Հյուսիսարևելյան Հայաստան տեղափոխված ցեղերին անդրադարձել է Արշալույս Գյուրջինյանը: Հեղինակը սակայն տարանջատել է զուլքադար և շամսադդիկու ցեղերը (տե՛ս **Ա. Գյուրջինյան**, *Շամշադին (Տավուշ) պատմաշխարհագրական և կրթաբուսափոխական ակնարկներ*, Երևան, 1989, էջ 11), այնինչ վերջինս զուլքադար ցեղի մի ճյուղն է: Այս ցեղերի թվաքանակին անդրադառնալով՝ Իսրայել Չանգյանն առանց աղբյուրը նշելու գրել է, որ նրանց թիվը հասնում էր 350 հազարի (տե՛ս **Ի. Չանգյան**, *Շամշադին*, Երևան, 2011, էջ 64), որն անկասկած խիստ չափազանցված է:

¹³³ Տե՛ս **II. Петрушевский**, *Изв. узл.*, էջ 135:

¹³⁴ Տե՛ս *Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri*, էջ 10:

տէր Գրիգորին, ի թագաւորութեանն շահ Ապասին, և ի դանութեան երկրիս Ալիխան սու[?]թանին ի դառն և վշտաշատ ժամանակիս, որ գրով ոչ կարենք արկանել...»¹³⁵: Մեջբերվածից պարզ է դառնում, որ Զակամը գտնվում էր Ալիխան Սուլթանի իշխանության ներքո: Քանի որ Տավուշն այդ շրջանում հաճախ հիշատակվում է Զակամի կազմում, ենթադրելի է, որ Տավուշը նույնպես մտնում էր նրա տիրույթների մեջ:

Զբաղեցնելով Սեֆյանների համար ստրատեգիական նշանակություն ունեցող հյուսիսարևելյան Հայաստանի գավառները՝ դազախլուններն ու շամսադդիլունները որոշ առումով նաև մրցակցում էին: Ուստի բնավ պատահական չէր, որ Մուստաֆա Ղազախլուն սպանվեց հենց շամսադդիլու ցեղապետ Դելի Մուհամմադ Շամսադդիլուի ձեռքով¹³⁶: Այդ ընթացքում շամսադդիլունները կարողացան ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել: Նրանց ցեղապետերից Սալիմ Խան Շամսադդիլուն տիրում էր Լոռու ու Ախալցխայի բերդերին¹³⁷: Հետագայում սակայն այս ցեղապետն իրեն չարդարացրեց և Ախալցխան վերստին անցավ դազախլունների ներկայացուցչին¹³⁸:

Նպատակ ունենալով հպատակեցնել Վրաստանը՝ շահ Աբասն այս ցեղապետերին ոչ միայն չպատժեց նախկինում օսմանցիների հետ համագործակցության համար, այլև ավելի ընդարձակ տարածքներ հատկացրեց: Նրանք թեպետ ենթարկվում էին Գանձակի բեկլարբեկին, սակայն նրանց տիրույթներն ու իշխանությունը ժառանգական էին¹³⁹: Քոչվոր այս ցեղերի համար ստեղծված նման բարենրպաստ պայմանները հանգեցրին այն բանին, որ տարածաշրջանի հիմնականում հարթավայրային շրջանները բնակեցվեցին մահմեդական բնակչությամբ: Զբաղեցնելով դեպի Կուր գետ ընկած ցածրադիր

¹³⁵ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի իշխանախարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 363:

¹³⁶ Այս ցեղապետը որոշ ժամանակ կառավարիչ է եղել նաև. Թիֆլիսում, տե՛ս Eskandar beg Monshi, vol II, էջ 910:

¹³⁷ Նույն տեղում, էջ 1229:

¹³⁸ Նույն տեղում, էջ 1284

¹³⁹ Sk' n II. Петрушевский, *իշվ. աշխ.*, էջ 101:

վայրերը՝ ամռան ամիսներին նրանք բարձրանում էին Միափորի լեռներ՝ օգտվելու տեղի արոտավայրերից: Այս ցեղերի՝ դեպի Միափոր բարձրանալու երթուղին անցնում էր հայաբնակ շրջաններով: Քոչվորների հոտերի ու նախիրների և նրանց տերերի երթուղում գտնվող հայկական բնակավայրերը մեծ վնասներ էին կրում: Նկատենք, որ ընդհուպ մինչ խորհրդային շրջանի սկզբնական տարիներ, քոչը բավական մեծ խնդիր էր: Մահմեդականների քոչի հետևանքով նստակյաց բնակչության հողատարածքներն ու բերքը մշտապես մեծ վնաս էին կրում՝ երկրագործների ու քոչվորների միջև բախումների ու ընդհարումների պատճառ դառնալով:

Հյուսիսարևելյան Հայաստանում հաստատված ցեղերի պարագրւովաներն ի պաշտոնէ ենթարկվում էին Գանձակում նստող բեկլարբեկին, սակայն լինելով տերության ծայրագավառների կառավարիչներ՝ տեղում անսահմանափակ լիազորություններով էին օժտված: Սովոր լինելով քոչվորական կենսակերպին, ինչպես նաև տիրույթներ ունենալով այլ շրջաններում՝ վերոնշյալ ցեղերը ռազմական գործողությունների միջոցին լքում էին վտանգավոր վայրերը՝ սպասելով իրավիճակի կայունացմանը: Հետևաբար, տեղական հայ բնակչությունը, կրելով հարկերի ու պատերազմների բեռի հիմնական ծանրությունը, հայտնվել էր ծանր կացության մեջ: Քոչվոր կյանք վարող ու սեզոնային անասնապահությամբ զբաղվող այս ցեղերը, տարիների ընթացքում յուրացնելով ավելի բարեբեր հողեր, նստակեցության անցնելու միտումներ էին ցուցաբերում:

Նշված ցեղերի տարածաշրջան գալով աստիճանաբար սկսեցին փոփոխվել նաև երկրամասի հայկական տեղանունները: Վաղեմի հայկական անվանումները կա՛մ դարձան թյուրքահնչյուն՝ կրելով դրսեկ թյուրքական ցեղերի արտասանության ազդեցությունը, կա՛մ բառացի թարգմանվեցին, կա՛մ սկսեցին իրենց տեղը զիջել նորահընար թյուրքականներին, որոնցից շատերը հետագայում ավելի ար-

մատացան¹⁴⁰: Այս տրամաբանությամբ Աղստևի ավազանի մեծ մասը սկսեց կոչվել Ղազախ, Տավուշ ու Զակամ գետերի ավազանները՝ Շամշադին:

դ) Տավուշ-Շամշադին տեղանունների նույնացումը

Ինչպես նշեցինք, Տավուշը և հարակից շրջանները, որպես ժառանգական տիրույթ, անցել էին զուլքադար ցեղի շամսադդինլու ենթաճյուղի ցեղապետին: Այդուհանդերձ, այս ցեղի ներկայացուցիչները քոչվոր կենսակերպի բերումով մշտապես փոխում էին բնակության շրջանները: Շամսադդինլուների զբաղեցրած տարածքը սկզբնապես համապատասխանում էր Գանձակից հյուսիս-արևմուտք ընկած շրջաններին¹⁴¹, այնուհետև նրանք հայտնվում են Աղստև ու Վարազաջուր գետերի ստորին հոսանքների շրջանում¹⁴²:

Տավուշ-Շամշադին նույնացման հարցում հետազոտողների համար առանցքային է եղել Եսայի կաթողիկոսի հետևյալ վկայությունը. «Եւ այսպէս գրգռեալ ամ յամէ ասպատակ սփռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Ղապալու և Գասանու նահանգին մինչեւ մերձ ի Շամախի քաղաք: Իսկ յայսմ կողմանէ յոլովք ի նահանգէն Ղազախու, որ է Ախստեու՝ և ի յերկրէն Ամիրշամ Շատինլուէն որ են Զակամներն (ընդգծումը՝ Ա. Ե.)»¹⁴³:

¹⁴⁰ Ասվածի վառ օրինակ է «Տավուշ»-ի թյուրքականացված՝ «Թայուզ», «Թավուզ», «Թովուզ» ձևերը:

¹⁴¹ Տե՛ս *Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri*, էջ 10:

¹⁴² XIX դ. սկզբին վերաբերող մի վավերագրի քննության համատեքստում Ջորջ Բուռնուրյանը նշում է, որ Շամշադինի տարածքը բնակեցված է հայերով ու շամսադդինլուներով, տե՛ս *Russia and the Armenians of Transcaucasia, 1797–1889: A documentary record, annotated translation and commentary by George Bournoutian*, Costa Mesa, California, Mazda Publishers, 1997, էջ 65:

¹⁴³ Եսայի պատմիչ, էջ 51:

Ալիշանը «Ամիրշամ Շատինլու»-ն նույնացրել է Շամշադինի հետ¹⁴⁴: Հիմք ընդունելով Եսայի կաթողիկոսի վերոնշյալ վկայությունը՝ Պետրուռուսկին եկել է այն եզրակացության, որ խոսքը շամսադինլու ցեղի պարագլխի՝ ինչ-որ ամիրի մասին է¹⁴⁵:

Կարելի է կարծել, որ գործ ունենք գրչագրային վրիպակի հետ և գուցե ճիշտ կլինի խմբագրել «Ամիր շամշատինլու» ձևով: Դրանով Եսայի կաթողիկոսն ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել շամսադինլուների ցեղապետի՝ ամիրի տիրույթները՝ օլքան: Թեև պատմիչը հիշատակել է միայն Վերին և Ներքին Ջակամները, սակայն հակված ենք կարծելու, որ Ջակամներից գատ այն ընդգրկել է նաև Տավուշ և Միափոր գավառները: Դրանով հանդերձ դեռ վաղ է Տավուշն ու Շամշադինն ամբողջովին նույացնել, քանի որ Շամշադինը որպես տեղանուն սկսում է հիշատակվել ավելի ուշ ժամանակներում՝ XVIII դ. երկրորդ կեսից:

Այս հարցի քննության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն XVIII դ. վրացական սկզբնաղբյուրները, որոնցում շրջանավում է Շամշադին (Շամշադիլ) տեղանունը: Սակայն վրացական սկզբնաղբյուրներում հիշատակվող Շամշադինի տեղորոշումը հստակորեն ցույց է տալիս, որ գործ ունենք Տավուշից բավական հեռու ընկած շրջանների հետ¹⁴⁶:

Մեր այս ենթադրությունը հաստատվում է 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ում առկա տվյալներով: Այդ վավերագրի կազմողների հաղորդմամբ՝ Շամշադինն ընկած էր Բասամալ գետակի շրջակայքում՝ Ղազախի սանջակի հյուսիս

¹⁴⁴ Տե՛ս Ղևոնդ Ալիշան, *Տեղագրությունը Հայաստանի, Ոստի, Բագմավեյ*, 1990, 3-4, Վենետիկ-Ս. Ղազար, էջ 353:

¹⁴⁵ Տե՛ս Н. Петрушевский, *Աշխ.*, էջ 135, ծնթ. 2:

¹⁴⁶ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ, էջ 136, հ. Գ, էջ 17, 20, 25-26, տե՛ս Вахушти Багратioni, *История царства грузинского*, Тбилиси, 1976, էջ 96-97: Մինևույն ժամանակ, վրաց հեղինակները, հաճախ օրինակ XVII դարի իրադարձությունները նկարագրելիս Չակամի և Տավուշի փոխարեն հետին թվով գործածում են Շամշադին տեղանունը, որն արդեն գործածական էր XVIII դ.:

արևելյան հատվածում¹⁴⁷: Դրանում Շամշադին տեղական հիշատակությունը և Ադստև ու Վարագաջուր գետերի ստորին հոսանքների միջակայքում դրա տեղորոշումը ակնհայտ է դարձնում, որ առնվազն մինչև 1727 թ. այն դեռ չէր փոխանցվել Տավուշին: Այսպիսով վստահորեն կարող ենք պնդել, որ 1727 թ. հարկամատյանում Շամշադին տեղանունը գործածված չէ Տավուշի վերաբերմամբ: Ավելին օսմանյան պաշտոնական փաստաթուղթը պահպանել է գավառի հնամենի անվանումը՝ Տավուշ-Թավուր: Վերջինս որպես առանձին գյուղախումբ տեղ է գտել հարկամատյանում և համապատասխանում է Տավուշ գետի ողջ ավազանին, այսինքն՝ աշխարհացույցյան Տավուշ գավառի մի զգալի մասին:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Շամշադին տեղանունն առաջացել է շամսադդիկու ցեղի անունից: Տավուշ հայկական տեղանունը մինչև XVIII դ. առաջին քառորդի վերջ դեռևս գործածվում էր ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում, իսկ Շամշադինը նշված ժամանակաշրջանում գտնվում էր Տավուշից բավական հեռու: Արդ, հարց է առաջանում, թե ե՞րբվանից է Տավուշ գավառը սկսել Շամշադին կոչվել:

1735 թ. վերջերին Մուղանի դաշտում հրավիրված դուռույթային (ավագանու ժողով) Գանձակի բեկլարբեկը¹⁴⁸ դեմ է հանդես գալիս Նադիր շահի (1736–1747) թագադրվելուն: Ղաջար ցեղապետի այս դիրքորոշումն առիթ դարձավ, որ նորընծա շահը նրան զրկի ընդարձակ տիրույթներից: Նադիրը կատարում է վարչական նոր բաժանում, որով Գանձակի ղաջարների տիրապետությունից հանվում են հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք գավառներ և դրվում Վրաս-

¹⁴⁷ Տե՛ս T.C. *Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivleri*, TT_d, sıra nu: 903, Tapu Tahrir Defteri, էջ 237:

¹⁴⁸ Ղուռույթայում Գանձակի ներկայացուցիչը Ուլուրյու խանն էր, տե՛ս Աբրահամ Կրետացի, *Պատմություն, Քննական քննազիյր*, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 48:

տանի ենթակայության ներքո¹⁴⁹: Այսպիսով, Գանձակի ղաջարական զիյադօղլու ցեղին մնում է միայն Գանձակ քաղաքն իր շրջակայքով¹⁵⁰, իսկ Տավուշ և Զակամ գավառներն անցնում են Քարթլիի արքանների ենթակայության տակ:

Նադիր շահի սպանությանը հաջորդած գահակալական կռիվների ու անիշխանության տարիներին Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության տարածքում առաջացան մի շարք խանություններ ու ավելի մանր կազմավորումներ, որոնք կիսանկախ կարգավիճակ ունեին: Սրանց թվում էր նաև «Շամշադինի սուլթանություն» հորջորջվող միավորը, որի կազմում էին գտնվում Տավուշը, Միափորը և Վերին ու Ներքին Զակամ գավառների մեծագույն մասը¹⁵¹: XVIII դ. երկրորդ կեսից աղբյուրներում հիմնականում հանդիպում է Շամշադին տեղանունը, սակայն Տավուշ գավառանունը մոռացության չէր մատնվել և գործածական էր նույնիսկ XIX դ.. «Բազում հայք ի տաուշայ (չեմշետին) և ի ղազախայ ամենայն գերդաստանեօք անցեալ ընտ Կուր գետ ամրացան ի Վրաստան...»¹⁵²:

1801 թ. սեպտեմբերի 12-ին Վրաստանի հետ միասին հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք շրջաններ անցան Ռուսաստանին¹⁵³: Ռուսական իշխանությունները, վերացնելով այդ սուլթանությունը, ստեղծեցին նոր վարչամիավոր՝ Շամշադինի գավառակը: Ավելի ուշ

¹⁴⁹ Տե՛ս Միրզա Ադիգեռազալ-Բեկ, *Ղարաբաղնամե*, աշխատասիրությամբ Ա. Մադալյանի, Երևան, 2016, էջ 36–37:

¹⁵⁰ Ա. Հովհաննիսյան, *Դովագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք II, էջ 335:

¹⁵¹ Տե՛ս *Карта Кавказа с показанием политического его состояния до 1801 года*, Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 1, Тифлис, 1866, ներդիր քարտեզ էջ 818:

¹⁵² Տե՛ս Վարդան Օձնեցի, *Նոր քարտրական և եկեղեցական պատմություն Հայաստան աշխարհի. Մեծի և Փոքու*, ՄՄ, № 4331, տող 86 ա: Մեջբերված հատվածում հեղինակը նկարագրում է XVIII դ. վերջին պարսից Աղա Մահմուդ շահի արշավանքի հետևանքով մի շարք գավառներից հայ բնակչության փախուստը:

¹⁵³ Վ. Դիրոյան, Ն. Սարուխանյան, *Հրախարակեղյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացի սկիզբը*, Հայոց պատմություն, հ. III, գիրք I, Երևան, 2010, էջ 188:

կազմավորվեց Ելիզավետպոլի նահանգը¹⁵⁴, որի մեջ մտնող Ղազախի գավառի մի մասն էր կազմում Շամշադինի գավառակը: Այն ներառում էր Տավուշը, Միափորը, Վերին և Ներքին Զակամներն ու հարակից որոշ շրջաններ¹⁵⁵: Այսպիսով Շամշադին տեղանունը պաշտոնական կարգավիճակ ձեռք բերեց ռուսական տիրապետության շրջանում: Ավելին, խորհրդային շրջանում տեղանունն անցավ ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքին՝ գոյատևելով մինչև 1990 թ. նոյեմբեր:

¹⁵⁴ Полное собрание законов Российской империи, т. XLII, ч. 2, с. 383, (45259) <https://runivers.ru/bookreader/book9950/#page/384/mode/lup>, դիտված 10/09/2023:

¹⁵⁵ 1837–1844 թթ. գրված մի ձեռագրում կարդում ենք. «Բաժանումն գաւառին Շամշադինու: 1. Ղարադայեայ, որ է Ղրղի, 2. Թուրգեանլար, 3. Ներքին Չեագամ, 4. Եայ մահայ, 5. Կոզեն, 6. Ախնչի, 7. Թաւուզ, 8. Հասանու»: Այսինքն ստացվում է՝ ռուսական իշխանությունները հյուսիսարևելյան Հայաստանի գավառները ընդգրկել են մեկ միավորի մեջ՝ անվանելով այն Շամշադին, տե՛ս ՄՄ, № 7501, էջ 230:

ԳԼՈՒԽ II

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌԸ ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ (1606-1725)

ա) Ռազմական գործողությունների ավարտն ու երկարամյա հաշտության հաստատումը

Չնայած XVII դ. սկզբից շարունակվող պարսկա-թուրքական պատերազմներին՝ հյուսիսարևելյան Հայաստանի գավառներն առժամանակ գերծ մնացին ախոյան բանակների ավերածություններից, քանի որ ռազմական գործողությունների հիմնական օջախը դարձավ Միջագետքը¹⁵⁶: Սակայն Արարատյան դաշտն ու հարակից գավառները մեծ վնասներ կրեցին, երբ 1635 թ. թուրքական զորքերը գրավեցին Երևանը¹⁵⁷:

Նույն ժամանակահատվածում Հայաստանի կենտրոնական շրջանները տուժում էին Օսմանյան կայսրությունում բռնկված ջալալիների շարժման հետևանքով: Այդ ամենից դրդված՝ տեղի բնակչության մի հատված նախընտրեց տեղափոխվել ավելի անվտանգ վայրեր: Այսպես, համաձայն Զաքարիա Քանաքեռցու, դեպի հյուսիսարևելյան Հայաստան տեղի է ունեցել բնակչության որոշակի միգրացիա. «Եւ ելին ի բնակութենէ իւրեանց և ցրուեցան՝ ոմանք՝ յաշխարհն Վրաց, ոմանք՝ յԱղուանս, ի Զակամ, ի Գեանճայ, ի Խաչէն, ի Վա-

¹⁵⁶ A. Newman, *Safavid Iran, rebirth of a Persian Empire*, New York, 2009, pp. 73–75.

¹⁵⁷ Առաքել Դավրիժեցի, էջ 260:

րանդ և այլ ուր և կարացին»¹⁵⁸: Այս վկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ Տավուշի բնակավայրերից որոշները նույնպես համալրվել են վերաբնակներով: Ինչպես նշել ենք, գավառը հայկական աղբյուրներում, հաճախ ընդհանրացված, վկայվում էր Գանձակի գավառի կազմում: Տավուշի մի շարք բնակավայրեր քննվող ժամանակաշրջանում հաճախ հիշատակվում են Ջակամի կազմում:

Շուտով Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև սկսվում են բանակցություններ, որի արդյունքում Կասրե Շիրինում 1639 թ. հաստատվում է հաշտություն, որով Արևելյան Հայաստանն անցնում է Իրանին: Այն, ի տարբերություն նախորդների, նշանավորվեց իր երկարատևությամբ:

Տևական խաղաղության այս շրջանը մեծապես նպաստեց Հայաստանի վերականգնմանն ու ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Շարունակական պատերազմներից քայքայված երկիրը կազդուրվելու հնարավորություն ստացավ: Ժամանակի պատմիչը, անդրադառնալով զինադադարին հաջորդած խաղաղությանը, մասնավորապես նշում է. «Զի ի Ռ և ՁԸ թուէն մինչ ի ՌՃԽԷ թիւս, (1639–1698 – Ա.Ե.) յորում եմք այժմ, է հնշտութին և խաղաղութին: Զի ի Կոստանդնուպօլսէ մինչ ի Ասպահան երթնեկութին է առանց երկիւղի և ահու»¹⁵⁹: Սկսեց աշխուժանալ ու վերականգնվել նաև խաթարված տնտեսական կյանքը¹⁶⁰:

բ) Տավուշի հայկական մելիքությունը

Տավուշի բարձրադիր շրջաններում տեղակայված հայկական բնակավայրերը, որոնք գերծ էին մնացել շահաբասյան բռնազաղթից, XVII դ. կազմում էին առանձին մի մելիքություն:

¹⁵⁸ Չաքարիա Քանաքեռցի, էջ 95:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 104:

¹⁶⁰ Հ. Թորոսյան, *Արևելյան Հայաստանի երկրագործության պատմությունից (XVII–XVIIIդդ.)*, «ԼՀԳ», 1991, № 1, էջ 112:

Նախ հարկ է նկատել, որ քննվող ժամանակաշրջանում մելիք էին կոչվում ինչպես գյուղի, քաղաքի ու ավանի կառավարիչները, որոնց հիմնական գործառույթը հարկահավաքությունն էր¹⁶¹, այնպես էլ՝ Հայաստանի լեռնային շրջաններում տիրույթներ ունեցող ավատատերերը¹⁶²: Օրինակ, Ջաքարիա Քանաքեռցու ընկալմամբ, մելիքը նույն գավառապետն էր. «Եւ կարգեաց գաւառապետս՝ որ է մելիք»¹⁶³: Մելիքները ենթակա էին արքունիքին կամ տվյալ նահանգի բեկլարբեկին, կատարում էին տարբեր ծառայություններ, բայց ներքին հարցերում՝ հարկահավաքություն, դատավարություն և այլն, ունեին լիակատար ինքնուրույնություն¹⁶⁴: Մելիքական իրավունքը ժառանգական էր, թեև հաստատվում էր շահական հրովարտակներով՝ ֆերմաններով¹⁶⁵:

Շահ Աբաս I-ի 1606 և 1614 թթ. վրացական արշավանքների ժամանակ Արցախի ու Գանձակի շրջակա տարածքների մելիքներն օժանդակում էին նրան¹⁶⁶: Արշավանքներից հետո շահն իր երախտագիտությունն է հայտնում նրանց՝ առավել աչքի ընկածներին տալով կալվածքներ և մելիքության իրավունք¹⁶⁷: Բացի տոհմիկ ավագանուց, շահ Աբասը Սեֆյան կառավարման համակարգում առաջ էր քաշում նաև հասարակ մարդկանց¹⁶⁸, որոնք չունեին նշանավոր ծագում¹⁶⁹:

/

¹⁶¹ Լեո, հ. III, գիրք I, էջ 81:

¹⁶² R. Hewsens, *The Meliks of Eastern Armenia*, *Revue des Études Arméniennes* IX, Paris, 1972, p. 294.

¹⁶³ Տե՛ս Չաքարիա Քանաքեռցի, էջ 64, տե՛ս նաև էջ 48:

¹⁶⁴ Տե՛ս Ա. Մաղալյան, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ.*, էջ 32, նույնի՝ *Արցախի մելիքությունները և Նարսարաղի խանության ծագումը*, «Հայոց պատմության հարցեր», 2009, № 10, էջ 88:

¹⁶⁵ Լեո, հ. III, գիրք II, էջ 17:

¹⁶⁶ Զ. Կոստիկյան, *Ճագի Բեկ Իսֆահանի տարեգրությունը որպես հայ ժողովրդի ժ2-ժԷ դարերի պատմության աղբյուր*, էջ 38:

¹⁶⁷ Տե՛ս Բաֆֆի, *Խամասյի Մելիքությունները (1600–1827)*, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 162:

¹⁶⁸ *The Cambridge History of Iran*, vol. VI, Cambridge University Press, 1986, p. 364.

¹⁶⁹ Չաքարիա Քանաքեռցի, էջ 51:

Տավուշից բացի, հարակից գավառներում՝ Միափորում, Զակամում, Աղստևի հովտում ու Գանձակի շրջակայքում, որտեղ կար հայկական բնակավայրերի խիտ ցանց, կազմավորվեցին մի քանի մելիքություններ¹⁷⁰: Հյուսիսարևելյան Հայաստանում նշված մելիքությունների գոյության հանգամանքը նախևառաջ պայմանավորված էր այս շրջանների՝ 1604–1606 թթ. շահաբասյան բռնագաղթից հիմնականում զերծ մնալով:

Տավուշ գավառում XVII դ. սկզբում գոյություն ունեցած մելիքության մասին մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «ի թիս (Թ)ՇԷ (1608), ի գուղս որ կոչի Բերդ, երկիր որ կոչի Թայուզ, ես՝ մելիք Ալիխանս, կողակիցն իր՝ Խոստրովն, որ գնեցինք սուրբ Անետարանս հալալ ընչից մերոց և յիշատակ հոգոց մերոց և իմ ծնադաց մերոց...»¹⁷¹: Հատկանշական է, որ այս հիշատակարանը գրվել է շահաբասյան բռնագաղթից շատ չանցած և տարածաշրջանը շահի կողմից նվաճելուց մոտ երկու տարի հետո: Տավուշում մելիքության հիշատակությունը, ինչպես նաև Ալիխան մելիքի բազմանդամ տոհմի հիշատակությունը հաստատում է մեր այն պնդումը, որ Տավուշից լայնամասշտաբ բռնագաղթ չի եղել: Հիշատակարանում վկայված Բերդ բնակավայրը ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքն է:

Տավուշի մելիքության մասին անուղղակի վկայություններ հանդիպում են նաև Բերդի՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնահատակ ավերված եկեղեցու շինարարական արձանագրության մեջ¹⁷²:

¹⁷⁰ Տե՛ս Ա. Եսայան, *Հյուսիսարևելյան Հայաստանի մելիքությունները XVII դարում*, Բանբեր Մատենադարանի 2020, № 29, էջ 388–400:

¹⁷¹ *Մայր ցուցակ հայկրէն ձեռագրաց*, հ. Ա, էջ 1229:

¹⁷² Այս եկեղեցին կրում էր Սուրբ Գրիգոր անունը և խորհրդային շրջանում նախապես ծառայում էր որպես պահեստ, այնուհետև՝ դահլիճ: Դրանից հետո իշխանությունները նախընտրել են այն հիմնահատակ ավերել: Այն գտնվում էր ներկայիս Բերդ քաղաքի ոստիկանության շենքի հարևանությամբ: Եկեղեցու ներսի արձանագրության մասին տեղյակ էր նաև Կարո Ղաֆադարյանը, ով 1935 թ. արշավախմբով այցելել էր Բերդի տարածաշրջան: Սակայն նրան չի հաջողվել ընթերցել արձանագրությունները. «Բերդ գյուղի մեծ եկեղեցին ևս ունի արձանագրություններ, բայց եկեղեցին պահեստի է վերածված և լեցուն է ցորենով, ուստի հնարավոր չէրավ ար-

Արձանագրությունը գրի են առել Մ. Բարխուդարյանը¹⁷³ և «Արձագանք» թերթի թղթակից Քաջիկյանը: Եկեղեցու արձանագրության համեմատաբար հաջող վերծանությունը Քաջիկյանինն է: Այնտեղ կարդում ենք. «Անուն Աստուծոյ, ես Թիֆլիսեցի Չիթախեանց մղտիսի Խոջայ Սորլիս շինեցի եկեղեցիս ձեռամբ Խորանաշատու Յովհաննէս եպիսկոպոսի և Թաուզայ երկրիս մելիք Ղորխմազի կամակցութեամբ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց Թաղին պեկի Սուլթանին և կողակցին իմոյ Դարէշանին, և որդւոց իմոց Ստեփաննոսին և կողակցին Ասլեզատին, Յարութինին և կողակցին Պեկի Խաթունին, Պօղոս սարկաւաքին և դստերցն իմոց ապաշխարող Աննային և Հոհիսիմին, Շահրուպանին և իւր դուստր Քեթևանին, փեսա Մելքոնին և իւր դուստր կողակից Պեկի Սուլթանին»¹⁷⁴: Մելիքի անվան ոչ հայկական լինելը Մակար Բարխուդարյանցին հիմքեր են տվել ենթադրել, որ Ղորխմազը նրա մկրտության անունը չէ, այլ մականունը (նշանակում է անվախ, քաջ): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ XVII դ. Ղորխմազը որպես անձնանուն տարածված է եղել նաև հայերի շրջանում¹⁷⁵, չենք կարող կիսել Բարխուդարյանցի ենթադրությունը:

Անթվակիր արձանագրության ժամանակի քննությանն առայժմ չանդրադառնալով՝ փորձենք ճշտել «Թավուզայ երկրի» մելիքության մոտավոր սահմանները: Վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակված Թավուզայ երկիրը Տավուշ տեղանվան հնչյունափոխված տարբերակն է: Տավուշում այդ ժամանակաշրջանից հայտնի ձեռագրերի հիշատակարաններում վկայված «յերկիրս Թաուուշու» և «յեր-

ձանագրությունները, որոնք ներսում էին, կարդաք»: Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *նշվ. աշխ.*, էջ 304:

¹⁷³ Բարխուտարեանց, էջ 329:

¹⁷⁴ «Արձագանք», 1888, № 7, էջ 88:

¹⁷⁵ Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Գ, ցուցակ 1, Երևան, 1946, էջ 146: Տե՛ս նաև *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ*, (1641–1660 թթ.), հ. Գ, էջ 868: Տե՛ս *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ*, (1621–1640 թթ.), հ. Բ, էջ 221: Տե՛ս «Արարատ» 1910, № 3, էջ 231: Տե՛ս *Յիշատակարան Սանահոյ վանից (Սանահյնի Քեօթուկը)*, աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 136, 151, 144:

կիրս Տայուշ» տեղանունները Տավուշի՝ այդ ժամանակներում տարածված գրության ձևերից էին¹⁷⁶:

Մելիք Ղորխմազը հիշատակվում է նաև Տավուշի Քամալ գյուղում Ավետիս քահանայի գրչագրած Ավետարանի հետագայի՝ XVIII դ. սկզբի հիշատակարանում: Այնտեղ մասնավորապես կարդում ենք. «Ես՝ Աաքս, Յուհանս, Նազլուխախս, Խոստրովս, ես՝ Շիրագս, ես՝ Հուռումս գիր տվինք տէր Սարգսին: Աստուած վկայ, մեք Նաուրի ճամիաթս վկայ, որ տուն եւ ապրանքն, հողն եւ մահլէն եւ գիրանք: Ես՝ Մելիքղորխմազս վկայ, ես՝ Աթէս վկայ, ես՝ Մայիլս վկայ, Արութինս վկայ, Նապին վկայ...»¹⁷⁷:

Քամալ գյուղը տարածքով համապատասխանում է ներկայիս Բերդ խոշորացված համայնքի Նորաշեն գյուղին¹⁷⁸: Հետևաբար հիմքեր կան պնդելու, որ մելիք Ղորխմազի տիրույթները ներառել են Բերդն ու հարակից գյուղերը, որոնց ստույգ թիվն աղբյուրների սակավությամբ պայմանավորված դժվար է նշել:

Ուշագրավ է, որ վերոբերյալ հիշատակարանում առաջին անգամ հանդիպում է նաև Նավուր գյուղը, որը նույնպես մտնում էր մելի-

¹⁷⁶ Ժողովրդական ստուգաբանությանն անդրադառնալով՝ Հ. Աճառյանը նշում է. «Կա մի տեսակ նմանություն, որ առաջանում է բառը զուգորդելով մի ուրիշ նմանաձայն բառի հետ և սխալմամբ կարծելով, թե կազմված է նրանից, տրվում է նրան այդ բառի ձևը», տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. VI, Երևան, 1971, էջ 728: Այդ համատեքստում անդրադառնալով տեղանուններին՝ նա ավելացնում է. «Ժողովրդական ստուգաբանությունների մեջ լայն տեղ են զբաղում տեղանունները: Տաճիկները, զբավելով Հայաստանը և հայերեն տեղանունները հարմարեցնելով իրենց լեզվի բառերին կազմել են՝ ...Տաւուշ=Թօվուս «սիրամարգ», տե՛ս նույն տեղում էջ 732:

¹⁷⁷ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*, հ. Բ, Երևան, 2004, էջ 276: Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ «Մայր ցուցակ»-ում «Նավուրի ճամիաթ»-ը վրիպմամբ գրվել է «Նավուս ճամիաթ» ձևով: Հիշատակարանի բնօրինակում, սակայն, հստակորեն գրված է «Նավուր»: Այս սրբագրումը ավելի հասկանալի է դարձնում նաև նախադասության ընդհանուր միտքը, Նավուրի ճամիաթ, այսինքն՝ Նավուրի հասարակություն: Տե՛ս ՄՄ, № 365, 237ա:

¹⁷⁸ Մեր մի հրապարակման մեջ այս գյուղի տեղորոշումը կատարել ենք փոքրինչ վրիպումով: Նոր աղբյուրների երևան գալը հնարավորություն տվեցին սրբագրելու այն, տե՛ս Ա. Եսայան, *Հրախարակչուհու Հայաստանի միջրբոյժումները XVII դարում*, «Բանբեր Մատենադարանի», 2020, № 29, էջ 392:

քության մեջ: Բնակավայրն անկասկած համապատասխանում է Բերդ խոշորացված համայնքի Նավուր գյուղին:

Մելիք Ղորխմազը բավականին մեծ ազդեցություն է ունեցել, ինչը վկայում է նրա «կամակցութեամբ» եկեղեցի կառուցվելու փաստը: Բացի այդ, դժվար է պատկերացնել, որ լոկ ինչ-որ բնակավայրի տանուտերի գործառույթներ ունեցող մեկը կներկայանար որպես «Թավուզայ երկրի» մելիք: Այս հանգամանքը կարևոր ցուցիչ է, եթե հաշվի առնենք նշված ժամանակաշրջանում տարածաշրջանի այլ վայրերում եկեղեցիների շինարարական արձանագրություններում հաճախակի հանդիպող տեղական մահմեդական իշխողների անվան հիշատակությունները¹⁷⁹: Հետևաբար կարող ենք փաստել, որ Տավուզի մելիքներն օժտված էին տեղական ինքնուրույնության որոշակի դրսևորումներով: Աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս պատասխանել այն հարցին, թե նա ում էր անմիջականորեն ենթարկվում, հավանաբար Գանձակի բեկլարբեկին կամ էլ տեղական ավելի փոքր մահմեդական իշխանավորի: Սկզբնաղբյուրների սակավության պատճառով չենք կարող հստակեցնել, թե արդյո՞ք Տավուզի դեպքում ժառանգական էր մելիքական իրավունքը, թե՛ ոչ:

Այսպիսով, գերծ մասլով բռնազաղթից ու զուտ հայաբնակ գյուղերի մի շղթա կազմելով՝ Տավուզում դեռևս XVII դ. առաջին տասնամյակից կար հայկական մելիքություն: Կարելի է կարծել, որ հյուսիսարևելյան Հայաստանի այլ գավառների օրինակով Տավուզի ավագանին նույնպես օժանդակել է շահ Աբասի գործերին, ինչի շնորհիվ կարողացել են որոշակի արտոնություններ ու մելիքական իրավունք ստանալ: Հետագա տարիների համեմատաբար բարենպաստ ու խաղաղ պայմաններն ավելի կենսունակ են դարձրել այդ մելիքությունը:

¹⁷⁹ Տե՛ս օրինակ *Դիվան հայ վինագրության*, պ. V, Արցախ, կազմեց՝ Ս. Քարխուրայան, Երևան 1982, էջ 269, Քարխուտարեանց, էջ 183:

զ) Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը

Երկարատև պատերազմների ու տարբեր նվաճողների ավերածությունների պատճառով՝ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության ենթակայությամբ գտնվող Տավուշի հոգևոր հաստատությունները խիստ տուժել էին: Դրանց մի մասը դադարել էր գործել, միաբանները ցրվել էին: Դրան գումարվում էր նաև կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալվող մշտական վեճերն ու երկպառակությունները, որի հետևանքով, բնականաբար, տուժում էին ենթակա թեմերը¹⁸⁰: Դատելով աղբյուրների կցկտուր տեղեկություններից՝ կարող ենք ենթադրել, որ Խորանաչատի թեմը ևս որպես առանձին եպիսկոպոսություն դադարել էր գործել: Հավանաբար այն ներառվել էր հարևան Զական գավառի թեմի կազմում: Այս ենթադրության օգտին է վկայում Սեֆյան շահ Թահմասպ Ի-ի կողմից Հայոց Միքայել Սեբաստացի Կաթողիկոսին տրված (1548 թ. դեկտեմբեր-1549 թ. հունվար) հրովարտական Տավուշի՝ որպես առանձին թեմ չհիշատակվելը¹⁸¹: Դրա համաձայն՝ հյուսիսարևելյան Հայաստանի՝ Տավուշի անմիջական հարևանությամբ գտնվող թեմերը դրվում էին Էջմիածնի ենթակայության ներքո: Հավանաբար XVII դ. առաջին տասնամյակում վերականգնվում է Տավուշի թեմի գործունեությունը, որի կենտրոնը Խորանաչատն էր¹⁸²: Երկար ընդմիջումից հետո այստեղ ակտիվանում է հոգևոր կյանքը, կարգավորվում է միաբանության գործունեությունը:

¹⁸⁰ Մանրամասն տե՛ս Լ. Մկրտումյան, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XVIII դդ.*, Երևան, 2006, էջ 54–78:

¹⁸¹ *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտականը*, պրակ առաջին (ԺԵ–ԺԶ դդ.), կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 59:

¹⁸² Խորանաչատի եպիսկոպոսանիստ լինելու մասին վերջին վկայությունները թվագրվում են 1760-ականներով: Նշված շրջանում Աղվանից կաթողիկոսության ներսում ճգնաժամ էր առաջացել, քանի որ գուգահեռաբար աթոռակալում էին երկու կաթողիկոսներ՝ Իսրայելը Գանձակում, Հովհաննեսը՝ Գանձասարում: Իսրայել կաթողիկոսի կողմնակիցների՝ Սիմեոն Երևանցուն ուղղված մի նամակում (թվագրված է 1765 թ. նոյեմբերի 12-ով) առկա է նաև Խորանաչատի Իսրայել արքեպիսկոպոսի ստորագրությունը: Տե՛ս Գիւտ քահանայ Աղանեսեանց, *Դիսսև հայոց պատմություն*, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ ՃԺԳ, հմմտ., «Ար-

Քննվող ժամանակաշրջանից մեզ են հասել Տավուշում ընդօրինակված մի քանի ձեռագրեր: Գավառի պատմության վերակազմության տեսանկյունից այդ ձեռագրերի հիշատակարանները անգնահատելի արժեք ունեն: Երկարատև դադարից հետո 1620 թ. ընդօրինակված մի ձեռագրում վերստին հիշատակվում է Տավուշ գավառի նշանավոր Խորանաշատի վանքը: Հակոբ անունով քահանան իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրում է. «Արդ՝ գրեցաւ զսբ. աստուածախաւս ւ ւետաբերս, որ կոչի Աւետարան: Գրեցաւ ձեռամբ զանարժան և մեղսասէր փծոն գրչիս անուամբ Յակոբ, որ կոչի սուտ երէց, ի դուռն Ս. Բարձրահամբաւ Ս. Խորանաշատու և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, Ս. Վանական վարդապետիս և Գրիգոր վարդապետիս և Ս. Յովանիսիս, ի ծորս Զակամայ, ի գիւղս որ կոչի Լըղարակ»¹⁸³: Նկատենք, որ գրիչը Խորանաշատը տեղադրում է Զական գավառի կազմում:

Սկսած 1630-ական թթ.. Տավուշ գավառում իր բեղմնավոր գործունեությունն է ծավալում Եսայի գրիչը: Իր հիշատակարաններից իմանում ենք, որ նա Տավուշ գյուղից էր: Հայրը Իսրայել քահանան էր¹⁸⁴, իսկ մոր անունը Խոնդաղ էր: Ունեցել է բազմանդամ ընտանիք՝ 3 որդի, 6 դուստր, 2 թոռ¹⁸⁵: Որդիներից Սենեքարիմը սարկավագ էր¹⁸⁶: Բազմարդյուն գրչից մեզ հայտնի 8 ձեռագրերից 5-ն ընդօրինակվել են Տավուշ գյուղում, մյուս 2-ը՝ հավանաբար Խորանաշա-

ձագանք», 1886, № 15, էջ 227, Տե՛ս Սիմեոն Երևանցի, *Չամբռ*, աշխատասիրությանբ Հ. Օհանյանի, Երևան, 2022, էջ 132 (հետայսու՝ Չամբռ): Տե՛ս Լ. Մկրտումյան, *Լշվ. աշխ.*, էջ 14: Իսրայելի կողմնակիցները մի քանի ամիս անց (1766 թ. հունվարի 9) նամակով դիմում են նաև վրաց Հերակլ II (1762–1798) արքային՝ խնդրելով օժանդակել Իսրայելին՝ զբաղեցնելու Աղվանից աթոռը: Այդ նամակը ստորագրած թեմակալներից է նաև Խորանաշատի Պետրոս արքեպիսկոպոսը: Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վավ. 250:

¹⁸³ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 725: Գյուղը հետագա տասնամյակներում հանդիպում է Բաղա ձևով: Տե՛ս Ս. Կարապետյան, *Լշվ. աշխ.*, էջ 457:

¹⁸⁴ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641–1660 թթ.), հ. Գ, էջ 73:

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 182:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 73:

տում, վերջինը՝ Շամքորի Լեղան անապատում: Ժամանակագրական հաջորդականությամբ նրա ընդօրինակած ու մեզ հայտնի առաջին ձեռագիրը Սաղմոսարան և Ժամագիրք է: Խաչատուր քահանայի պատվերով Եսային այն ընդօրինակել է Տավուշ գյուղում՝ սկսելով 1630 թ.՝ մատյանն ավարտել է հաջորդ տարի: Գրիչը հիշատակում է իր ծննդավայր Տավուշ երկրի Տավուշ գյուղը. «...ի յերկիրս Տայուշ, ի գիւղս որ կոչի Թավուշ»¹⁸⁷, այնուհետև հորդորում է հիշել իր մերձավորներին: Հեղինակի ձեռագրերից երկուսը՝ Մաշտոց և Ժողովածու, ընդօրինակվել են 1637 թ.: Առաջինի հիշատակարանում Եսային նշում է, որ Մաշտոցն ընդօրինակել է Տավուշ գյուղի Ս. Նահատակ եկեղեցում, այնուհետև հականե-հանվանե թվարկում է ընտանիքի անդամներին: Երկրորդ ձեռագրի հիշատակարանը գրեթե չի տարբերվում նախորդից¹⁸⁸: Մեզ հայտնի ձեռագրերից հաջորդը, որն Ավետարան է, թվագրված է 1639-ով: Այս ձեռագրի հիշատակարանը հետաքրքրական է այն առումով, որ հեղինակը, կրկնելով լղարակցի Հակոբ քահանային, Խորանաշատը տեղադրում է Տավուշի հարևան Ջակամ գավառի տարածքում¹⁸⁹:

Եսայի գրիչը 1640 թ. Մաշտոց է ընդօրինակում¹⁹⁰, 1642 թ. Սաղմոսարան¹⁹¹, 1645-ին՝ Ավետարան¹⁹²: Հատկապես հետաքրքրական է

¹⁸⁷ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ա, յօրինեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1914, էջ 287–288, հմմտ. *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1620–1640 թթ.)*, հ. Բ, էջ 466, այստեղ գյուղի անունը նշված է «Թաւուզ» տարբերակով:

¹⁸⁸ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*, հ. Է, Երևան, 2012, էջ 83: Ավերորդ չենք համարում նշել, որ այս ձեռագրի 1637 թվականը հավանաբար վրիպակի արդյունքում Թ. Մինասյանի աշխատության մեջ նշված է 1657-ով: Տե՛ս Թ. Մինասյան *և՛վ. աշխ.*, էջ 104: Այս սխալմունքով էլ առաջնորդվելով՝ հեղինակը Եսայի գրչի գործունեությունը թվագրել 1630–1657 թթ., այնինչ, ինչպես կտեսնենք, նրանից հայտնի վերջին ձեռագիրը թվագրված է 1650-ով, տե՛ս հաջորդ էջում:

¹⁸⁹ Դատելով այս և այլ վկայություններից՝ կարող ենք ենթադրել, որ Ջակամ վարչամիավորը Սեֆյանների օրոք ավելի ընդգրկում տարածք է զբաղեցրել՝ ներառելով նաև Տավուշ, Գետիկ և Վարազաշուր գետերի հովիտները:

¹⁹⁰ *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1620–1640 թթ.)*, հ. Բ, էջ 809:

¹⁹¹ Տե՛ս *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1640–1660 թթ.)*, հ. Գ, էջ 72:

1645 թ. Ավետարանի հիշատակարանը: Ի տարբերություն նախորդների՝ Խորանաշատն այս ձեռագրում չի հիշատակվում: Ձեռագիրն ընդօրինակվել է Թավուզ (Տավուշ) գյուղում՝ «ընդ հովանեա Ս. Նահատակիս»: Եսայի գրիչը ուշագրավ տվյալներ է հաղորդում իրանական պետության կրոնական հալածանքների վերաբերյալ՝ ի մասնավորի նշելով հետևյալը. «ի թուականիս Հայոց ՌԴԴ (1645), ի հայրապետութեան տեսոն Գրիգորի, ընդ հովանեա Ս. Նահատակիս, ի յերկրիս Տայուշ, ի գեաղս, որ կոչի Թաուզ, յորում ամի և ըստ մեղաց մերոց բոնացաւ անարեւութեան չարիք ի վերայ մեր ի հենէ Պարսից, լուծ ծառայութեան նոցա հարկանելով և տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլոր յարէնս իրեանց»¹⁹³: Սեֆյան Իրանում հատկապէս սկսած շահ Աբաս II-ից (1642–1666) կրոնական հալածանքները սկսում են սաստկանալ¹⁹⁴: Եսայի գրչի այս վկայությունը փաստում է, որ Տավուշ գավառն անմասն չի մնացել այդ համատարած կրոնական հալածանքներից:

Եսայի գրչի կողմից Տավուշում ընդօրինակված և մեզ հայտնի ձեռագրերն այսքանն են: Բեղուն գրիչ ունեցող տավուշեցու գործունեությունը միայն հայրենի գավառով չի սահմանափակվել: Շամքոր գետի ավազանում գտնվող Ղեղան (Լեղան)¹⁹⁵ անապատում 1650 թ. Եսային ընդօրինակել է Խրատագիրք և Առակագիրք, որը նրանից մեզ հայտնի վերջին ձեռագիրն է: Այս ձեռագրի հիշատակարանը նախորդներից բոլորովին տարբեր է: Գրչության արվեստի մեջ վարպե-

¹⁹² Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1640–1660 թթ.), հ. Գ, էջ 181–182:

¹⁹³ Նույն տեղում, էջ 182:

¹⁹⁴ Տե՛ս Դավրիժեցի, էջ 97 «...այլ այն միայն էր նոցա փոյթ՝ զինչ և իցէ պատճառեանօք դարձուցանել զՀայս ի կրօն Մահմետի»: Տե՛ս նաև Հ. Փափագյան, *Սեֆյան Իրանի սահմիյատորական հարցի շուրջ*, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 85–99:

¹⁹⁵ Ս. Կարապետյանը կարծում է, որ «Ղեղան»-ը տպագրական վրիպակի արդյունք է՝ տեղանվան ճիշտ ձևը համարելով «Լեղան»-ը, տե՛ս Ս. Կարապետյան, *Էջմ. աշխ.*, էջ 493, ծնթ. 3627:

տացած ու հասակն առած Եսային ի ցույց է դրել իր տաղանդը չափածոյի բնագավառում.

«Սուրբ Գրիգոր Լուսաւորչի,
Որ բարեխօս ես աշխարհի,
Մեզ ողորմեա ամենի,
Որով եղաք լսող բանի,
Ես աւել ինձ Եսայի,
Որ զսուրբ տառս գրեցի,
Եւ ում որ լինի աս երախտի,
Արքայութեան լինի որդի,
Տէրն տացէ նոցա բարի,
Որ անարժան Եսայիս յիշի»¹⁹⁶:

Տավուշ գավառում բացի Եսայի գրչից մատյաններ է ընդօրինակել նաև Ավետիս քահանան: Վերջինս Քամալ գյուղից էր, որտեղ էլ 1668 թ. ընդօրինակել է մի Ավետարան: Այդ մատյանի հիշատակարանից տեղեկանում ենք այնտեղ գործող Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին¹⁹⁷: Գրիչը հիշատակում է նաև Խորանաշատի աթոռակալ Հովհաննես եպիսկոպոսին և իր բազմանդամ ընտանիքի անդամներին: Ավետիս քահանայից հայտնի մյուս ձեռագիր Մաշտոցն ընդօրինակվել է 1674 թ. Խորանաշատում¹⁹⁸:

Նրանից մեզ հասած վերջին ձեռագիրը կազմվել է 1679 թ. Զակամ գավառի Ղարամուրատ գյուղաքաղաքի Հարանց Անապատում. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի դառն ժամանակիս ի լաւ ընտիր օրինակէ ի յերկիր Վերին Զակամ ի Ղարամուրատի Յարանց անապատիս ձեռամբ մեղօք զառածեալ Աւետիս աբեղայի որ եմ ի յերկրէն Տաւուշու ի գեղէն Քամալու...»¹⁹⁹: Հիշատակարանի վերջում, առանց

¹⁹⁶ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641–1660 թթ.), հ. Գ, էջ 409:

¹⁹⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Բ, էջ 275:

¹⁹⁸ Տե՛ս ՄՄ, № 3536, 134ա, 134բ:

¹⁹⁹ ՄՄ, № 6705, 264ա, 264բ:

պատճառները նշելու, քահանան գրում է որդիների անժամանակ մահվան մասին:

Տավուշ գավառի գրչագրերին անդրադառնալով՝ ավելորդ չէր լինի հիշատակել Մաշտոցյան Մատենադարանում պահվող թիվ 6822 ձեռագիր Ավետարանը: Այն ընդօրինակել է Մկրտիչ քահանան՝ 1499 թ. Հաղբատում²⁰⁰: Մաթևոս անունով քահանան 1619 թ. գնել է մատյանը, որի մասին Մարգար անունով մեկ այլ քահանայի գրել է տվել այդ ձեռագրի հիշատակարաններից մեկը²⁰¹: Այնտեղ նա մանրամասն ներկայացրել է իր մեծ գերդաստանին՝ հորդորելով հիշել նաև Չինչինի տանուտերին. «Դարձեալ յիշեցէք տանուտէր Չինչինիս պարոն Գուլամիրն, և իւր կողայկիցն՝ պարոն Խանադին...»²⁰²: Այս հիշատակարանում տեղ գտած անձանց ընդարձակ ցանկում ուշագրավ է հատկապես թվով հինգ քահանաների առկայությունը: Այդ հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ Չինչինում նշված տարիներին եղել է զգալի հայ բնակչություն ու գործող եկեղեցի (գուցե եկեղեցիներ):

Գավառի հոգևոր մշակութային կյանքում տեղի ունեցած զարթոնքն անկասկած կապված էր Խորանաշատի թեմի գործունեության ակտիվացման ու հատկապես աթոռակալների գործադրած ջանքերով: Գրչագրերից ու վիմագրերից ստացվող կցկտուր տեղեկությունները համադրելով՝ փորձենք պարզաբանել, թե ովքեր են եղել քննվող ժամանակաշրջանի Խորանաշատի առաջնորդները:

Եսայի գրչի և Ավետիս Քամալեցու հիշատակարաններում բազմիցս հանդիպում ենք Խորանաշատի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի մասին հպանցիկ տեղեկություններ: Համաձայն Եսայի գրչի 1630 և 1637 թ. գրչագրած ձեռագրերի հիշատակարանների՝ Խորանաշատի առաջնորդ է հիշատակում է Յոհան (Հովհաննես) անունով արքեպիսկոպոսին: Ընդ որում, 1637 թ. որպես աթոռակից

²⁰⁰ ՄՄ, № 6822, 313բ:

²⁰¹ Նույն տեղում, 316ա:

²⁰² Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 689:

հիշատակվում է ոմն Հակոբ քահանա²⁰³: Երկու տարի անց՝ Խորանաշատի աթոռակալներ են վկայված Հովհաննես ու Բարսեղ արքեպիսկոպոսները²⁰⁴: Այսուհետև 1642 թ. Եսայի գրիչը կրկին հիշատակում է Հովհաննես արքեպիսկոպոսին՝ նրան տալով «պանծալի»²⁰⁵ մակդիրը: Ավետիս Քամալեցի գրիչը 1668 թ. նույնպես հիշատակում է Հովհաննես եպիսկոպոսին²⁰⁶:

Թիֆլիսում լույս տեսնող «Նոր դար» օրաթերթում 1888 թ. տպագրվել է Ղուլալի²⁰⁷ գյուղից մի թղթակցություն: Գյուղի մասին որոշ մանրամասնություններ հայտնելուց զատ՝ հեղինակը վերարտադրել է նաև Սուրբ Հովհաննես եկեղեցում պահվող գրչագրերի հիշատակարանները: Դրանցից 1669 թվակիր մի հիշատակարանում որպես Խորանաշատի առաջնորդ հիշատակվում է ոմն Գրիգոր արքեպիսկոպոս²⁰⁸: Քանի որ այդ ձեռագրի գտնվելու վայրը հայտնի չէ, նշված հաղորդումը հերքել կամ հաստատել հնարավոր չէ:

Խորանաշատի Հովհաննես եպիսկոպոսի անվան հիշատակություն այսուհետև հանդիպում է Տավուշի տարբեր բնակավայրերի եկեղեցիների վիմագրերում: Այդ վկայություններից պարզվում է, որ նա աչքի է ընկել իր շինարարական ու վերանորոգչական գործունեությամբ²⁰⁹: «Հ Տավուշի մարզի Չորաթան գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցու արձանագրության մեջ կարդում ենք. «ԹՎ ՌՃԼԱ (1682) յանուն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովանէս եպիսկոպոսի Խորանաշատու»²¹⁰:

²⁰³ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1620–1640 թթ.), հ. Բ, էջ 708:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 786:

²⁰⁵ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641–1660 թթ.), հ. Գ, էջ 73:

²⁰⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Բ, էջ 275:

²⁰⁷ Բերդ խոշորացված համայնքի Այգեձոր գյուղն է:

²⁰⁸ Տե՛ս «Նոր-Դար», 1888, № 95, էջ 3:

²⁰⁹ Տե՛ս Ս. Դարբինյան, Հովհաննես արքեպիսկոպոս Շինարար, «Էջմիածին», 1991, № Ա-Գ, էջ 119–123:

²¹⁰ Տե՛ս «Արձագանք», 1888, № 7, էջ 88, հմմտ. Բարխուտարեանց, էջ 328: Բարխուդարյանը սխալմամբ թվականը նշում է 1683 (ՌՃԼԲ): Կ. Ղաֆադարյանը 1935 թ. այցելել է գյուղ և գրի առել ակումբի վերածված եկեղեցու արձանագրությունները: Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *Էջմ. աշխ.*, էջ 277–278:

Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Վերին Կարմիր-աղբյուր գյուղի եկեղեցու կիսաեղծ շինարարական արձանագրությունը կարդալով՝ Քաջիկյանը նշում է, որ այն նույնպես կառուցվել է Հովհաննես եպիսկոպոսի ջանքերով²¹¹: Սակայն կա տեսակետ, որ այն ավելի վաղ է կառուցված եղել և Հովհաննեսը պարզապես այն վերանորոգել է²¹²: Եկեղեցին 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնովին ավերվել է՝ ավելի մշուշելով վերջինիս հիմնադրման ստույգ թվականը: Մակար Բարխուդարյանը, հիշատակելով այս եկեղեցին, նշում է. «...եկեղեցին՝ Սուրբ Յովհաննես, ծածքն՝ փայտաշէն.

«Ես տէր Վարդանս շինեցի զեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ. ՌՃԾ (1701)»:

«Սուրբ խաչս Խանաղին»:

«Ովանէս եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս ձեռամբ տէր Գրիգորին»²¹³:

Այժմ գյուղի թանգարանում պահվում են այդ եկեղեցու արձանագրության բեկորներից երկուսը (նկ. 1, 2): Դրանցից չափերով համեմատաբար խոշորի վրա կարդում ենք. «Կարմիր Աղբիւր Ղզլբուլաղ, բնակիչքն բնիկ հողն արքունի ես տէր Վարդանս շինեցի եկեղեցիս ձեռամբ Մուրադխանի սբ խաչս բարէխասս է Խանաղին»²¹⁴: Այս արձանագրությունն անկասկած Մակար Բարխուդարյանցի վկայակոչածն է, սակայն այստեղ առկա չէ նրա նշած 1701 թվականը, բացի այդ, Բարխուդարյանցի տարբերակում բացակայում է վերջին տողում առկա «բարէխասս» բառը: Թանգարանի մյուս արձանագիր բեկորն

²¹¹ Տե՛ս «Արձագանք», 1888, № 7, էջ 88: Այս տեսակետը կիսում է նաև Հ. Քարտաշյանը՝ վկայակոչելով Քաջիկյանի հաղորդումը, տե՛ս Հ. Քարտաշյան, *Խորանշատի նարտարապետական համայնքը*, «ԼՀԳ», 1986, № 4, էջ 51, ծնթ. 63:


²¹² Տե՛ս Բ. Մելյան, *Քանապ-Գունաշ-Նորաշեն*, «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, № 3 (105), էջ 203:

²¹³ *Բարխուտարեանց*, էջ 328:

²¹⁴ Այս արձանագրությունը աննշան վրիպակներով հրատարակել է նաև Բալաբեկ Մելյանը, տե՛ս Բ. Մելյան, *Կարմիրաղբյուր*, Երևան, 2001, էջ 27: Հեղինակը սխալմամբ Բարխուդարյանցի վերձանածն ու թանգարանում պահպանվածը չի նույնակա-նացրել՝ համարելով դրանք երկու տարբեր արձանագրություններ:

ավելի համառոտ է, քանի որ մնացած հատվածները ջարդոտված են: Այդ բեկորից կարդում ենք. «...ձեռամբ ...որի թվին ՌԾ (1601)»: Ստացվում է, որ գյուղում դեռևս XVII դ. սկզբից գործող եկեղեցի է եղել: Այն սկզբնապես կառուցողի մասին տեղեկություններ առկա չեն: Ամենայն հավանականությամբ եկեղեցին քանիցս ավերվել և վերանորոգվել է: Վիմագրերի ընթերցանության գործում գովելի բծախնդրություն ցուցաբերող Քաջիկյանի այն դիտարկումը, որ Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով է կառուցվել եկեղեցին, թույլ են տալիս ենթադրել, թե Հովհաննեսը հավանաբար այն հիմնովին վերանորոգել է՝ թողնելով այդ մասին արձանագրություն: Հետևաբար, Բարխուդարյանցի՝ եկեղեցին 1701 թ. կառուցված լինելու մասին վկայությունը մեր ձեռքի տակ եղած աղբյուրների քննությամբ չի հաստատվում:

***Կարմիրաղբյուր գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցու
արձանագրությունները***



Նկ. 1.



Նկ. 2.

Բերդի Սուրբ Գրիգոր եկեղեցու շինարարական արձանագրությունը վկայում է, որ վերջինիս կառուցմանը մեղիք Ղորխմազից բացի, օժանդակել է նաև Հովհաննես արքեպիսկոպոսը. «ձեռամբ Խորանաշատու Հովհաննէս եպիսկոպոսի»²¹⁵: Եկեղեցու կառուցման ծախսերը հոգացած թիֆլիսեցի Չիթաղյան ընտանիքի կատարած այլ շինարարական ձեռնարկումների քննությունը կարող է նպաստել անթվակիր այս արձանագրության գոնե մոտավոր ժամանակի ճշգրտմանը: Թիֆլիսում առևտրով զբաղվող և բավականին հարստություն կուտակած Չիթաղյանները նորոգել են Սևանա կղզու վանքերը, կատարել նվիրատվություն: Դրա մասին վկայող վիմագրերից մեկը թվագրված է 1654-ով, իսկ երկուսը՝ 1664-ով²¹⁶: Հաղարծինի Սուրբ Աստվածածին եկեղեցու արտաքուստ արևմտյան պատի արձանագրությունից պարզվում է, որ այն նույնպես վերանորոգվել է Չիթաղյանների կողմից՝ 1681 թ.²¹⁷: Ստացվում է՝ Չիթաղյանների գործունեության առաջին թվակիր վկայությունները վերաբերում են 1654 թ., իսկ վերջինը՝ 1681 թ:

²¹⁵ «Արձագանք», 1888, № 7, էջ 88:

²¹⁶ **Յովհաննէս եպիսկոպոս Ճախաթունեանց**, *Ստորագրության կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, Ս. Էջմիածին, 2014, էջ 351, հմմտ. «Արարատ» 1871, Ե տարի, էջ 261:

²¹⁷ *Դիվան հայ վիմագրության*, ս. VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 49:

Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ հավանաբար նշված միջակայքում էլ տեղի է ունեցել Բերդի եկեղեցու կառուցումը:

Արթերցելով Բերդի եկեղեցու արձանագրությունը՝ Քաջիկյանը գրել է. «Եկեղեցին քարաշէն է և շինուած Թիֆլիզեցի Չիթախեանց մահտեսի Սորլիսի ծախքով և Խորանաշատու Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով, ինչպէս ցոյց է տալիս արձանագրութիւնը, ուրեմն աւելի քան 200 տարի յառաջ, ըստ որում Չորաթանի եկեղեցոյ արձանագրի թուականից յայտնի է, թէ որ ժամանակումն է ապրել յիշատակեալ Յովհաննէս եպիսկոպոսը»²¹⁸: Քաջիկյանն այս տողերը գրել է 1885 թ. հուլիսի 9-ին²¹⁹: Ստացվում է՝ հեղինակը եկեղեցու կառուցուման մոտավոր թվական համարում է 1685 թ.: Դժվար է ասել՝ որևէ այլ բանավոր վկայություն Քաջիկյանին հաղորդել են, թե՛ ոչ, այդուհանդերձ նրա ենթադրությունը կարող է ճշմարիտ լինել: Այս տեսակետի օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որ եկեղեցու արձանագրության մեջ հիշատակված մելիք Ղորխմազի մասին հիշատակություն կա նաև XVIII դարասկզբի մի ձեռագրի հիշատակարանում²²⁰:

Անդրադառնալով գրչագրերում ու վիմագրերում հիշատակված Հովհաննեսի ով լինելուն՝ կարելի է երկու վարկած առաջ քաշել: Եսայի գրչի՝ քանիցս հիշատակած Հովհաննեսը և նշված եկեղեցիների կառուցմանը կամ նորոգմանն օժանդակող Հովհաննեսը միևնույն անձն է: Այստեղից կարող ենք արձանագրել վերջինիս երկարակյաց լինելու փաստը²²¹: Այսինքն, Չորաթանի եկեղեցու կառուցման ժամա-

²¹⁸ «Արձագանք», 1888, № 7, էջ 88:

²¹⁹ Քաջիկյանի «Ճամապարհորդական յիշատակարան»-ը հեղինակի օրագրային բնույթի նկատառումներն են, որոնք արվել են, երբ վերջինս ուղևորվում էր Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդին՝ հյուսիսարևելյան Հայաստանի բնակավայրեր ու հոգևոր հաստատություններ ճամփորդության ընթացքում: Նրանց ուղևորությունը մեկնարկել էր 1885 թ. հունիսի 10-ին Գանձակ քաղաքից: Այնուհետև շրջելով Գարդմանի բնակավայրերում հուլիսի 5-ին անցնում են Տավուշ գավառ: Տե՛ս «Արձագանք» 1886, № 13, էջ 195:

²²⁰ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*, հ. Բ, էջ 276:

²²¹ Համաձայն 1243 թ. Սսի եկեղեցական ժողովում ընդունված «կանոնական սահմանադրության»՝ եպիսկոպոս կարող էր օծվել 30 տարին բոլորած հոգևորականը, տե՛ս Գանձակեցի, էջ 304:

նակ նա պետք է որ լիներ մոտավորապես 85 տարեկան: Հնարավոր է նաև գործ ունենք նույն անունով երկու տարբեր հոգևորականների հետ: Եթե առաջնորդվենք վերջին տեսակետով, ապա կարող ենք ենթադրել, որ նրանցից առաջինը աթոռակալել է մինչև 1668–1669 թթ., այնուհետև որոշ շրջան աթոռակալել է Գրիգոր արքեպիսկոպոսը: Ապա՝ XVII դ. վերջին քառորդից աթոռակալել է Հովհաննես արքեպիսկոպոսը, ով նշված եկեղեցիների կառուցողն ու վերանորոգողն է: Բոլոր դեպքերում առկա աղբյուրագիտական նյութը թույլ չի տալիս այս վարկածներից որևէ մեկին առաջնություն տալու:

Վերոնշյալ վիճելի տեսակետները մի կողմ թողնելով՝ արձանագրենք, որ Խորանաչատի թեմակալ Հովհաննես արքեպիսկոպոսը մեծ ներդրում է ունեցել տարածաշրջանի հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացման գործում: Նրա օրոք Խորանաչատի միաբանության գործունեությունը կարգավորվել է: Հովհաննեսի ջանքերով գավառի տարբեր բնակավայրերում հիմնադրվել են նոր հոգևոր հաստատություններ: Վերջին հանգամանքը վկայում է, որ այդ բնակավայրերն ունեին զգալի թվով բնակչություն, ուստի նոր եկեղեցիների ու հոգևոր սպասավորների կարիք կար: Նշված ժամանակաշրջանին պատկանող բազմաթիվ գյուղատեղիները, գերեզմանոցների հետքերը²²², նույնպես արտացոլում են այդ ընթացքում գավառի խիտ բնակեցված լինելը:

Կա տեսակետ, որ Տավուշի մարզի համանուն գյուղի եկեղեցին կառուցվել է XVII դ. սկզբին²²³: Անկասկած, քննվող ժամանակաշրջանում Տավուշ գյուղում գործել է եկեղեցի, ինչի մասին քանիցս փաստում է նաև Եսայի գրիչը: Հենց այդ եկեղեցում էլ նա ընդօրինակել է իր մատյաններից մի քանիսը: Նշված եկեղեցու մասին այլ աղբյուրներում հիշատակություններ առկա չեն, ուստի դժվար է պատկերացում կազմել, թե երբ է այն կառուցվել: Հավանաբար XVIII դ. այն

²²² Տե՛ս Կ. Ղաֆադարյան, *ևշվ. աշխ.*, էջ 231–307:

²²³ Ա. Տեր-Գրիգորյան, *ևշվ. աշխ.*, էջ 64, էջ 193: Հեղինակը որևէ աղբյուր չի վկայակոչել, հետևաբար այս պնդումը հիմնավորման կարիք ունի:

ավերվել է ու դադարել է գործել: Տավուշ գյուղի ներկայիս եկեղեցին, որի կառուցումը վերագրվում է XIX դ., ենթադրաբար կառուցվել է նախկին եկեղեցու տարածքում կամ դրա ավերակների վրա՝ վերանվանվելով Սուրբ Աստվածածին: Որպես ասվածի ապացույց կարող ենք մատնանշել այն հանգամանքը, որ Բարխուդարյանցը մանրամասն թվարկելով Տավուշ գյուղում ու հարակից վայրերում գտնվող բոլոր սրբավայրերը, ավերակներն ու մատուռները՝ Սուրբ Նահատակ անունով ավերակ կամ ուխտատեղի չի հիշատակում: Այնուհետև անդրադառնալով Սուրբ Աստվածածին եկեղեցուն՝ նա նշում է. «Եկեղեցուս հիւսիսային կողմում կայ մի առանձին փոքր խորան (բացի փոքր խորանից) որ ուխտատեղի է. ոչ ոք չգիտէ գիղացիներից, թէ ի՞նչ ուխտատեղի է»²²⁴: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա կարող ենք նաև կոստել, որ Բարխուդարյանցի հիշատակածը Սուրբ Նահատակ եկեղեցուց պահպանված խորանն էր, որը շարունակում էր ուխտատեղի մնալ:

Տավուշ գավառում գործում էր նաև 1668 թ. Ավետիս քահանայի հիշատակած Քամալի Սուրբ Աստվածածին եկեղեցին: XVIII դ. հյուսիսարևելյան Հայաստանի գավառները պատուհասած լեզգիների արշավանքներից գյուղը մարդաթափ է լինում: Աստվածածին եկեղեցին նույնպես ավերվում ու դադարում է գործել: XIX դ. երկրորդ կեսին գյուղատեղին բնակեցվում է Գյունաշից²²⁵ եկած հայերով, իսկ Աստվածածին եկեղեցին վերականգնվում է²²⁶:

Հին Հախում գյուղատեղում²²⁷ պահպանված մի արձանագրություն վկայակոչելով՝ Արտակ Տեր-Գրիգորյանը նշում է, որ այն եկեղե-

²²⁴ Բարխուտարեանց, էջ 329:

²²⁵ Այս բնակավայրը գտնվում էր ՀՀ Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր և Այգեպար գյուղերից ոչ հեռու՝ ԱՀ Ալիբեյլու գյուղի հարևանությամբ: Բնակիչները Քամալ տեղափոխվելուց հետո երկար տարիներ շարունակում էին մշակել նախկին բնակավայրի այգիները: Խորհրդային իշխանության սկզբնական տարիներին, սակայն, այդ հողերը տրվեցին հարակից աղբրեջանական գյուղերին:

²²⁶ Տե՛ս Մ. Գարբինյան, *ճշվ. աշխ.*, էջ 121:

²²⁷ Գտնվում է Վարազավան գյուղից 1,5 կմ հարավ-արևելք՝ Վարազաջուր գետի աջ ափին:

ցու շինարարական արձանագրություն է՝ թվագրված 1633-ով²²⁸։ Կիսավեր մատուռի տարածքում, այժմ էլ տեսանելի են XVII դ. վերաբերող խաչքարեր ու տապանագրեր, սակայն որևէ շինարարական արձանագրություն առկա չէ։ Նման արձանագրություն չի հիշատակում նաև Ղաֆաղարյանը²²⁹, ուստի կարելի է կարծել, որ Տեր-Գրիգորյանը խաչքարերը սխալմամբ որպես շինարարական արձանագրություն է ներկայացրել։

Տավուշում մինչ այժմ պահպանվել են XVII–XVIII դդ. բարձրաճաշակ խաչքարեր ու տապանագրեր, որոնք պատկանում են ժամանակին Հայաստանում մեծ ճանաչում գտած քարագործ վարպետների ձեռքի աշխատանքին։ Հայաստանի մի շարք շրջաններում իր գործերով հայտնի Քիրամ կազմողից խաչքարեր են պահպանվել Բերդ քաղաքի հին գերեզմանոցում։ Այս խաչքարերից մեկի վրա կարդում ենք. «ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ ԹՎ ՌԾԹ (1610)²³⁰։ Բարխուդարյանցի վկայությամբ Տավուշ գյուղի եկեղեցում նույնպես եղել է Քիրամի հեղինակած խաչքար²³¹։ Հռչակավոր այս վարպետի՝ Տավուշ գավառում թողած ժառանգության թվում է նաև Շխմուրատի վանական համալիրի 1611 թվակիր խաչքարաբեկորը²³²։ Եկեղեցու գավթում կա նաև համեմատաբար լավ պահպանված խաչքար՝ թվագրված 1619-ով²³³։ Պարզվում է, որ Քիրամից բացի Տավուշ գավառում գործունեություն են ծավալել այլ վարպետներ ևս։ Մասնավորապես, Բերդում պահպանվել են Խաչատուր կազմողի խաչքարերը, իսկ Տավուշ գյուղի եկեղեցում Վարդան կազմողի՝ 1618-ով թվագրված երկու խաչքարերը։

²²⁸ Ա. Տեր-Գրիգորյան, *կշվ. աշխ.*, էջ 64։

²²⁹ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *կշվ. աշխ.*, էջ 306։

²³⁰ Ս. Բարխուդարյան, *Միջնադարյան հայ նարտարապետներ և քարգործ վարպետներ*, Երևան, 1963, էջ 166։

²³¹ Բարխուդարյան, էջ 329։

²³² Տավուշ գավառում Քիրամի գործունեության քննությանը մեզ օժանդակել է «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈՒԿ-ի աշխատակից Սևակ Արևշատյանը, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

²³³ Գ. Սարգսյան, *Շխմուրատի փակերթ*, «Էջմիածին», 1956, № 9, էջ 24։

ՓԼՈՒԽ III

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԹՈՒԼԱՅՈՒՄՆ ՈՒ ԴԻԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ա) Ռազմաքաղաքական դրությունը հյուսիսարևելյան Հայաստանում XVII դ. վերջին – XVIII դ. սկզբին

Հյուսիսարևելյան Հայաստանում XVII դ. շահաբասայան արշավանքներից հետո ստեղծված բարենպաստ պայմանները մեծապես նպաստեցին տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային վերելքին: Հին բնակավայրերը սկսեցին ավելի ընդլայնվել, հիմնադրվեցին նորերը: Բնակչության թվաքանակը նույնպես սկսեց աճել որի մասին են վկայում նաև տարբեր բնակավայրերում հիմնադրված նոր եկեղեցիներն ու հոգևոր հաստատությունները: Ամփոփելով նախընթաց դարի այս իրողությունները՝ Աղվանից Եսայի կաթողիկոսը նշում է. «...շինեցան ամենայն աներակ գեղք և քաղաքք, և երկիր աշխարհիս Հայոց և Պարսից»²³⁴: Այս ամենի արդյունքում երկիրը բարեկարգվում է, բնակչությունը սովորանում, հարկերը՝ կարգավորվում. «...առաել խաղաղութիւն եղել աշխարհի և շինութիւն աներակաց, և բազմամարդութիւն երկրի. ուղղութիւն և իրաւունք դա-

²³⁴ Եսայի պատմիչ, էջ 44:

տատրաց, չափաորոթին հարկապահանջութեանց. և բարեկարգութիւն ամենայն գործոց և արարողութեանց»²³⁵:

Սակայն XVII դարավերջին Սեֆյան Իրանում ի հայտ եկան անկայունության ու թուլացման նշաններ: Դրանից շտապեց օգտվել Սեֆյանների վաղեմի թշնամի Օսմանյան կայսրությունը: Պետրոս I-ի օրոք (1682–1725) հզորացող և ծավալվող Ռուսաստանը ևս լուրջ քայլեր էր ձեռնարկում այսրկովկասյան տարածաշրջանը նվաճելու ուղղությամբ՝ փորձելով օգտագործել նաև տեղի հայ բնակչությանը: Այս առումով հիշատակելի է նաև ցարական արքունիքի հետ ակտիվ շփումներ ունեցող Իսրայել Օրու գործունեությունը: Ռուսաստանը նաև ամեն կերպ փորձում էր իր կողմը գրավել Իրանին ենթակա վրաց թագավորներին: Այս գործընթացների վրա ազդող մյուս գործոնը լեզգիներն էին: Վերջիններս, Շիրվանում մի քանի հաջող ավարառական արշավանքներ իրականացնելով՝ Օսմանյան կայսրության աջակցությամբ²³⁶ սկսեցին մշտական վտանգի ու քառսի մեջ պահել Իրանի հյուսիսային սահմանները:

Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի (1694–1722) օրոք հարկերն ավելի ծանրացան: Իրանի տնտեսական և հարկային քաղաքականությունը բնույթով հնացած էր: Արդեն XVII դ. կեսերին ի հայտ եկան բուզմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը Սեֆյան արքունիքը տեսնում էր նորանոր հարկեր ներմուծելով²³⁷: Շահ Հուսեյնը 1699–1702 թթ. անց է կացնում աննախադեպ մի աշխարհագիր²³⁸, որն ուղեկցվում էր հալածանքներով ու բռնությամբ: Համաձայն Եսայի կաթողիկոսի՝ հարկեր են սահմանվում նաև եկեղեցականների ու վանքերի վրա. «Իսկ անդ եղին հարկս ի վերայ գրելոց գլխոցն՝ երեքպատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. և ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջ-

²³⁵ Եսայի պատմիչ, էջ 45:

²³⁶ Տե՛ս А. Бакнханов, *Աշխ.*, էջ 63:

²³⁷ R. Matthee, *Persia in crisis, Safavid decline and the fall of Isfahan*. Chapter 4, Monetary policy and the disappearing mints, 1600–1700, London, 2012, pp. 75–108.

²³⁸ Եսայի պատմիչ, էջ 45:

նումն ոչ երեւէր բնաւ, տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռինս եղին...»²³⁹:

Հյուսիսարևելյան Հայաստանի գավառներում հարկահանության գործընթացը իրականացնում է մեծ վեզիր Միրզաթահիրը, ով 1100 հոգանոց իր խմբով իրագործեց Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության աշխարհագիրը²⁴⁰: Այս աշխարհագրի տվյալների մասին մանրամասն տեղեկություններ մեզ չեն հասել, ինչը հնարավորություն կտար պարզաբանել հյուսիսարևելյան Հայաստանի պատմության մի շարք հարցեր:

Տերության կառավարման համակարգը նույնպես լճացել և թուլացել էր: Սովորական բնույթ էին կրում կաշառքով զանազան պաշտոնների նշանակումը և պաշտոնյաների արագ փոփոխությունները²⁴¹:

Ծայրագավառներում իրենց ցեղերով հաստատված տեղական մահմեդական կառավարիչները սկսել էին իրենց ավելի ընդարձակ իրավունքներ վերապահել՝ անտանելի դարձնելով հայ բնակչության կյանքը: Վարելով հիմնականում քոչվորական կենսակերպ՝ նրանք հետզհետե յուրացնում էին նորանոր տարածքներ՝ տեղի բնակչությանը ստիպելով հեռանալ՝ որոնելու նոր բնակավայրեր:

Շուտով Իրանի տարբեր վայրերում ապստամբություններ են բռնկվում: Այս իրադարձությունները կարծես թե գալիս էին նպաստելու Հայաստանի ազատագրության ծրագիրը շրջանառության մեջ դրած Իսրայել Օրու նպատակների իրագործմանը: Ղարաբաղում նրա համախոհն էր Եսայի կաթողիկոսը: Իսրայել Օրու կողմից 1699 թ. շրջանառության մեջ դրված Հայաստանի ազատագրության «Պֆալցյան» ծրագրում ի թիվս Հայաստանի գավառների, հիշատակված է նաև Զակամ գավառ-վարչամիավորը: Համաձայն այդ ծրագրի՝

²³⁹ Եսայի պատմիչ, էջ 46:

²⁴⁰ Նույն տեղում:

²⁴¹ Նույն տեղում, էջ 47:

Ջակամից Հայաստանի ազատագրության գործը գլուխ բերելու նպատակով ժողովվելու էր 5000 զորք²⁴²: Աշոտ Հովհաննիսյանն Իսրայել Օրու կողմից հիշատակված Ջակամը սխալմամբ նույնացնում է Շամշադինի՝ ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի հետ²⁴³: Ավելի հավանական է, որ Օրու վկայակոչած Ջակամ վարչամիավորը ներառել է Տավուշ, Վերին և Ներքին Ջակամ գավառները:

Նշված գործընթացների ուղղակի ազդեցությունն էր կրում նաև Սեֆյանների տերության սահմանային գավառ Տավուշը: Դրանից ելնելով ստորև կփորձենք բուն թեմայից փոքր-ինչ շեղվելով մանրամասնել դարասկզբի ռազմաքաղաքական իրադարձությունները, որոնք մեծապես փոխեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Այս ամենը պայմանավորված էր հատկապես Ռուսաստանի՝ տարածաշրջանի նկատմամբ դրսևորվող հետաքրքրությամբ:

բ) Լեզգիների արշավանքները տարածաշրջան

Օգտվելով Սեֆյան տերության անկայուն վիճակից՝ լեզգիները 1712 թ. Սուրխայ խանի և Հաջի Դավութի գլխավորությամբ հարձակվեցին Շամախի քաղաքի վրա: Արշավանքին զոհ են դառնում նաև մոտ 300 ռուս առևտրականներ²⁴⁴: Պատասխան գործողություններից վախենալով՝ լեզգիների առաջնորդներն աջակցություն ստանալու

²⁴² Տե՛ս Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, գիրք II, էջ 374: Ա. Հովհաննիսյանը իրավացիորեն նշում է, որ Օրու բերած թվական տվյալները խիստ ուռճացված են, տե՛ս նույն տեղում, էջ 376–382:

²⁴³ Ա. Այվազյանը, հղում անելով Հովհաննիսյանին, նշում է. «...Չազյամ (իմա՝ Շամշադին=Տավուշի շրջան)...»: Անհասկանալի է, «Տավուշի շրջան» ասելով ի՞նչ նկատի ունի հեղինակը, քանի որ նման վարչական միավոր գոյություն չունի(եր), տե՛ս Ա. Այվազյան, *Արևկասպության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց գորքի թվակազմը 1720-ական թվականներին*, Երևան, 2022, էջ 43: Առանձին աղյուսակով անդրադառնալով գավառներից կազմվող գորքերի թվաքանակին՝ հեղինակն այս անգամ Չակամի տեղորոշման հարցում ապավինում է Եսայի կաթողիկոսի բացատրությանը, ինչից ավելի ակնհայտ է դառնում գավառ-վարչամիավորի տեղագրության վերաբերյալ հեղինակի թուր պատկերացումները, տե՛ս էջ 46, ծնթ. 65:

²⁴⁴ В. Левнатов, *Очерки из истории Азербайджана в XVIII в.*, Баку, 1948, с. 50.

խնդրանքով դիմեցին Օսմանյան կայսրության: Ահմեդ III (1703–1730) սուլթանի հատուկ ֆերմանով Հաջի Դավուրը նշանակվեց Շիրվանի կառավարիչ, իսկ Սարու Մուստաֆա փաշային հանձնարարվեց անհրաժեշտության դեպքում զինված օգնություն ցուցաբերել լեզգիներին²⁴⁵: Օսմանյան կայսրությունը, նպատակ ունենալով նվաճել երկրամասը և խոչընդոտել տարածաշրջանում ոռոսական կայսրության առաջխաղացումը, օժանդակում էր լեզգիներին՝ միաժամանակ սպասելով բացահայտ ռազմական ներխուժման հարմար առիթի:

Լեզգիների արշավանքները սկսեցին պարբերական դառնալ: Հետզհետե ընդլայնվեց նաև նրանց ավարառության սահմանները²⁴⁶: Կուրի ձախսահայա շրջաններն ասպատակելով՝ լեռնականներն անցնում էին գետը և ավերում ու կողոպտում Արցախն ու հյուսիսարևելյան Հայաստանի գավառները: Աղվանից Եսայի կաթողիկոսի վկայությամբ. «Եւ այսպէս գրգռեալ ամ յամէ ասպատակ սփռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Ղապալու և Գասանու նահանգին մինչեւ մերձ ի Շամախի քաղաք: Իսկ յայսմ կողմանէ յովոՎք ի նահանգէն Ղազախու, որ է Ախստեու՝ և ի յերկրէն Ամիրշամ Շատինլուէն որ են Զակամներն»²⁴⁷: Կաթողիկոսի վկայությունից ստացվում է, որ Աղստևի հովիտը, Տավուշը, Վերին և Ներքին Զակամները մեծ վնասներ են կրել: Այստեղից լեռնականները անցնում են Քարթլի. «1712 թ. ... լեզգիներն ավերում էին Քարթլին, Ղազախը, Շամշադինը, Ղարաբաղը և Շիրվանը»²⁴⁸. գրում է վրաց անանուն հեղինակը:

Շարունակելով իրենց կողոպտիչ արշավանքները՝ լեռնականները հասնում են մինչև Մևանի ավազան²⁴⁹: Նրանք ծրագրել էին նաև

²⁴⁵ А. Бакиханов, с. 63.

²⁴⁶ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. II, էջ 430:

²⁴⁷ Եսայի պատմիչ, էջ 51:

²⁴⁸ Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրների Հայաստանի և հայերի մասին*, հ. Գ (ԺԸ–ԺԹ դդ.), էջ 68:

²⁴⁹ Տե՛ս Մամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 350: Տե՛ս Մ. Չամչյանց, *Հայոց պատմություն*, հ. Գ, Երևան, 1984, էջ 784:

արշավել դեպի Արարատյան դաշտ, սակայն ի բարեբախտություն Երևանի նահանգի բնակավայրերի՝ լեռնականների այս մտահաղացումը չիրագործվեց²⁵⁰։ Բնակչության մի մասը տարվում էր ստրկության, իսկ լեռներում և այլ անվտանգ վայրերում ապաստանածները ծանր գրկանքների գտով մի կերպ պահպանում էին գոյությունը։ Տեղական ցեղապետերը, որոնք փաստորեն Սեֆյան Իրանի պաշտոնյաններ էին, անկարող գտնվեցին լեզգիների դեմ արդյունավետ դիմադրություն կազմակերպել, իսկ առանձին փորձերը անհաջողության մատնվեցին։ Այսպես, Շամախու Հասան խանը մեծաքանակ գորքով հետապնդում է լեզգիներին, սակայն վերջիններս հանկարծակի հարձակումով ջախջախում են նրանց, իսկ խանը սպանվում է²⁵¹։ Լեզգիների ձեռքն է անցնում խոշոր ավար²⁵², սակայն նրանք դրանով չեն բավարարվում։ Այս հաղթանակից հետո լեզգիները հերթական անգամ անցնում են հյուսիսարևելյան Հայաստանի գավառների ամայացմանը։ Տեղական խաներն, ամենայն հավանականությամբ, այքի առաջ ունենալով Հասան խանի անփառունակ պարտությունը՝ նախընտրում են ապավինել անվտանգ վայրերին՝ երկրամասը թողնելով անպաշտպան։ Ջակամ գավառում լեզգիների ավերածությունների մասին մի ձեռագրի հիշատակարանից կարդում ենք. «ԹՎին ՌՃԿԸ (1720)-ին, յուլիսի ԻԶ։ Ով ընթերցող պարտ այս (=ես) հետեիլ, եթե զինչ կայ ի մեջ նորատիպ գրկիս. գրվեցաւ վերոյգրեալ թարրդումս Բլօվլկի էյախումս, որ է Լազկին։ Վեր էլ կացել Ջազամայ օլքէն չափմիշ անէր, օղուրուշախ գերի անէր տանէր Լազկըստան ծախէր։ ...խանըն Մէհրալիխան էր. ոչ գնէր դանշարըն։ Շահին արգարին, Շահ Սուլթան Հումէյնին էր, իրան բուրմիշ արեց Լազկուն վե-

²⁵⁰ Տե՛ս *Շամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանեցի*, «Կոունկ Հայոց Աշխարհին», 1863, № 3, էջ 193։

²⁵¹ Եսայի պատմիչ, էջ 52, հմմտ. В. Баграмян, *История царства Грузинского*, Тбилиси, 1976, էջ 97։

²⁵² Տե՛ս В. Баграмян, *Արշ. աշխ.*, էջ 97, Վախուշտին նշում է, որ ավարն այնքան շատ էր, որ լեռնականները մեկ ուղտը վաճառում էին մոտ 4 ուրվով։

րայ, վերջեն Աստուծոյ է գիտելի»²⁵³։ Այստեղ հիշատակված Մեհրալի խանը, ով հյուսիսարևելյան Հայաստանի մի քանի գավառների կառավարիչն էր²⁵⁴, նույնպես որևէ դիմադրություն չկազմակերպեց²⁵⁵։ Համաձայն վրաց պատմագիր Վախուշտի, եղել են դեպքեր, երբ կախերցիներն ավելի հարուստ ավարի հեռանկարով շահագրգռելու համոզել են լեզգիներին չմտնել իրենց երկիր, ուղեկցելով նրանց գորքերին դեպի Աղստևի հովիտ, Տավուշ, այնուհետև Արցախ ու Շիրվան²⁵⁶։

Լեզգիներին կանգնեցնելու համար պարսից շահը Երևանի ու Գանձակի բեկլարբեկներին հրամայեց նրանց դեմ արշավանք կազմակերպել։ 30-հազարանոց միացյալ զորքերը, 1721 թ. աշնանը հասնելով Պարտավ, բանակ են դնում Կուր գետի ափին։ Սակայն մինչ նրանք քնած էին, լեզգիներն իրենց բնորոշ հանկարծակի հարձակումով փախուստի են մատնում միացյալ զորքերին²⁵⁷։

Հաջորդ տարի լեզգիների զորախմբերը կրկին ավերում են Արցախը՝ ուղղություն վերցնելով դեպի Գանձակ։ Գանձակցիներն օգնություն են խնդրում Քարթլիի Վախթանգ թագավորից, վերջինս խոստանում է օգնել։ Ամրանալով քաղաքում՝ Գանձակի բնակչությունը 20 օր դիմադրում է։ Երբ Վախթանգ թագավորը 40 հազարանոց զորքով հասնում է Շամքոր՝ լեզգիները թողնելով քաղաքի պաշարումը հեռանում են։

Վախթանգն իր զորքով բանակում է Գանձակի հարավային մասում²⁵⁸։ Ջորքի պահանջները բավարարելու պատրվակով՝ վրացա-

²⁵³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Գ, էջ 434։

²⁵⁴ ՄՄ, № 3813, 496բ։

²⁵⁵ Դատելով նախորդ տարիների աղբյուրների վկայություններից, համաձայն որոնց Չակամի ու Տավուշի կառավարիչները միևնույն անձինք էին, իսկ գավառները հաճախ միասնաբար հիշատակվում են Չակամ ձևով՝ հակված ենք կարծել, որ Տավուշը նույնպես գտնվում էր Մեհրալի խանի տիրապետության տակ։

²⁵⁶ Տե՛ս В. Баграциони, նշվ. աշխ., էջ 96։

²⁵⁷ Մ. Չուլպյան, Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, էջ 193։

²⁵⁸ Եսայի պատմիչ, էջ 60։

կան գորքերը սկսեցին տարածաշրջանի ավարառությունն ու կողոպուտը: Առավելապես տուժեցին Զակամից Արցախ ընկած բնակավայրերը «...սփռեցան ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս երկրի Զակամու, Շամբորոյ, Գանջապասանու, Ոսկանապատու, Քուրաքչալու, և Պարտայու, մինչեւ ի Գուլստան գեղն և ի գետն Դրդու»²⁵⁹: Վրացական գորքն ասպատակում է ճանապարհին հանդիպած բոլոր բնակավայրերը՝ անկախ դրանց բնակչության էթնիկ պատկանելությունից: Նկարագրելով այս կողոպուտը՝ Եսայի կաթողիկոսը գրում է. «Եվ զայս ոչ թէ միայն յառաջ ասացեալ Մահմետականացն արարին ոչ. այլ ընդ նոսին խառնեալ և զամենայն գաւառս Հայոց ի վերոյ գրեալ յերկրէն միահողոյն աւարի առին զշարժուն և զանշարժուն: Եվ զի լինէր երբեմն գունդ ինչ զօրացն Վրաց. դիմէին ի գետը ինչ քրիստոնէի, և նոքա քահանայիք և ժողովրդօք ընդ առաջ լինէին նոցա խաչիք, շուրջառօք, զանգակօք, և մուտղինօք իբրև զքրիստոնէի: Իսկ Վրացիքն ի վերայ անկեալ կողոպտէին զզգեստան, և զեկեղեցին, զգիրք, և զամենայն անօթս. զարս և զկանայս, և զամենայն ինչս զեղջն մերկ ի մօրէ կողոպտեալ և աւարի առեալ գնային. և այսպէս զամենայն գաւառս և զեկեղեցիս կողմանցն Գանձակու աւեր և թափուր արարին յամենայն ընչից, և լցին զբանակս իրեանց»²⁶⁰: Պատմիչը նշում է, որ չնայած վրացիները սպանություններով ու գերեվարությամբ այդքան էլ աչքի չընկան, սակայն բոլոր կենդանիներին՝ անգամ թոչուններին ու՛ շներին, քջեցին տարան իրենց բանակատեղի²⁶¹: Չնայած ուղղակի վկայությունների բացակայությանը՝ Տավուշի բնակավայրերի մի մասը, որոնք ավելի մոտ էին վրացական գորքերի երթուղուն, հավանաբար տուժել են այս ավարառությունից:

Վրացական գորքերը Գանձակում մնացին չորս ամիս: Այնուհետև Վախթանգը վերադարձավ Թիֆլիս՝ Գանձակում թողնելով

²⁵⁹ Եսայի պատմիչ, էջ 61:

²⁶⁰ Նոյն տեղում, էջ 62:

²⁶¹ Նոյն տեղում:

փոքրաթիվ զորագունդ: Նրա հետ Թիֆլիս է վերադառնում նաև Եսայի կաթողիկոսը: Աղվանից կաթողիկոսն ու Վախթանգ թագավորն այդ ընթացքում օգնության ակնկալիքով ակտիվ նամակագրություն էին վարում ռուսական արքունիքի հետ²⁶²:

գ) Թուրքական նվաճումներն Այսրկովկասում

Տարածաշրջանին տիրելու մրցավազքում միմյանց էին բախվում Օսմանյան պետության, Իրանի և Ռուսաստանի շահերը: Օսմանյան կայսրությունը, տարբեր պատրվակներ որոնելով, պատրաստվում էր ներխուժել Արևելյան Հայաստան՝ ամեն կերպ փորձելով իր կողմը գրավել Վախթանգին: Պետրոս I ցարն էլ իր հերթին վրաց թագավորին հավաստիացնում էր, որ մտադիր է ազատագրել Վրաստանը իրանական տիրապետությունից: Վախթանգ թագավորին ուղղված նամակում Պետրոս I-ը հորդորում էր 1722 թ. աշնանը զորքով սպասել Շամախիում, ուր ըստ նախնական ծրագրի՝ պետք է նրանց միանար ինքը՝ ռուսական բանակով²⁶³:

Վախթանգը զորքով ուղղություն վերցրեց դեպի Գանձակ, իսկ Թիֆլիսում գտնվող Եսայի կաթողիկոսը նրանից ավելի վաղ անցավ Լարաբադ, որտեղ հայ մելիքների հետ համատեղ կազմակերպեց մոտ 10 հազարանոց մի զորագունդ և շարժվեց վրացական գործին ընդառաջ: Կողմերը հավատացած էին, թե Պետրոս I-ի զորքերը շուտով իրենց են միանալու և մոտեցել է քրիստոնյաների ազատագրման ժամը²⁶⁴: Վրաց-հայկական միացյալ զորքերը 25 օր սպասեցին ռուսական բանակին, սակայն լուր առան, թե Պետրոս ցարը, Դերբենտը գրավելով վերադարձել է:

²⁶² Г.А. Эзов, *Сношения Петра Великого с армянским народом*, документы, Санкт Петербург, 1898, документ № 213, с. 332,

²⁶³ Տե՛ս Գ. Միրզաբեկյան, *Այսրկովկասի քաղաքական իրավիճակը 1720-ական թվականներին*, «Հայագիտության հարցեր», 2017, № 2 (11), էջ 61:

²⁶⁴ Եսայի պատմիչ, էջ 66:

Տարածաշրջանի նկատմամբ հավակնություններ ցուցաբերող մյուս տերությունը՝ Օսմանյան կայսրությունը, ուշիուշով հետևում էր Սեֆյան տերության շուրջ կատարվող գործընթացներին՝ սպասելով հարձակման պատեհ առիթի: Այս ամենից ելնելով՝ թուրքական կողմը հրահրում էր լեզգիներին կատարել նորանոր արշավանքներ՝ նպատակ ունենալով էլ ավելի արագացնել Սեֆյան Իրանի կործանումը և իրենց հետագա արշավանքի համար բարենպաստ պայմաններ ստեղծել:

Պահը հասունացած համարելով՝ թուրքական զորքերը 1723 թ. ամռանը ներխուժեցին Վրաստան և գրեթե առանց դիմադրության գրավեցին Թիֆլիսը:

Հյուսիսարևելյան Հայաստանի վերահաս թուրքական նվաճման հեռանկարը չէր հրապուրում տեղական որոշ մահմեդական իշխանավորների, որի ներկայացուցիչները, լինելով իրանական ծայրագավառների փաստացի իշխողներ, սովոր էին ինքնուրույնության: Հավանաբար հենց այդ պատճառով էլ նրանք միացան սեֆյաններին հավատարիմ մնացած Կախեթի արքա կրոնափոխ Մահմեդ դուլիին և հաջողությամբ դիմագրավեցին Գանձակ արշավող թուրքական զորքերին: Բացի այդ, անգամ թուրքական աղբյուրներն են վկայում, որ կարճ ժամանակամիջոցում տիրելով Թիֆլիսին ու Վրաստանի մեծագույն մասին՝ թուրքական զորքերն այքի էին ընկել բազմաթիվ դաժանություններով²⁶⁵:

Հյուսիսարևելյան Հայաստանի գավառների հայ բնակչությունը նույնպես մասնակցեց թուրքական զորքերի դեմ մարտերին: Միացյալ ուժերով վերջիններս կարողացան ջախջախել երկրամասի կենտրոն Գանձակը պաշարած թուրքական զորքերին և նրանց օգնության շտապող լեզգիներին փախուստի մատնել: Նշենք նաև, որ պաշարվածները դեռևս հույսեր էին կապում ռուսական զորքերի հետ, որոնք

²⁶⁵ Տե՛ս *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին*, կազմեց Ա. Սաֆրաստյան, հ. Ա, էջ 136:

գտնվում էին Բաքվում, սակայն որևէ օգնություն չցուցաբերեցին: 20-օրյա անհաջող պաշարումից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, թողեցին Գանձակը և վերադարձան Թիֆլիս²⁶⁶: Նրանց հաջողվեց միայն գրավել հայկական թաղամասը: Այն հիմնովին թալանվեց, բնակչության մի մասը կոտորվեց, մի մասը գերի տարվեց, մի մասն էլ ապաստանեց Արցախի սղնախներում: Գանձակից գերեվարված բնակչությամբ թուրքերը չեն բավարարվում: Նրանք դեպի Վրաստան նահանջի ճանապարհին ավերելով հայկական բնակավայրերը, ևս 3000 հայերի գաղթեցնում են Թիֆլիս²⁶⁷: Այս գերիների մեծ մասը հավանաբար Գանձակի շրջակայքի հայկական գյուղերի ու Շամքորի ավազանի հայ բնակիչներն էին:

Ռուսական կողմը 1724 թ. հունիսին պայմանագիր կնքեց թուրքերի հետ²⁶⁸, որով պահպանեց միայն Իրանից նվաճած Կասպից ծովի առափնյա շրջանները, իսկ Վրաստանը, Հայաստանը և Իրանին ենթակա հյուսիսային շրջանները ճանաչեց թուրքական ազդեցության գոտի: Թուրքերը նոր թափով ձեռնամուխ եղան նշված տարածքների գրավմանը: Օսմանյան զորքերը 1724 թ. օգոստոսին գրավեցին Նախիջևանը, այնուհետև Երևանը: Նույն տարում չկարողանալով գրավել Հյուսիսարևելյան Հայաստանը և հանդիպելով դիմադրության՝ նրանք 1725 թ. ի վերջո գրավեցին Ղազախը, Շամշադինը և Լոռի-Բորչալուն²⁶⁹: Ջարգացնելով հաջողությունը՝ նույն տարվա հոկտեմբերին մեծաքանակ ուժերով երկօրյա մարտերից հետո տիրեցին նաև տարածաշրջանի կենտրոն Գանձակ քաղաքին²⁷⁰: Թուրքական արշավանքի ու ռազմական գործողությունների հետևանքով հյուսիսարևել-

²⁶⁶ *Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов*, том II, часть II, Ереван, 1967, с. 48.

²⁶⁷ Տե՛ս *Թուրքական աղբյուրների Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին*, հ. Ա, էջ 138:

²⁶⁸ Մ. Օրմանեան, *Ազգապատում*, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3267:

²⁶⁹ Տե՛ս Ա. Աբրահամյան, *Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից: (Ուսումնասիրություն և վավերագրեր)*, Երևան, 1953, էջ 114:

²⁷⁰ Նույն տեղում, էջ 118:

յան Հայաստանի գավառների բնակչության մի զգալի մասը գերի տարվեց և որպես ստրուկ վաճառվեց Կոստանդնուպոլսում²⁷¹:

Այսպիսով, XVII դ. վերջից սկսված Սեֆյան Իրանի անկումը նախանշեց մի շարք իրադարձություններ, որոնց քայքայիչ ազդեցությունը զգացվեց նաև Տավուշի ու ամբողջ հյուսիսարևելյան Հայաստանի վրա: Շահ Սուլթան Հուսեյնի դաժան հարկային քաղաքականությունը մեծ հարված հասցրեց Իրանի տնտեսական կյանքին: Ապստամբություններից ու կենտրոնական իշխանության թուլացումից շտապեցին օգտվել Օսմանյան պետությունը և հզորացող Ռուսաստանը: Օսմանյան կայսրության դաշնակից լեզգիների անդադար հարձակումները նույնպես հսկայական վնաս հասցրին հյուսիսարևելյան Հայաստանի բնակավայրերին: Դրանք թալանվեցին, իսկ բնակչությունը գերի տարվեց կամ կոտորվեց:

Լեզգիների արշավանքները, որոնք շարունակվել են մինչև տարածաշրջանի Ռուսաստանին միացումը (1801 թ.), բավականին խոհեմոր են թողել տեղի բնակչության հիշողություններում: Մինչ օրս ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերում առկա է լեզգիների հետ կապված հարսնագողության, ավագակային հարձակումների մասին բանավոր հիշողություն: Բազմաթիվ են նաև տարբեր մանրատեղանունները լեզգիների անունով կոչելու դեպքերը²⁷²: Լեռնականների արշավանքների հետևանքով լրքված հայկական գյուղերի մի մասն անցավ արդեն նստակեցության անցնող մահմեդական որոշ քոչվոր ցեղերին:

Գտնվելով թուրքական, իրանական ու վրացական զորքերի շարունակական բախումների կիզակետում, ենթարկվելով լեզգիների արշավանքներին՝ հյուսիսարևելյան Հայաստանի գավառները, որոնց բնակչությունը նախքան այդ ստվարացել էր, զգալիորեն մարդաթափ

²⁷¹ Մ. Չամչյան, *Էջմ. աշխ.*, էջ 783: Տե՛ս «Արարատ», 1888, № Ա, էջ 32: Տե՛ս Սամուել Անեցի եւ շարունակողներ, էջ 351:

²⁷² Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, Երևան, 2022, էջ 241, 406–407, 500:

եղան: Բնակչության մի մասը հեռացավ ապահով վայրեր, մի մասը գերի ընկնալ, մի մասն էլ սպանվեց: Շարունակական պատերազմների ու լեզգիների ավերածությունների հետևանքների մասին Մարտիրոս դի Առաքելը նշում է. «Եւ անճարակ ազգս Հայոց Մեծաց՝ եթէ ի Շամախու և Շրվանայ երկիրն, եթէ Գանջայ և գավառսն մինչ ի Թիֆլիզ և Երևանայ մինչ ի Արդաւէլ և Թարվէզ և Չօրս, Մարաղայ, որ եթէ ի լազգեացն, եթէ ապստամբ և եթէ այս օսմանցոց այնպէս տապալեցան, մինչ զի մեծ մասն հայոց սրոյ ճարակ եղէն և գերեցան, որպէս այժմ տեսանեմք»²⁷³:

Միևնույն ժամանակ՝ ծանր հարված ստացան նաև տարածաշրջանի հոգևոր հաստատությունները: Նախորդ դարում նորոգված, ինչպես նաև նոր կառուցված եկեղեցիների մի մասը թալանվեց ու ավերվեց, իսկ միաբանների մեծամասնությունը սպանվեցին, գերեվարվեցին կամ ցրվեցին: Մարտիրոս անունով մի սարկավազ իր ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում նկարագրելով Հայաստանին չորս կողմից պատուհասած աղետները, գրում է. «...և ի հիսիսային կողմէն Լակզին, որ էր Օզբէկ, որ ազգս Հայոց բազում գերեաց և զեկեղեցիս քակեաց, որ յոյժ դահիճ էր ազգաց քրիստոնէից և զբազումս ի վարդապետաց սպանին և զբազումս կիսամահ արարարին...»²⁷⁴: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1710–1780) վկայությամբ՝ նշված տարիներին Հայաստանը պատուհասած լեռնականների արշավանքների ժամանակ հետևելով նրանց օրինակին՝ տեղի մահմեդական ցեղերն էլ սկսեցին թալանել ու ավերել Հայաստանի բնակավայրերն ու եկեղեցիները²⁷⁵:

²⁷³ **Մարտիրոս դի Առաքել, Ժամանակագրություն.** «Մատենադարանի գիտական կյուրթերի ժողովածու», 1941, № 1, էջ 99, հմմտ. *Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ.*, հ. II, էջ 433:

²⁷⁴ «Արարատ» 1888, № Ա, էջ 30:

²⁷⁵ Տե՛ս *Չանթը*, էջ 80:

ԳԼՈՒԽ IV

ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌՆ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ 1727 Թ. «ԳԱՆՁԱԿ-ՂԱՐԱԲԱՂԻ ԷՅԱԼԵԹԻ ԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՖԹԱՐ»-Ի²⁷⁶

ա) Ընդհանուր տեղեկություններ վավերագրի վերաբերյալ

Նորանվաճ շրջաններում Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ սեփական օրենքների ու վարչաձևի հաստատմանը: Թուրքական իշխանություններն այլ վայրերի օրինակով հյուսիսարևելյան Հայաստանում իրականացրին աշխարհագիր: Դրա արդյունքներն ամփոփված են 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ում²⁷⁷: Այս հարկամատյանը մոտ քառորդ դար բուռն ռազմաքաղաքական գործընթացների հորձանուտում գտնվող տարածաշրջանի էթնոփոփոխվողազրական ու սոցիալ-տնտեսական պատկերի յուրօրինակ մի ամփոփագիր կարելի է համարել:

Հարկամատյանը մինչ օրս ուսումնասիրել և մասնակի հրատարակել է ադրբեջանցի հեղինակ Հուսամադդին Մամմադովը: Նշենք,

²⁷⁶ Ի տարբերություն 1593 թ. դաֆթարի՝ 1727 թ. դաֆթարն ավելի ծավալուն ու մանրամասն է:

²⁷⁷ *Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi, Gence-Karabağ Eyaleti'nin Mufassal Defteri*, (TT. d.), No. 903 (ինտայսու՝ COA, No. 903): Բնագրի թարգմանությունը բարձր մակարդակով իրականացնելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Գեորգի Միրզաբեկյանին:

որ հեղինակը²⁷⁸ մահմեդական բնակչության օրինակով չի ներկայացրել քրիստոնյա բնակիչների անունները: Հայաբնակ գյուղերի պարագայում միայն ներկայացրել է հարկատու բնակչության թվաքանակը:

Անդրադառնալով ընդհանուր էյալեթի բնակչության կազմին՝ Հուսամադդին Մամմադովը հարկամատյանից հանել է 19.395 հարկատուի անուն: Որպես ընտանիքի միջին թվաքանակ ընդունելով 5-ը, նա էյալեթի բնակչության թիվը ստացել է 96.975²⁷⁹ ընդունելով սակայն, որ դա էյալեթի բնակչության նվազագույն թիվն է: Միաժամանակ վերոհիշատակյալ թվի մեջ չեն մտնում օսմանյան զինվորականությունը, հոգևոր դասն ու սպասարկող անձնակազմը: Քրիստոնյաները վավերագրում հիշատակվում են նաև «քեբոան» (օսմաներենում՝ քրիստոնյայի համարժեք) բառով²⁸⁰:

Ընդհանուր էյալեթի ժողովրդագրական պատկերն ըստ հեղինակի հետևյալն է՝ 11.818 մահմեդական, որից 11.068 թուրք, 750 քուրդ, 7.577 ոչ մահմեդական (հայ)²⁸¹: Հեղինակի կողմից մահմեդական բնակչության թվաքանակի առավելության ընդգծումը տարակուսելի է, քանի որ վավերագիրը վերաբերվում է ողջ բեկլարբեկությանը, որի ահռելի տարածքը ձգվում էր Կովկասյան լեռներից մինչև Ատրուպատական:

Դաֆթարը սկսվում է քանուննամեով՝ օրինամատյանով: Այս դաֆթարի քանուննամեն հայերեն թարգմանել և հրատարակել են Մանվել Զուլայյանը և Արամ Սաֆրաստյանը²⁸²: Սկզբում ներկայացված է երկրամասի տարածքի ու սահմանների ընդհանուր նկարագ-

²⁷⁸ Այս հրատարակությանը հոդվածով անդրադարձել է Պավել Չոբանյանը, տե՛ս Պ. Չոբանյան, *Հայաստանի պատմության օսմանյան սկզբնաղբյուրների շուրջ*, «Բանրերի հայագիտության», 2017, № 1, էջ 209:

²⁷⁹ Տե՛ս *Канча-Гарабаг эйялетинин муфэссэл дэфтэри*, Нусамэдийн Мэммэдов (Гараманлы), Бақы, 2000, էջ 12:

²⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

²⁸¹ Նույն տեղում:

²⁸² *Օսմանյան օրենքների Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանոնաակներ*, էջ 120–123:

րությունը²⁸³: Այնուհետև խոսվում է բնակչության մասին: Ըստ հեղինակների՝ դաշտային գյուղերը, որոնք հարուստ են, բնակեցված են հիմնականում մահմեդականներով: Անդրադառնալով լեռնային բնակավայրերին՝ նշվում է. «Լեռնային գյուղերի բնակիչները հայ ցեղից են, ցորենը գարին, վարսակն ու կորեկն է նրանց բերքերը, իսկ բրինձ, մետաքս և պտուղներ չունեն [լեռնային գյուղերը]»²⁸⁴:

Հանգամանքների բերումով դարերի ընթացքում լեռնային բնակավայրերում հաստատված հայկական գյուղերի տնտեսական ոչ բարվոք վիճակի մասին վավերագրի կազմողները նշում են. «Արրանի համեմատությամբ լեռնային հայաբնակ գյուղերի հողերը քիչ, անբերրի և բնակավայրերը անարժեք լինելով, աջեմի (պարսիկների – Ա.Ե.) ժամանակում տասից մեկը տասանորդ և տասնհինգից մեկը բահրա են տվել»²⁸⁵:

Հարկամատյանի հեղինակները նաև նշում են գանձվող հարկերի տեսակներն ու քանակը: Ստացվող հարկերի չափը, որոնք սահմանվել էին դեռևս Մեֆյանների օրոք, հաճախ թողնվել են անփոփոխ:

Հայ բնակչության՝ օսմանյան գանձարանին վճարվող հարկատեսակների մեջ հիմնականը «խփենջ»-ն էր, որը գանձվում էր ոչ մահմեդական բնակչությունից²⁸⁶: Այս հարկատեսակի մասին որոշակի պատկերացում կազմելու նպատակով փորձենք մանրամասնել, թե ինչ էր իրենից ներկայացնում այն: Ոչ մահմեդական հպատակների՝ ուայաների, հարկային պարտավորությունների վերաբերյալ իր ուսումնասիրությունում թուրք հայտնի պատմաբան Հալիլ Ինալըբըրը կարծիք է հայտնում, որ թե՛ լեզվաբանական, թե՛ իմաստային առումով անհնար է հայտնի ուսումնասիրող Համերի առաջ քաշած և տարածում գտած այն տեսակետը, թե իսփենջը «իենջիք» (pencik-հինգ) բա-

²⁸³ COA, No. 903, էջ 4–5:

²⁸⁴ *Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանոնադրություններ)*, էջ 120:

²⁸⁵ Նույն տեղում:

²⁸⁶ Նույն տեղում:

ոից է առաջացել²⁸⁷: Նա չի բացառում, որ իսփենջը որպես հարկատեսակ օսմանյան հարկային համակարգ է մուտք գործել Թրակիայի նվաճումից հետո՝ XIV դ. վերջերին²⁸⁸: Թրակիայում և Օսմանյան կայսրության արևմտյան նահանգներում իսփենջ հարկատեսակի հարկման մասին վկայությունների հազվադեպ ենք հանդիպում, փոխարենը այդ վայրերում գանձվում է չիֆթլիք («çift-resmi»): Հավանաբար իսփենջն ավելի կիրառելի է դառնում XV դ. օսմանյան նորանվաճ տարածքներում: Այն աստիճանաբար վերածվում է սովորությանի հարկի՝ տարածվելով Արևմտյան Հայաստանում, Միջագետքում, Վրաստանում և Արևելյան Հայաստանի՝ ժամանակ առ ժամանակ օսմանյան իշխանության տակ անցած տարածքներում²⁸⁹:

Չափահաս յուրաքանչյուր ոչ մահմեդական՝ լինի քրիստոնյա, թե հրեա իսփենջ է վճարում: Հարկի գումարը հիմնականում կազմել է 25 աքչե, այդպես է նշված օսմանյան պաշտոնական բազմաթիվ փաստաթղթերում՝ 1518 թ. Մարդինի և Խարբերդի, 1540 թ. Դիարբեքի, 1541 թ. Չմշկաձագի քանոններում²⁹⁰: Սակայն ժամանակի ու տարածության մեջ այն երբեմն փոփոխություններ է կրել²⁹¹: XVII դ. գանձվող հարկերի գումարն առհասարակ բարձրանում է, որոշ վայրերում հասնում մինչև 120 աքչեի, ինչպես օրինակ Գանձակ-Ղարաբաղի 1727 թ. ընդարձակ դաֆթարի դեպքում, ինչը չի վրիպել թուրք հետազոտողներ Օմեր Լյուքֆի Բարքանի և Հալիլ Ինալջըքի ուշադրությունից²⁹²:

²⁸⁷ Տե՛ս Halil Inalcik, *Osmanlılarda Raiyyet Rüşumu*, Belleten, 1959, XXIII/92, էջ 602, ծնթ. 127:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 603:

²⁸⁹ Նույն տեղում, էջ 606–607:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 606:

²⁹¹ Տե՛ս Լեոն Վարդան, *Հարկերը Օսմանեան և Պարսկական կայսրութիւններուն մէջ*, ԺԵ-Ի դար, Երևան, 2004, էջ 495–505:

²⁹² Halil Inalcik, *Osmanlılarda Raiyyet Rüşumu*, էջ 607:

Ընդ որում, իսփենջ են վճարել ոչ միայն գյուղացիները, այլև քաղաքների ու ավանների քրիստոնյա բնակչությունը²⁹³: Հարկը սովորաբար գանձվում էր մարտ ամսին²⁹⁴: Հալիլ Ինալըքը իսփենջը կոչում է սովորության գլխահարկ²⁹⁵: XVIII դ. կայսրության որոշ վայրերում դրա գանձումն արգելվել է այն պատճառաբանությամբ, որ դա շարիաթին հակասում է: Բանն այն է, որ ջիզյեից բացի իսփենջ անունով երկրորդ գլխահարկի գանձումը համարվել է բիդաթ, այսինքն՝ հետագայում ներմուծված²⁹⁶, ուստի և իսլամական իրավունքին հակասող: Սակայն օսմանյան իրավագետների մի մասը իսփենջը համեմատել կամ թե նույնացնել են չիֆթլիքի (çift-resm) հետ՝ փորձելով այն այսպես ասած «շարիաթականացնել» կամ թե իսլամական սկիզբ վերագրել: Այս իսկ պատճառով այն երբեմն «çift-resm»-ի պես համարվել է հողի հարկ, երբեմն էլ՝ բեննաքի համարժեքը: Օսմանյան քանոններում կարելի է հանդիպել այն արձանագրմանը, որ եթե ոչ մահմեդականը իսլամ էր ընդունում, ապա դադարում էր իսփենջ վճարելուց, փոխարենը վճարում էր բեննաք (պաշտոնական անվամբ՝ *bennek-resmi*)²⁹⁷: Առհասարակ բեննաքն օսմանյան հարկային համակարգում անվանվում է գլխահարկ, ուստի քրիստոնյաների պարագայում դրա համարժեքն ընկալվող իսփենջը նույնպես կարող ենք գլխահարկ համարել:

Այսպիսով, հարկամատյանի տվյալների համաձայն՝ Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկությունում իսփենջը կազմում էր 120 արչե: Հատկանշական է այն հանգամանքը, որ Երևանի վիլայեթի նույն ժամանակաշրջանին պատկանող դաֆթարների համաձայն, այնտեղ դեռևս պահպանված էր իսփենջի 25 արչե դրույքաչափը²⁹⁸:

²⁹³ Halil Inalcık, *Osmanlılarda Raiyyet Rüşümü*, էջ 604:

²⁹⁴ Նույն տեղում, էջ 607:

²⁹⁵ Նույն տեղում, էջ 603:

²⁹⁶ Նույն տեղում:

²⁹⁷ Նույն տեղում, էջ 603–604:

²⁹⁸ Հ. Փափազյան, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակներ», «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 444:

Ստացվում է՝ Գանձակ-Ղարաբաղի էյալեթի պարագայում իսփենջը եռակի ավել է գանձվել: Հայտնի է, որ այս կամ այն տարածքի հարկերի սահմանման ժամանակ հաշվի էին առնվում նաև տեղական սովորույթներն ու առանձնահատկությունները²⁹⁹: Հավանաբար, օսմանյան իշխանությունները, տեսնելով որ Սուլթան Հուսեյնի օրոք բարձրացված հարկերն այնուամենայնիվ վճարվում են, նախընտրել են դրանք անփոփոխ թողնել:

Վավերագիրը հարուստ նյութ է պարունակում հյուսիսարևելյան Հայաստանի, Արցախի ու հարևան գավառների ժողովրդագրության ու տնտեսության վերաբերյալ: Ստորև կանդրադառնանք հարկամատյանի՝ Տավուշին վերաբերող տվյալներին և ըստ գյուղերի կներկայացնենք բնակչությունը: Բնակավայրերի մի մասն աղբյուրագիտական ոչ բավարար նյութերի պատճառով դժվար է ճշգրիտ տեղորոշելը: Այդուհանդերձ, կփորձենք առկա տվյալները համադրելով՝ կատարել բնակավայրերի մոտավոր տեղորոշում:

Հարկամատյանում հյուսիսարևելյան Հայաստանի շրջանները ընդգրկված են Խլխնայի լիվայի (գավառ) մեջ: Այն իր հերթին բաժանվում է 9 նահիյեների՝ Խլխնա, Հասանսու, Թավուս (Տավուշ), Ախնջա, Ասրիկ, Ղարաղայա, Թուրգանլար, Վերին Զակամ, Ներքին Զակամ³⁰⁰: Աշխարհացույցյան Տուչքատակ-Տավուշ գավառի տարածքը մոտավորապես համապատասխանում է Թավուս (Տավուշ), Ախնջի, Հասանսու և Ասրիկ³⁰¹ նահիյեներին: Որոշ դեպքերում՝ օրինակ Հասանսու նահիյեի պարագայում, վարչական միավորի սահմաններում են ներառված նաև շրջաններ, որոնք երբևէ ընդգրկված չեն եղել Տա-

²⁹⁹ Տե՛ս Հ. Փափագյան, *Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական փակերագրերը*, «ՊԲՀ», 1984, № 3, էջ 199:

³⁰⁰ COA, No. 903, էջ 1–2:

³⁰¹ Ասրիկ նահիյեն աշխարհագրորեն ներառում է Տավուշ գետի Ասրիկ վտակի սվազանը: Նահիյեն համապատասխանում է աշխարհացույցյան Տուչքատակի հարավարևելյան հատվածին և ընկած է Գարդմանի հետ սահմանագծին: Հետևաբար հարավարևելյան հատվածի մի նեղ հողաշերտ գտվում էր Գարդման գավառի կազմում:

վուշ գավառի կազմում: Ամենայն հավանականությամբ Օսմանյան իշխանությունները որևէ էական վարչական փոփոխություն չեն իրականացրել և մեծամասամբ պահպանել են Մեֆյանների միավորները³⁰²: Աղստևի ստորին հոսանքի աջափնյակը, որտեղ վաղուց հայ բնակչություն չկար, ներառված է Հասանու և Տավուշ նահիյեների կազմում:

Վարչական այս միավորները աշխարհագրորեն ընդգրկում են համանուն՝ Տավուշ, Ախնջի, Վարագաջուր (Հախում, Հասանու), Ասրիկ գետերի ավազանները: Այս գետերից Տավուշը և Վարագաջուրը, սկիզբ առնելով Միափորի լեռներից, թափվում են Կուր գետը: Ախնջա նահիյեն ընկած է Տավուշ գետի աջ օժանդակ Ախնջի գետի վերին հոսանքի շրջակայքում, իսկ Ասրիկը՝ համանուն գետի ավազանում: Վերջին երկուսն ի տարբերություն նախորդ նահիյեների՝ տարածքով ավելի ավելի փոքր են եղել: Տավուշ և Հասանու նահիյեները զբաղեցնում էին ավելի ընդարձակ տարածքներ: Այս նահիյեների միջև սահմանները բարձրադիր գոտիներում ավելի հեշտ է որոշել, քանի որ, ընդգրկելով նշված գետերի ավազանները, առանձնանում են ջրբաժան լեռներով: Խոսքը Պայտապարի, Կենաց, Տավուշի, Խնձորուտի լեռնաբազուկների մասին է: Այս լեռնաշղթաները սկսվում են Միափորից և գրեթե իրար զուգահեռ ձգվում են հյուսիսարևելյան ուղղությամբ՝ այնուհետև աստիճանաբար ցածրանալով ձուլվում են Կուրի դաշտավայրին³⁰³: Մեր մոտավոր հաշվարկներով նշված 4 նահիյեները միասին զբաղեցրել են շուրջ 1400 քառ. կմ տարածք:

Ստորև գյուղ առ գյուղ կանդրադառնանք հարկամատյանում տեղ գտած նշյալ 4 նահիյեներին: Նախ կներկայացնենք հայաբնակ գյուղերը՝ նշելով հարկատուների անունները, այնուհետ մահմեդա-

³⁰² Նշենք, որ ի տարբերություն 1593 թ. համառոտ դաֆթարի՝ նահիյեների թիվը մի փոքր ավելացել է: Սա կարելի է բացատրել նաև նրանով, որ նախընթաց տասնամյակներին այստեղ հաստատված ցեղերի քանակով պայմանավորված՝ առանձնացվել են նրանց համար նոր տիրույթներ:

³⁰³ Հայկական ՄՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, էջ 57:

կան բնակչություն ունեցող բնակավայրերն ու այդ նահիյներում հաշվառված քոչվոր ցեղերը: Քննության կառնենք նաև գանձվող հարկատեսակները՝ մոտավոր պատկերացում կազմելու երկրամասի տնտեսական դրության վերաբերյալ:

բ) Թավուս (Տավուշ) նահիյեի հայկական բնակչությունն ու բնակավայրերը

Նահիյեի առաջին գյուղն, ըստ հարկամատյանի, Ղոչալուն էր, որն ունեցել է 41 հարկատու³⁰⁴: Հարկատուների ցանկը հետևյալն է.

- | | |
|------------------------------|-----------------------------|
| 1. Ներսես՝ որդի Մելիքսեթի | 20. Խաչատուր՝ որդի Քուսարի |
| 2. Փարսադան՝ նրա եղբայրը | 21. Քուլի՝ նրա որդին |
| 3. Մանուչեր՝ նրա եղբայրը | 22. Բայանդուր՝ որդի Սարգսի |
| 4. Գրիգոր՝ որդի Ներսեսի | 23. Ենգիբար՝ որդի Չարխանի |
| 5. Մելիքբեկ՝ որդի Փարսադանի | 24. Վարդան՝ որդի Բայանդուրի |
| 6. Միրզա՝ որդի Մխիթարի | 25. Սարգիս՝ որդի Թարխանի |
| 7. Արուֆին՝ որդի Շմավոնի | 26. Մխիթար՝ որդի Խաչատուրի |
| 8. Ալեքսան՝ նրա եղբայրը | 27. Ամիրբեկ՝ որդի Մովսեսի |
| 9. Խաչատուր՝ որդի Ջաղումի՝ | 28. Գրիգոր՝ նրա որդին |
| 10. Ենգիբար՝ որդի Բուդաղի | 29. Ավագ՝ որդի Թավանսարի |
| 11. Բաղի՝ որդի Մարութի | 30. Սարհադ՝ որդի Ղազարոսի |
| 12. Պետրոս՝ նրա որդին | 31. Նազարբեկ՝ նրա որդին |
| 13. Էսքանդար՝ որդի Թումանի | 32. Սարգիս՝ որդի Թավանսարի |
| 14. Սարդար՝ նրա եղբայրը | 33. Խաչատուր՝ նրա եղբայրը |
| 15. Սարգիս՝ նրա եղբայրը | 34. Առաքել՝ որդի Կարապետի |
| 16. Վարդան՝ նրա եղբայրը | 35. Սարգիս՝ նրա որդին |
| 17. Արուֆին՝ որդի Էսքանդարի | 36. Սարուն՝ որդի Թավանսարի |
| 18. Շարմազան՝ որդի Խաչատուրի | 37. Պետրոս՝ նրա որդին |
| 19. Բաղի՝ նրա որդին | 38. Ավագ՝ որդի Քուրաջանի |

³⁰⁴ COA, No. 903, էջ 249:

39. Հովհաննես՝ նրա որդին

41. Հովհաննես՝ որդի Ներսես

40. Հովհաննես՝ որդի Օհան քահանայի
նայի

Այս գյուղից գանձվող մշակաբույսերի հարկատեսակներից կարելի է կոահել, որ այն բարձրադիր բնակավայր է: Իսկ հարկամատյանում հաջորդող գյուղերի ստույգ տեղորոշումը թույլ է տալիս ենթադրել, որ այն ներկայիս Տավուշի մարզի Նավուր գյուղի մոտակայքում պետք է գտնվեր: Հայտնի է, որ Նավուր բնակավայրը նաև կոչվել է Նովչալու ձևով, ուստի հաշվի առնելով Ղոչալու-Նովչալու նմանությունը, կարող ենք ենթադրել, որ դրանք գուցե միևնույն գյուղերն են: Գյուղից գանձվող իսփենջը կազմում էր 4.520 աքչե: Այս պարագայում ըստ 1 շնչի իսփենջը կազմում էր մոտ 110 աքչե: Ղոչալու գյուղից գանձվող բոլոր հարկերը միասին կազմում էին 25.000³⁰⁵ աքչե³⁰⁶: Մնացյալ հարկերը հիմնականում գոյանում էին գյուղի մշակաբույսերից (ցորեն, գարի, կորեկ, վարսակ և այլն) ստացվող բերքերից որոշակի գումարների տեսքով:

Գյուղ Արմուդլու, ուներ 17 հարկատու.

- | | |
|-------------------------|---|
| 1. Սարգիս՝ որդի Դավթի | 10. Միքայել՝ որդի Հովհաննեսի |
| 2. Մխիթար՝ որդի Ավագի | 11. Սարգիս՝ նրա որդին |
| 3. Մարգարե՝ նրա որդին | 12. Սարգիս՝ որդի Մխիսամի |
| 4. Գասպար՝ որդի Սարխանի | 13. Հակոբ՝ որդի Մրավի |
| 5. Բալասան՝ նրա եղբայրը | 14. Օհան՝ նրա որդին |
| 6. Բաբաս՝ նրա որդին | 15. Սահակ՝ որդի Սարգսի |
| 7. Առաքել՝ որդի Պողոսի | 16. Բաղի՝ որդի Առաքելի |
| 8. Սարգիս՝ նրա եղբայրը | 17. Արսլան՝ որդի Մխիսամի ³⁰⁷ |
| 9. Օհան՝ որդի Շմավոնի | |

³⁰⁵ Հաճախ նշված հարկատեսակներն իրար գումարեղիս նկատվում են բավականին մեծ շեղումներ: Որպես կանոն՝ հիմնական շեղումն ի վնաս հարկատուների է: Այս երևույթը առկա է նաև այլ վայրերի հարկամատյաններում: Տե՛ս Հ. Փափազյան, «Հաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները. «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 444–445:

³⁰⁶ COA, No. 903, էջ 249–250:

³⁰⁷ Նույն տեղում, էջ 250:

Գյուղի անվան թարգմանությունը (թուրքերենից թարգմանաբար նշանակում է Տանձուտ), ինչպես նաև դաֆթարում դրան հաջորդող գյուղի ստույգ տեղորոշումը օգնում է պատկերացում կազմելու վերջինիս տեղագրության մասին: Այն պետք է գտնվեր ՀՀ Տավուշի մարզի Տավուշ գյուղից Չինչին տանող ճանապարհից ոչ հեռու: Ընդհուպ մինչև խորհրդային տարիներ Տանձուտ կոչվող այս տեղամասը ծառայում էր որպես ձմեռանոց³⁰⁸: Արմուղլու՝ Տանձուտ գյուղից գանձվող խփենջ հարկը կազմում էր 2.040 աքչե՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով: Այլ հարկերն իսփենջի հետ միասին կազմում էին 18.000 աքչե³⁰⁹:

Գյուղ Չինչին, ուներ 32 հարկատու.

- | | |
|------------------------------|-----------------------------------|
| 1. Աթաբեք՝ որդի Մանուչեհրի | 18. Աբրահամ՝ որդի Մարկոսի |
| 2. Քարադաշ՝ նրա եղբայրը | 19. Բայանդուր՝ նրա որդին |
| 3. Հովհաննես՝ որդի Դողերի՝ | 20. Ավագ՝ որդի Խաչիկի |
| 4. Սարգիս՝ նրա եղբայրը | 21. Կիրակոս՝ նրա որդին |
| 5. Նազարբեկ՝ նրա որդին | 22. Ղազար քահանա՝ որդի Հովհաննեսի |
| 6. Բաղի՝ որդի Կարախանի | 23. Մաթևոս՝ որդի Բաղդասարի |
| 7. Սարգիս՝ նրա եղբայրը | 24. Բաղի՝ որդի Սարգսի |
| 8. Մխիթար՝ նրա որդին | 25. Հովհաննես՝ որդի Վրթանեսի |
| 9. Մկրտիչ՝ որդի Բայանդուրի | 26. Արութին՝ որդի Մանուկի |
| 10. Փիրամ՝ նրա եղբայրը | 27. Ալիխան՝ որդի Սարգսի |
| 11. Բաբախան՝ որդի Հովհաննեսի | 28. Դողեր՝ որդի Դուլուխանի |
| 12. Առաքել՝ նրա եղբայրը | 29. Կիրակոս՝ նրա եղբայրը |
| 13. Մխիթար՝ որդի Բաբախանի | 30. Մանուչեհր՝ որդի Դավթի |
| 14. Սարգիս՝ որդի Դավթի | 31. Արութին՝ որդի Այվազի |
| 15. Ալիխան՝ որդի Աղբալի | 32. Գրիգոր՝ որդի Խաչատուրի |
| 16. Կարախան՝ նրա եղբայրը | |
| 17. Բալասան՝ որդի Թաբանի՝ | |

³⁰⁸ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5, Երևան, 2001, էջ 34: Տե՛ս Չ. Կորկոտյան, *Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931)*, Երևան, 1932, էջ 74:

³⁰⁹ COA, No. 903, էջ 250:

Բնակավայրը համապատասխանում է Տավուշի մարզի Չինչին գյուղին: Դատելով այդ գյուղի տարածքում գտնվող հին գյուղատեղիների առկայությունից՝ կարելի է ենթադրել, որ այն Տավուշի հնամենի բնակավայրերից է: Ինչպես արդեն նշվել է, գրավոր աղբյուրներում գյուղը վկայված է 1619 թ. մի Ավետարանի հիշատակարանում³¹⁰: Չինչին գյուղի հարկատուները վճարում էին 3.020 աքչե իսփենջ՝ մոտ 95 աքչե³¹¹ մեկ շնչի հաշվով: Գյուղը օսմանյան գանձարանին ընդհանուր վճարում էր 17.000 աքչե³¹²:

Գյուղ Թավուս (Տավուշ) Սոքութ՝ մագրայի³¹³ հետ միասին³¹⁴: Ունեցել է 41 հարկատու.

- | | |
|----------------------------------|-------------------------------------|
| 1. Թարսամ՝ որդի՝ Սարգիս քահանայի | 14. Մկրտիչ՝ նրա եղբայրը |
| 2. Նազար՝ նրա եղբայրը | 15. Մարտիրոս՝ որդի Շմավոնի |
| 3. Խոսրով՝ նրա որդին | 16. Հակոբ՝ որդի Ալիխանի |
| 4. Սարգիս քահանա՝ որդի Աղիբեքի | 17. Ղազար՝ նրա եղբայրը |
| 5. Աղամ՝ նրա որդին | 18. Մանուչեիր՝ որդի Խաչումի |
| 6. Պետրոս՝ որդի Փիրքարի | 19. Սարխան՝ որդի Մարդիի՝ (Մարտիրոս) |
| 7. Բաղի՝ որդի Ամիրխանի | 20. Ալիբեկ՝ որդի Կարապետի |
| 8. Բալասան՝ որդի Աղայի | 21. Ազատ՝ որդի Սարգսի |
| 9. Խոսրով՝ նրա որդին | 22. Մելքոմ՝ նրա եղբայրը |
| 10. Մխիթար՝ որդի Միրզայի | 23. Վարդան՝ որդի Ազատի |
| 11. Հովսեփ՝ նրա եղբայրը | 24. Արուֆին՝ որդի Շմավոնի |
| 12. Մարտրոս՝ որդի Գրիգորի | 25. Աբրահամ՝ նրա եղբայրը |
| 13. Շմավոն՝ որդի Հովհաննեսի | 26. Բալասան՝ որդի Աղիբարի |
| | 27. Մարտիրոս՝ նրա եղբայրը |
| | 28. Հովհաննես՝ որդի Մկրտչի |

³¹⁰ Տե՛ս Հայկերեն ձևագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, էջ 688–689:

³¹¹ Մնացյալ գյուղերի հետ համեմատած՝ Չինչինից գանձվող իսփենջն ամենից քիչն է:

³¹² COA, No. 903, էջ 251:

³¹³ Վայր, որը չունի մշտական բնակչություն:

³¹⁴ Նույն տեղում, էջ 252:

- | | |
|-------------------------------|------------------------------|
| 29. Մաթևոս՝ նրա եղբայրը | 35. Կիրակոս՝ որդի Օհանի |
| 30. Սարգիս՝ որդի Աստուհի | 36. Գրիգոր՝ նրա որդին |
| 31. Մխիթար՝ որդի Ղարազյոզի | 37. Հովհաննես՝ որդի Բալասանի |
| 32. Արութին՝ նրա որդին | 38. Շնավոն՝ որդի Մարտիրոսի |
| 33. Գասպար՝ որդի Վարդանի | 39. Հովհաննես՝ նրա եղբայրը |
| 34. Սուրբբար՝ որդի Հովհաննեսի | 40. Շահնազար՝ որդի Ներսեսի |
| | 41. Միրզա՝ որդի Սերդարի |

Բնակավայրը գավառի հնագույն գյուղերից է, որը Տուս ձևով հիշատակվում է դեռևս IX դ.: XVII դ. այստեղ Եսայի գրիչը ընդօրինակել է մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարաններում բնակավայրը հիշատակում է նաև «Թայուզ», «Թավուզ» ձևերով: Տավուշ գյուղի հարկատուները վճարում էին 4.920 աքչե իսփենջ՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով: Գյուղի մշակաբույսերից վճարվող հարկատեսակների ցանկում ուշագրավ է բամբակի ու մետաքսի³¹⁵ հարկի առկայությունը: Գավառի մյուս բնակավայրի համեմատ ավելի մեղմ կլիմայով պայմանավորված՝ այս գյուղի մշակաբույսերն ավելի շատ են: Գյուղում կար նաև գործող 7 ջրաղաց, որոնք միասին վճարում էին 1680 աքչե

³¹⁵ Ավելորդ չէ նշել, որ նշված ժամանակաշրջանում մետաքսի պահանջարկը բավականին մեծ էր: Պարսկա-օսմանյան հարաբերությունների համատեքստում մետաքսն ուներ իր առանձնահատուկ տեղը և պատահական չէ, որ ախոյան պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրերում մշտապես առանձին հոդվածով անդրադարձ էր կատարվում Իրանից Թուրքիա մետաքսի արտահանմանը: Տե՛ս Հ. Փափազյան, *Հայերի դեղր Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը*, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 244–245, հմմտ. R. Matthee, *The politics of trade in Safavid Iran: Silk for silver, 1600–1730*, Cambridge, 1999: Գանձակն ու շրջակայքը, համարվում էին մետաքսի հումքի կարևորագույն օջախներից մեկը: Հարկամատյանի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայկական որոշ գյուղեր, որոնք գտնվում էին ավելի ցածրադիր գոտիներում և ունեին մեղմ կլիմայական պայմաններ, զբաղվել են շերամապահությամբ: Տավուշ գյուղում մետաքսագործությունը զարգացած է եղել նաև խորհրդային տարիներին, տե՛ս Վ. Փարսադանյան, *Շամշադինի Թովուզ գյուղի առաջավոր շերամապահների փորձը*, Երևան, 1958:

հարկ: Բնակավայրից գանձվող բոլոր հարկերը միասին կազմում էին 27.000 արչե³¹⁶:

Գյուղ Մովսես՝ Մովսես մազրայի հետ, ուներ 11 հարկատու.

- | | |
|----------------------------|---------------------------|
| 1. Մարտիրոս՝ որդի Մաթեվոսի | 6. Մուրադ՝ որդի Վարդանի |
| 2. Սարգիս՝ որդի Խաչատուրի | 7. Դավիդ՝ որդի Հանեսի |
| 3. Ադիբեկ՝ որդի Մանասի | 8. Հակոբ՝ նրա եղբայրը |
| 4. Ջահի՝ նրա եղբայրը | 9. Վարդում՝ որդի Կիրակոսի |
| 5. Հակոբ՝ որդի Իսախանի | 10. Վարդան՝ որդի Պողոսի |
| | 11. Դավիթ՝ նրա որդին |

Բնակավայրն անկասկած ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Մովսես գյուղն է, որի մասին գրավոր աղբյուրներում այլ հիշատակություններ չկան: Սակայն գյուղի տարածքում հին հուշարձանների ու գերեզմանոցների առկայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն գավառի հնագույն բնակավայրերից է: Այստեղից գանձվող իսփենջի մասին տեղեկություն չկա: Գյուղում գործում էր երկու ջրաղաց, որոնցից գանձվում էր 240 արչե: Մովսես գյուղն օսմանյան գանձարանին վճարում էր ընդհանուր 18.000 արչե հարկ³¹⁷:

Գյուղ Ղալաթավուս՝ Չայ մահալեով (թաղամաս)՝ ուներ 74 հարկատու.

- | | |
|----------------------------|------------------------------|
| 1. Ավագ՝ որդի Աթաբեկի | 9. Ավագ՝ նրա որդին |
| 2. Հովհաննես՝ նրա որդին | 10. Մուրադխան՝ որդի Մարգարեի |
| 3. Սարգիս՝ որդի Հովհաննեսի | 11. Հովհաննես՝ նրա եղբայրը |
| 4. Աղաբեկ՝ նրա եղբայրը | 12. Խաչատուր՝ նրա որդին |
| 5. Մեհրիար՝ որդի Մարտիրոսի | 13. Դավիթ՝ որդի Կիրակոսի |
| 6. Արութին՝ նրա որդին | 14. Սարգիս՝ որդի Ուլուբեկի |
| 7. Թադևոս՝ որդի Մարտիրոսի | 15. Ուլուբեկ՝ նրա որդին |
| 8. Սևաքնաս՝ որդի Բադիի | |

³¹⁶ COA, No. 903, էջ 253:

³¹⁷ Նույն տեղում, էջ 255:

16. Այվազխան՝ որդի Գուսանի
17. Առաքել՝ նրա որդին
18. Մարկոս՝ որդի Սարգսի
19. Հովհաննես՝ նրա որդին
20. Դավիթ՝ որդի Բալասանի
21. Հովհաննես՝ որդի Մարտիրոսի
22. Էսքանդար՝ որդի Մանուկի
23. Դանիել քահանա՝ որդի Ազարիայի
24. Աղիբեկ՝ որդի Քուրղամարի՝
25. Քուրղամար՝ նրա որդին
26. Մելիքսեթ՝ որդի Հովհաննեսի
27. Ղազար՝ նրա եղբայրը
28. Մանուել՝ որդի Մելիքսեթի
29. Մինաս՝ որդի Սահակի
30. Սարգիս՝ նրա որդին
31. Աթաբեք՝ որդի Թիմուրի
32. Այվազ՝ որդի Մկրտչի
33. Մկրտիչ՝ որդի Մարտիրոսի
34. Օհան՝ որդի Քարամուրադի
35. Ազարիա՝ որդի Սահակի
36. Ավազ՝ նրա եղբայրը
37. Մխիթար՝ որդի Ավանեսի
38. Ավանես՝ նրա որդին
39. Սարգիս՝ որդի Ավանեսի
40. Բալասան՝ որդի Հակոբի
41. Հակոբ՝ որդի Շմավոնի
42. Նազար՝ նրա որդին
43. Սարգիս՝ որդի Առաքելի
44. Ավանես՝ որդի Կիրակոսի
45. Նազար՝ նրա որդին
46. Բաղի՝ որդի Սարգսի
47. Խաչում՝ որդի Ալթունի
48. Ավանես՝ նրա որդին
49. Ալեքսան՝ որդի Սարուխանի
50. Անտոն՝ նրա եղբայրը
51. Արուֆին՝ որդի Ավանեսի
52. Հակոբ՝ որդի Սարգսի
53. Նուրի՝ նրա եղբայրը
54. Բաղի՝ որդի Առաքելի
55. Ղազար՝ նրա եղբայրը
56. Սարգիս՝ որդի Սահամի
57. Միրամխան քահանա՝ որդի Քուլիի
58. Սարիբեկ՝ որդի Վարդանի
59. Ավանես՝ որդի Մաթևոսի
60. Քուքի՝ նրա որդին
61. Բալասան՝ որդի Մաթևոսի
62. Սարդա՝ որդի Հովհաննեսի
63. Էսքանդար՝ նրա որդին
64. Մխիթար՝ որդի Հովհաննեսի
65. Սալա՝ որդի Մադոսի
66. Հովհաննես՝ որդի Բաղդասարի
67. Գասպար՝ նրա որդին
68. Խոսրով՝ որդի Սահամի
69. Մելիքսեթ՝ որդի Բաղիի
70. Սահակ՝ նրա եղբայրը
71. Բաբախան՝ նրա որդին
72. Օհան՝ որդի Բաբախանի
73. Օհան՝ որդի Մկրտչի
74. Գալուստ՝ նրա եղբայրը

Ղալաթավուս³¹⁸ գյուղը համապատասխանում է ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքին: Գյուղը հարկամատյանի նույն էջում վկայված է նաև հենց Ղալա՝ թարգմանաբար Բերդ ձևով: Չնայած այն հանգամանքին, որ Տավուշ բերդը վաղուց ավերված էր, հարակից բնակավայրը փաստորեն կրում էր (թուրքերենից թարգմանաբար) Տավուշ բերդ կամ ուղղակի Բերդ անվանումը: Բնակավայրը, ինչպես արդեն նշել ենք, Բերդ անվամբ հայկական սկզբնաղբյուրներում հանդիպում է 1608 թվակիր Ավետարանի մի հիշատակարանում³¹⁹: Հաջորդող տարիներին գյուղը շարունակել է ընդարձակվել և այստեղ կառուցվել է եկեղեցի: Ուշագրավ է նաև բնակավայրի հետ հիշատակված Չայ (գետ) թաղամասը: Բերդ քաղաքում մինչ այժմ Տավուշ գետին հարող տեղամասը կոչում են նույն կերպ՝ Գետի թաղամաս (տեղի բարբառով՝ Կետի թաղ): Բերդի հարկատուները վճարում էին 8880 աքչե իսփենջ՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով: Բերդում կար նաև գործող 5 ջրաղաց, որոնցից հարկվում էր 600 աքչե: Գյուղից գանձվող ընդհանուր հարկերը կազմում էին 40000 աքչե: Բերդին էին պատկանում նաև Այթալասին և Չանաք մազրաները³²⁰:

Գյուղ Քիրզան (Կոզեն) հարթավայրային մասում գտնվող միակ ոչ մահմեդական բնակչությամբ բնակավայրն է: Այստեղ հաշվառված էր 9 հարկատու.

- | | |
|---------------------------|-------------------------|
| 1. Ալիխան՝ որդի Աթանի | 6. Աբրահամ՝ նրա որդին |
| 2. Վելիխան՝ նրա որդին | 7. Խաչեմ՝ որդի Քադիմի |
| 3. Միրզախան՝ որդի Փարիի՝ | 8. Մանուչեիր՝ նրա որդին |
| 4. Իսախան՝ նրա եղբայրը | 9. Ավագ՝ որդի Սերդարի |
| 5. Սարուն՝ որդի Քուրսաբի՝ | |

³¹⁸ Տարածաշրջանը 1801 թ. Ռուսաստանի կազմ մտնելուց հետո էլ բնակավայրը երկար տարիներ կրում էր Թավուզկալա անվանումը:

³¹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ա, էջ 1229:

³²⁰ COA, No. 903, էջ 256–257:

Կոդենը գտնվում է Կուրի մերձակայքում³²¹: Գյուղի հարկատուները վճարում էին 1080 աքչե խփենջ՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով: Այստեղ գտնվող երկու ջրաղացներից գանձվում էր 240 աքչե: Նահիյեի հայաբնակ գյուղերի ցանկում, բացի Տավուշ գյուղից, բամբակի և մետաքսի հարկ վճարում էր նաև այս գյուղը: Բնակավայրից գանձվող հարկերը միասին կազմում էին 26000 աքչե³²²:

գ) Թավուս (Տավուշ)՝ նահիյեի մահմեդական բնակչությունն ու բնակավայրերը

Հարկամատյանի տվյալների քննությունը ցույց է տալիս, որ Տավուշ նահիյեի ցածրադիր վայրերը հիմնականում բնակեցված են եղել մահմեդական ցեղերով: Ժողովրդագրական պատկերի այս փոփոխությունը, ինչպես արդեն նշվել է, սկսվելով նախընթաց դարերից՝ շարունակվել է նաև Սեֆյան շահերի օրոք, երբ մի շարք թյուրքական ղզբաշ ցեղեր ստանալով տիրույթներ, հաստատվեցին տարածաշրջանում: Քննվող ժամանակաշրջանում Տավուշ գավառի պատմության, ընդհանուր միջավայրի սոցիալ-տնտեսական մի շարք հարցերի պարզաբանման նպատակով օգտակար կլինի անդրադառնալ նաև հարկամատյանում հաշվառված մահմեդական բնակավայրերին ու քոչվոր ցեղերին՝ առանց ներկայացնելու հարկատունների անվանացանկերը: Այս ամենը կօգնի նաև հասկանալու, թե որոնք էին այն

³²¹ Հարուստ պատմական անցյալ ունեցող այս գյուղի մասին մանրամասն տե՛ս Մ. Կարապետյան, *նշվ. աշխ.*, էջ 286–297: Գյուղը վերջնականապես հայաթափվել է 1988 թ.: Երկար ժամանակ այն կրում էր հին անվանումը, սակայն 2012 թ. ադրբեջանական իշխանություններն այն վերանվանեցին Հունանլար: Այս մասին տե՛ս «Թովուզի շրջանի վարչատարածքային բաժանման մեջ մասնակի փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության Միլի մեջլիսի» 2012 թ. մարտի 7-ի պաշտոնական որոշման 5-րդ կետը, (*Tovuz rayonunun inzibati ərazi bölgüsündə qismən dəyişikliklər edilməsi haqqında Azərbaycan Respublikası Milli Məclisinin 7 mart 2012-ci il tarixli, 310–IVQ sayılı Qərarı*, է. հղում՝ <https://e-qanun.az/framework/23284>, դիտված 10/09/2023):

³²² COA. No. 903, էջ 263:

• հիմնական ցեղերը, որոնք տարիների ընթացքում հաստատվելու հայկական բնակավայրերի հարևանությամբ՝ աստիճանաբար յուրացրին նաև նախկինում հայաբնակ մի շարք գյուղեր՝ թյուրքակա-նացնելով դրանց նախկին անվանումները:

Մահմեդական բնակչություն ունեցող բնակավայրերից առաջինը հիշատակվում է Խալիֆալու գյուղը: Հավանաբար գյուղը Տավուշ գետի ստորին հոսանքում էր, ներկայիս ադրբեջանական Թովուզ քաղաքի շրջակայքում: Համաձայն դաֆթարի այն ուներ 9 հարկատու³²³: Իբրև այս գյուղին ենթակա բնակավայրեր հիշատակվում են նաև Շարփաշալու և Քաչարալի (Ղաչարալի, Գաչարալի) գյուղերը՝ համապատասխանաբար 1 և 10 հարկատուներով: Հարկամատյանում նշված է, որ այս գյուղի բնակիչները որպես յայլա՝ օգտագործում էին Միափորի լեռների արոտավայրերը: Այս երեք բնակավայրերը միասին վճարում էին 20.000 աքչե³²⁴: Հատկանշական է, որ մահմեդական բնակչության պարագայում կիրառվող խփենջին համարժեքը՝ բեննաքը, կազմում էր 40 աքչե: Եթե համեմատենք Օսմանյան կայսրության այլ շրջաններից գանձվող բեննաքի չափի հետ, ապա կտեսնենք որ այստեղ ևս այն փոքր ինչ բարձր է: Այդուհանդերձ, տարբերությունը հայերից գանձվող խփենջի հետ ակնբախ է՝ եռակի ցածր:

Տավուշ գյուղից ոչ հեռու հիշատակվում է Ալիբեյլու գյուղը, որը բնակեցված էր թաթլու ցեղով: Այստեղ հաշվառված էին 15 հարկատուներ: Վերջիններս վճարում էին 9000 աքչե³²⁵: Այս ցեղի ներկայացուցիչները՝ 14 հարկատու, բնակվում էին նաև Իմամքուլիբեք գյուղում և վճարում 12000 աքչե հարկ³²⁶:

³²³ COA, No. 903, էջ 251:

³²⁴ Նույն տեղում, էջ 252:

³²⁵ Նույն տեղում, էջ 253:

³²⁶ Նույն տեղում, էջ 241: Հարկամատյանում Իմամքուլիբեք գյուղը տեղ է գտել Հասանու նահիյեի ենթաբաժնում, սակայն հստակ նշված է, որ այն պատկանում է Տավուշին:

Դուրախան գյուղը բնակեցված էր օքսուզլու ցեղով և ուներ 25 հարկատու: Այս ցեղի ներկայացուցիչները երբեմն այցելում էին անմարդաբնակ Սաաթլու՝ և Տավուշին մերձակա Քյոսալար ու Չինար լքված բնակավայրերը: Վերջիններս դեկտեմբեր ամսին քոչում էին նշված վայրերից դեպի Բուզիք՝ և Չենիրաք՝ (հավանաբար համապատասխանում է կուրամերձ շրջաններին, որտեղ ձմեռները համեմատաբար մեղմ են)³²⁷: Նրանց ավելի քիչ գործածական քոչավայրերից էին Ախնջայի նահիյեի կազմում գտնվող Ֆարգալի (Ղարսալի) գյուղը, որտեղ հաշվառված էին 5 հարկատու և Քալիչալի գյուղը, ուր կար 1 հարկատու: Գյուղում հաշվառված անձը Քալիչալիի որդի Քալիչալին էր: Գյուղը նույնպես կրում էր Քալիչալի անունը: Այս իրողությունը, որը հանդիպում է նաև այլ նահիյեների պարագայում, ուշագրավ է նոր տեղանունների առաջացման ու թյուրքականացման տեսանկյունից: Օքսուզլու ցեղին էր պատկանում նաև Ախնջայի նահիյեի դատարկված Վահիդլու գյուղը: Նշված ցեղն օսմանյան գանձարան էր վճարում 25.000 աքչե³²⁸:

Տավուշ նահիյեի տարածքում հաշվառված հաջիալի ցեղն ուներ 39 հարկատու: Համաձայն վավերագրի՝ նրանք որևէ բնակավայր չէին զբաղեցնում: Վարելով քոչվոր կենսաձև՝ ամռանը բարձրանում էին Միափորի լեռներ: Օսմանյան գանձարան նրանց վճարած հարկերը կազմում էին 25.000 աքչե³²⁹:

Մշտական բնակավայր չունեցող ցեղերից էր նաև բայահմադլու ցեղը՝ 18 հարկատուներով, որոնք վճարում էին 6.000 աքչե: Վերջիններս հիմնականում անասնապահությամբ էին զբաղվում՝ պարբերաբար փոխելով բնակության վայրերը: Համանման կենսաձևով էր ապրում նաև 27 հարկատու ունեցող Բինաքլի ցեղը, որն օսմանյան գանձարան էր վճարում 9.000 աքչե³³⁰:

³²⁷ Տե՛ս COA, No. 903, էջ 253–254:

³²⁸ Նույն տեղում, էջ 254–255:

³²⁹ Նույն տեղում, էջ 258:

³³⁰ Նույն տեղում, էջ 258–259:

Տավուշ նահիյեի մահմեդական քոչվոր ցեղերից ամենամեծը կարակոյունլու ցեղն էր՝ 171 հարկատուներով: Նույնանուն ցեղի մասին խոսում է նաև Դոն Խուան Պարսկաստանցին³³¹ նրանց համարելով Սեֆյան պետության հիմքը կազմող միավորներից մեկը: Մեծ է հավանականությունը կարծելու, որ գործ ունենք նույն ցեղի հետ: Թե ե՛րբ են նրանք հայտնվել Տավուշ գետի ավազանի ստորին շրջաններում, դժվար է ստույգ ասել: Ըստ հարկամատյանի՝ նրանք ձմեռում էին Կուրի մոտակայքում, իսկ ամռանը բարձրանում էին Միափորի լեռներ: Բավականին մեծաքանակ այս ցեղը գանձարան էր վճարում ընդամենը 14.000 աքչե³³²:

Ամիրլու ցեղով բնակեցված Արաբլու գյուղն ուներ 22 հարկատու: Ըստ հարկամատյանի՝ բնակավայրը գտնվում էր Կուրի մերձակայքում, իսկ բնակիչներն ամռանը տեղափոխվում էին Ղարաղայայի նահիյե՝ Միափոր գավառ: Այս ցեղը բնակվում էր նաև հարակից Քարախանլու բնակավայրում, որտեղ հաշվառված էին 17 հարկատու: Մոտակայքում գտնվող դատարկ Քուլաջա գյուղը նույնպես պատկանում էր ամիրլու ցեղին, որտեղ նրանք զբաղվում էին հողագործությամբ³³³: Այս վկայությունը ուշագրավ է նրանով, որ տարաբնույթ մահմեդական ցեղերը, որոնք դարերի ընթացքում հաստատվել էին տարածաշրջանում, իրենց կենսագործունեությամբ ունեին ընդգծված տարբերություններ: Մրանց մի մասը փաստորեն XVIII դ. արդեն նստակեցության էր անցել, իսկ մի մասը դեռևս վարում էր քոչվոր կենսաձև: Ամիրլու ցեղը գանձարան էր վճարում 110.000 աքչե³³⁴: Ստացվում է, որ նստակեցությամբ պայմանավորված՝ մյուսների համեմատ բավականին փոքրաքանակ այս ցեղն ավելի շատ հարկ էր

³³¹ St' u Don Juan of Persia, *A shi'ah catholic, 1560-1604*, Translated and Edited with an Introduction by G. Le Strange, London, 1926, էջ 46:

³³² COA, No. 903, էջ 259-261:

³³³ Նույն տեղում, էջ 261-262:

³³⁴ Նույն տեղում, էջ 263:

վճարում: Տավուշ նահիյեի մահմեդական գյուղերն ու ցեղերն օսման-
ան գանձարան էին վճարում ընդհանուր 230.000 աքչե հարկ:

Այսպիսով, համաձայն վավերագրի՝ Տավուշ նահիյեում հաշվառ-
ված էին 7 ցեղեր՝ ամիրլու, օքսուզլու, հաջալի, բայահմադլու, բինաք-
լը, կարակոյունլու և թաթլու: Այս ցեղերի մի մասը մշտական բնակա-
վայր չունեին: Քոչվոր կենսաձև վարում էին նահիյեի թվաքանակով
ամենամեծ՝ կարակոյունլու, բինաքլը, բայահմադլու և հաջիալի ցեղե-
րը: Վերջիններս ամռան ամիսներին բարձրանում էին Միափորի լեռ-
ներ՝ ճմեռելով Կուրի մերձակա շրջաններում: Օքսուզլու ցեղը զբա-
ղեցնում էր 1 բնակավայր՝ Դուրախան գյուղը:

Դաֆթարի կազմողների վրիպակի արդյունքում Ախնջա նահի-
յեին պատկանող և օքսուզլուներով բնակեցված Ֆարգալի (Ղարսա-
լի) և Քալիչալի գյուղերը տեղ են գտել Տավուշ նահիյեի ենթաբաժ-
նում: Թաթլու ցեղը նահիյեում զբաղեցնում էր երկու գյուղեր՝ Ալիբեյ-
լու և Իմամբուլիբեք: Ամիրլու ցեղը հաշվառված էր Կուրի մերձակա
Արաբլու և Քարախանլու գյուղերում:

Մահմեդականներով բնակեցված Խալիֆալու, Շարշափալու և
Քաչարալի կամ Ղարաչալի գյուղերի բնակիչների ցեղային պատկա-
նելության մասին կազմողները հիշատակություն չեն թողել: Մահմե-
դականներով բնակեցված բնակավայրերը թվով 10-ն են, որտեղ հաշ-
վառված էին 119 հարկատուներ: Մշտական բնակավայր չունեցող ցե-
ղերից հաշվառված էին 255 անձ:

Տավուշ նահիյեի ցածրադիր և կուրամերձ շրջաններում հաշվառ-
ված մահմեդական ցեղերի նույնականացումը ցույց է տալիս, որ
սրանք որպես կանոն զուլքադարների ու օթուզիքիների տարբեր ճյու-
ղեր են: Ինչպես նշել ենք, Տավուշը և Ջակամը որպես ժառանգական
օլքա տրվել էին հենց զուլքադարներին, ուստի պատահական չէ, որ
նրանց որոշ ենթաճյուղեր արդեն իսկ զբաղեցնում էին Տավուշի հար-
թավայրային շրջանները: Թաթլուների ցեղանունը պահպանվել է
Իսկանդեր Մունշիի հիշատակած Ալի Սուլթան Թաթի-օղլու Ջուլքա-

դար³³⁵, Ասլամն Խան Թաթի-օղլու Ջուլքադար³³⁶, Շահվալի Սուլթան Թաթի-օղլու Ջուլքադար³³⁷, Շահրոլս Բեգ Թաթի-օղլու Ջուլքադար³³⁸ անունների մեջ: Մունշին, կողք կողքի դնելով թաթիօղլու և զուլքադար տոհմանունները, կարծես ակնարկում է թաթլուների՝ զուլքադարների մի ճյուղ/տոհմ լինելու հանգամանքը: Թաթիօղլուի՝ ցեղանուն/տոհմանուն լինելու մասին է հուշում օղուլ՝ որդի բառի նշանակությունը, որ տվյալ դեպքում յուրահատուկ ցեղանվանակերտ/ազգանվանակերտ մասնիկ է:

Նույն սկզբունքը կիրառված ենք տեսնում նաև Տավուշում հաստատված հաջիալի ցեղի պարագայում, երբ նա խոսում է Մուհամադ Խան Հաջիար Ջուլքադարի մասին³³⁹: Մեկ այլ դեպքում, անդրադառնալով զուլքադար ցեղին, որպես նրանց նշանավոր ներկայացուցիչներ հիշատակում է Մոստադամ Սուլթան Հաջիարին³⁴⁰: Այս դեպքում հաջիարների զուլքադարական ճյուղ լինելու մասին է վկայում անձնանվան մեջ հաջիարի հոգնակիակերտ գործածությունը³⁴¹: Մուհամադ Խալիֆա Հաջիար Ջուլքադարը եղել է նախ Աստարաբադի, ապա Շիրվանի կառավարիչը: Ամիրությունը նույնպես հայտնի են որպես զուլքադարների ճյուղ³⁴²:

Տավուշ նահիյեում հաշվառված բայահմադյունները և կարակոյունլուները օթուզիքիների կազմում ընդգրկված ցեղերից էին: Մունշին այս ցեղային միությունը կոչում է օթուզիքի կամ օթուզիքի թուրքմեններ³⁴³: Ըստ հեղինակի՝ այն Ղարաբադի շրջակայքի (հա-

³³⁵ Տե՛ս Eskandar Beg Monshi, vol. I, էջ 121, 154, 179:

³³⁶ Տե՛ս Eskandar Beg Monshi, vol. II, էջ 915:

³³⁷ Տե՛ս Eskandar Beg Monshi, vol. I, էջ 216:

³³⁸ Նույն տեղում, էջ 333:

³³⁹ Նույն տեղում, էջ 339:

³⁴⁰ Eskandar Beg Monshi, vol. II, p. 1310.

³⁴¹ Մեկ անգամ էլ Մունշին շամսադինյունների ու հաջիարների անունները կողք կողքի է գրում, որը Ռոջեր Սավորին ծանոթագրել է որպես զուլքադարների երկու ճյուղեր, տե՛ս Eskandar Beg Monshi, vol. 2, էջ 839 և նույն էջի ծանոթագրությունը:

³⁴² *Şamşaddil nahiyəsinin kameral təsviri. 1860-cı il* (Tərcümə, tərtib, ön söz və qeydlərin müəllifi Nazir Əhmədli), s. 10.

³⁴³ Տե՛ս Eskandar Beg Monshi, vol. II, էջ 848:

վանաբար Կուրի ու Արաքսի հովտային շրջանների) 32 ցեղերի միավորումն է, այդ պատճառով էլ ստացել է օթուզիքի՝ թուրքերենից թարգմանաբար՝ երեսուներկու անունը:

Հիմք ընդունելով Սեֆյան արքունի գործերին քաջատեղյակ հեղինակի տեղեկությունները՝ կարելի է կարծել, որ այս ցեղային միավորման մեջ ամենազդեցիկը եղել են ջավանշիրները, որոնք էլ գուցե իրենց շուրջն են համախմբել մյուսներին³⁴⁴: XVI դ. վերջում Սեֆյան Իրանի ու Օսմանյան կայսրության հակամարտության նոր թատերաբեմ դարձավ Շիրվանը, որի և շրջակայքի պաշտպանության և օսմանցիների հնարավոր առաջխաղացումը կասեցնելու նպատակով որոշում է կայացվում դաջարներին, օթուզիքիներին և Ղարաբաղի շրջակայքի ցեղերին ուղարկել Շիրվան³⁴⁵: Այստեղից էլ կարող ենք ենթադրել, որ օթուզիքիների կազմում գտնվող բայահմադլուները հետագայում անցել են Տավուշ: Հետաքրքիր է, որ 1727 թ. օսմանյան դաֆթթարի համաձայն՝ բայահմադլուների մի մասը հաշվառված էր Ղարաբաղի հարթավայրային շրջաններում և ձմեռում էր Կուրի ափերին³⁴⁶: Ըստ ամենայնի՝ նրանց հետ Հայաստանի սահմաններին են մոտեցել նաև ցեղային միության մաս կազմող կարակոյունլուները: Ինչ վերաբերում է օթուզլուներին՝ աղբբեջանցի հետազոտողները նրանց համարում են շամսադդիլուների մի ճյուղը³⁴⁷:

դ) Լքված գյուղեր

Նահիլյեի դատարկ բնակատեղիները թվով 10-ն են՝ Սաաթլու, Քյոսալար, Քուլաջա, Ղամիշլու³⁴⁸, Քըզըլ Բուլաք³⁴⁹, Քամալ³⁵⁰, Գիր-

³⁴⁴ Eskandar Beg Monshi, vol. II, էջ 1068:

³⁴⁵ Տե՛ս Eskandar Beg Monshi, vol. I, էջ 389:

³⁴⁶ COA, No. 903, էջ 511:

³⁴⁷ Տե՛ս Տամշադդիլուների կամերալ տեսարան, էջ 10-11:

³⁴⁸ COA, No. 903, էջ 255:

³⁴⁹ Նույն տեղում:

գանթալա, Քարաչլու, Յանըքչինար, Չինար³⁵¹: Այս գյուղերի դատարկ լինելը կարելի է պայմանավորել մի քանի հանգամանքներով. 1. բնակչության ներքին միգրացիա, 2. լեզգիների արշավանքներ, 3. պարսկա-օսմանյան պատերազմներ, 4. պատմական տարբեր շրջափուլերում տարածաշրջանը պատուհասած բնական աղետներ, սով ու համաճարակներ: Վավերագրում առկա են նաև անուղղակի տեղեկություններ՝ կապված այս կամ այն բնակավայրի անմարդաբնակ լինելու հետ: Քարաչլու բնակավայրը հիշատակվում է որպես վաղուց դատարկված³⁵²: Մովսես հայաբնակ գյուղին մերձակա Ղամիշլու գյուղի պարագայում նշված է, որ այն ավերվել է դարաչոռուների կողմից³⁵³: Այս վկայությունն ուշագրավ է այն առումով, որ դեպի հյուսիսարևելյան Հայաստան դարաչոռուների արշավանքի մասին հաղորդումներն այլ աղբյուրներով չեն հաստատվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրդական այս ցեղի բնակության վայրը Տավուշից ու հարակից գավառներից բավականին հեռու էր³⁵⁴ գտնվում՝ կարելի է ենթադրել, որ հարկամատյանի կազմողները նկատի են ունեցել նախընթաց տարիներին տարածաշրջանն ավերած ու կողոպտած լեզգիներին: Ամենայն հավանականությամբ, նրանք լեզգիներին դարաչոռու են կոչել: Այս պարագայում չի բացառվում, որ «դարաչոռու» բառը գործածված է ոչ թե որպես էթնոնիմ, այլ սոցիոնիմ, այն է՝ ասպատակող ու ավարառու ցեղի ընդհանրական անուն:

³⁵⁰ COA, No. 903, էջ 256:

³⁵¹ Նույն տեղում:

³⁵² Այս բնակավայրը հավանաբար գտնվում էր ներկայիս ԱՀ Թովուզ քաղաքի շրջակայքում:

³⁵³ COA, No. 903, էջ 255:

³⁵⁴ Դաֆթարի կազմողների տվյալներով՝ դարաչոռուները անհնազանդ ու ավարառու ցեղ էին՝ մոտ 400 տուն, որոնք բնակվում էին Արաքս գետից Քաշաթաղ ընկած շրջաններում տե՛ս COA, No. 903, էջ 519:

Դատարկ գյուղերի շարքում միմյանց կից Քամալ և Քըզըլ Բուլաք (Կարմիրաղբյուր³⁵⁵) գյուղերի հիշատակվելը նույնպես կարելի է պայմանավորել լեզգիների արշավանքներով: Բանն այն է, որ հարկամատյանի կազմումից մոտ 26 տարի առաջ Քամալ գյուղում կար գործող եկեղեցի, որի գոյությունը ինքնստիճյան հուշում է նրա բնակեցված լինելու մասին: Նախքան պարսկա-օսմանյան ռազմական գործողությունները, տարածաշրջան քանիցս արշավել են լեզգիները: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ նշված երկու գյուղերը նույնպես արժանացել են Ղամիշլի գյուղի ճակատագրին՝ ավերվելով ու մարդաթափ լինելով լեռնականների կողմից:

Հարթավայրային՝ կուրամերձ շրջանների դատարկված բնակավայրերից են Կոզեն գյուղին մոտ գտնվող Քուլաջա գյուղը, ինչպես նաև Տավուշ գետի միջին հոսանքի տարածքում գտնվող Սաաթլու և Քյոսալար³⁵⁶ գյուղերը: Վերջին երկու գյուղերը, համաձայն հարկամատյանի հեղինակների, երբեմն օքսուզլու ցեղի ներկայացուցիչներն էին զբաղեցնում³⁵⁷: Ավելի բարձրադիր շրջանների անմարդաբնակ գյուղերն են Գիրզան, Յանքչինար և Չինար գյուղերը:

Ավերված բնակավայրերի մի մասն օգտագործում էին քոչվոր մահմեդականները: Օրինակ, ավերված Քամալ հայկական գյուղի տարածքն օգտագործում էր օքսուզլու քոչվոր ցեղը³⁵⁸: Նույն կերպ ամիրլու ցեղը երբեմն զբաղեցնում էր Քուլաջա գյուղը: Հետևաբար կարող ենք փաստել, որ հայկական լքված գյուղերը հետզհետե յուրացվում էին մահմեդական բնակչության կողմից, ինչը բնականաբար փոփոխում էր տարածաշրջանի էթնիկ դիմագիծը:

Այսպիսով, Տավուշ նահիյեում ընդհանուր առմամբ հիշատակված է 27 գյուղ: Այս գյուղերից 10-ը լքված ու անմարդաբնակ էին:

³⁵⁵ Բայաբեկ Մեյանը կարծիք է հայտնում, որ գյուղի անվանումը կարող է ունենալ 400–500 տարվա վաղնություն: Տե՛ս Բ. Մեյան, *Կարմիրաղբյուր*, Երևան, 2001, էջ 7:

³⁵⁶ Հավանաբար համապատասխանում է Ներքին Կարմիրաղբյուր գյուղին:

³⁵⁷ COA, No. 903, էջ 255:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 256:

Մնացած 17 գյուղերից 7-ն ունեին 225 հարկատու հայ բնակչություն: Մահմեդականների զբաղեցրած 10 գյուղերում հարկատուների թիվը 119 էր: Նահիյեում զանազան քոչվոր ցեղերից հաշվառված է 255 անձ: Հայկական գյուղերը միասին վճարում էին 171000 արչե հարկ, իսկ մահմեդականները՝ 230.000 արչե:

Վավերագրի տվյալների անգամ թոուցիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ բնակչության վճարած հարկերն ավելի շատ էին: Փոխարենը՝ շատ խոսուն օրինակ է մահմեդական կարակոյունլու ցեղը, որն ամենամեծաքանակը լինելով՝ ինչպես նշվեց օսմանյան գանձարան էր վճարում ընդամենը 14.000 արչե:

Վերցնելով հայ հարկատուների թիվը՝ փորձենք ստանալ Տավուշ նահիյեի հայ բնակչության մոտավոր թիվը³⁵⁹: Ընտանիքի միջին թվաքանակ ընդունելով 7-ը³⁶⁰, ընդհանուր կստացվի 1.575 հոգի:

ե) Ախրնջայի (Աինջի) նահիյե

Նահիյեի առաջին գյուղը Չինարն է, որն ուներ 5 հարկատու.

- | | |
|---------------------------|--------------------------|
| 1. Մանուչեիր՝ որդի Նազարի | 4. Մանուել՝ որդի Բաղիի |
| 2. Արութին՝ նրա եղբայրը | 5. Արութին՝ որդի Ալիխանի |
| 3. Նազար՝ որդի Մանուչեիրի | |

Այս բնակավայրը համապատասխանում է ներկայիս Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Չինարի գյուղին³⁶¹: Գրավոր

³⁵⁹ Հարկամատյանում ամուրի անձանց մասին տեղեկություններ չեն հանդիպում, հետևաբար կարծում ենք, որ հարկատուների թիվը համապատասխանում է ընտանիքների քանակին:

³⁶⁰ Մամազիտական գրականության մեջ քննվող ժամանակաշրջանի ընտանիքի միջին թվաքանակը տատանվում է 5-10 միջակայքում: Որպես հայկական ընտանիքի միջին թվաքանակ նախընտրել ենք 7-ը, որը կարծում ենք ավելի ընդունելի է: Տե՛ս Ա. Մելքոնյանի, Գ. Երանյանի, Մ. Մալխասյանի, նշվ. աշխատությունները:

³⁶¹ Չինար գյուղի հիշատակումը վավերագրում կարևոր է՝ հստակեցնելու այդ գյուղի անվան հետ կապված որոշ թյուր մեկնաբանություններ: Տե՛ս Գ. Ղարախանյան, *նշվ. աշխ.*, էջ 13:

աղբյուրներում գյուղի մասին վկայություններ առկա չեն: Սակայն հաշվի առնելով Տավուշի նշանավոր հոգևոր կենտրոն Խորանաշատին մոտ լինելու հանգամանքը, անկասկած այս բնակավայրը բնակեցված է եղել դեռ վաղուց: Չինար գյուղից գանձվում էր 600 արչե իսպիենջ՝ 120 արչե մեկ շնչի հաշվով: Մնացյալ հարկերի հետ միասին ընդհանուր վճարվում էր 9000 արչե հարկ³⁶²:

Գյուղ Դարդադիս՝ (Դիղեդիս)՝ ուներ 26 հարկատու.³⁶³

- | | |
|---------------------------|-------------------------------|
| 1. Ղազար՝ որդի Թորոսի | 15. Նուրի՝ որդի Խաչատուրի |
| 2. Սարգիս՝ նրա որդին | 16. Բանու՝ նրա որդին |
| 3. Մաթևոս՝ որդի Առաքելի | 17. Արուֆին՝ որդի Սարգսի |
| 4. Իսախան՝ որդի Սարգսի | 18. Ավագ՝ նրա եղբայրը |
| 5. Գիորգի՝ նրա որդին | 19. Ղազար՝ որդին Վարդանի |
| 6. Մկրտիչ՝ որդի Մարտիրոսի | 20. Մելի՝ որդի Մարամգայի՝ |
| 7. Սարգիս՝ նրա եղբայրը | 21. Հովհաննես՝ որդի Մարտիրոսի |
| 8. Հակոբ՝ որդի Մարատի | 22. Պետրոս՝ նրա որդին |
| 9. Մանուել՝ որդի Մխիթարի | 23. Ատոմ՝ որդի Սարգսի |
| 10. Ավանես՝ որդի Մխիթարի | 24.՝ որդի Մարգարեի |
| 11. Նազար՝ որդի Բաղդասարի | 25. Պապ՝ որդի Գասպարի |
| 12. Մխիթար՝ որդի Սարգսի | Սարգիս՝ որդի Գասպարի |
| 13. Հովհաննես նրա որդին | |
| 14. Մխիթար՝ որդի Նազարի | |

Գյուղի անվան տարօրինակ գրությունն ու հնչողությունն առաջին հայացքից դժվար վերծանելի է թվում: Սակայն գյուղի տեղորոշմանը օգնության է հասնում մի բանավոր ավանդագրույց: Ներկայիս Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Արծվաբերդ գյուղը տեղացիները հաճախ անվանում են «Տղատես»: Տարեցները³⁶⁴ պատմում են, որ ժամանակին Արծվաբերդի բնակիչներն ապրում էին ներ-

³⁶² COA, No. 903, էջ 264:

³⁶³ Նույն տեղում, էջ 264–265:

³⁶⁴ Այս բանավոր պատմությունը տեղացիներից լսել ենք 2019 թ. աշնանը՝ Բերդ խոշորացված համայնքում դաշտային հետազոտությունների ժամանակ:

կայիս գյուղից քիչ հեռու գտնվող վայրում: Անբացատրելի հանգամանքների բերումով նորածին տղաները սկսում են մահանալ և գյուղում խուճապ է առաջանում: Գյուղացիներից մեկն իր ընտանիքով տեղափոխվում և բնակություն է հաստատում ներկայիս գյուղի տարածքում: Շատ չանցած վերջինիս ընտանիքում սկսում են ծնվել տղաներ, որոնք չեն մահանում: Նախկին բնակավայրի համագյուղացիներից ոմանք դրանում համոզվելու նպատակով գալիս են իրենց համագյուղացուն տեսության: Ճանապարհին հանդիպող մարդկանց այն հարցին թե ո՛ր են գնում, վերջիններս պատասխանում են «տղատեսի» այսինքն՝ տղա տեսնելու: Կարճ ժամանակ անց նախկին գյուղից այս նոր բնակատեղի են տեղափոխվում շատերը, և այդ գյուղը սկսում է կոչվել Տղատես: Այսպիսով, օսմանյան վավերագրի Դիդեդիս, Դաբդադիս թարգմանությունը և հարակից գյուղերի ճշգրիտ տեղորոշումը կասկած չի թողնում, որ դա Արծվաբերդն է:

Տղատես գյուղից գանձվում էր 3.120 աքչե իսփեննջ՝ մեկ շնչի հաշվով 120 աքչե: Գործում էր նաև 2 ջրաղաց, որից հարկվում էր 120 աքչե: Ընդհանուր հարկերը միասին կազմում էին 26.000 աքչե³⁶⁵:

Գյուղ Չորաթան, ուներ 27 հարկատու.

- | | |
|-----------------------------|-----------------------------|
| 1. Իսախան՝ որդի Հակոբի | 10. Ալիխան՝ որդի Սարգսի |
| 2. Եղիա՝ նրա որդին | 11. Արուսին՝ նրա որդին |
| 3. Կարապետ՝ որդի Հովսեփի | 12. Մելիքսեթ՝ որդի Բաբախանի |
| 4. Միրզա՝ նրա որդին | 13. Սարուխան՝ որդի Նազարի |
| 5. Վարդան՝ որդի Վարդանի | 14. Հովհաննես՝ նրա որդին |
| 6. Մխիթար՝ որդի Նազարի | 15. Խաչատուր՝ որդի Կարախանի |
| 7. Սարուխան՝ նրա որդին | 16. Մխիթար՝ նրա որդին |
| 8. Բուրդամար՝ որդի Կարախանի | 17. Մանուել՝ որդի Ավագի |
| 9. Ավագ՝ նրա որդին | 18. Բադալ՝ նրա որդին |
| | 19. Մխիթար՝ որդի Խաչատուրի |
| | 20. Սահակ՝ նրա որդին |

³⁶⁵ COA, No. 903, էջ 265:

- | | |
|--------------------------|---------------------------|
| 21. Սարգիս՝ որդի Անտոնի | 25. Մկրտիչ՝ նրա եղբայրը |
| 22. Սարգիս՝ որդի Մրավի | 26. Սարգիս՝ որդի Մարգարեի |
| 23. Բաղի՝ որդի Ղարագյոզի | 27. Մախնամ՝ որդի Վարդանի |
| 24. Քահանա Ներսես՝ որդի | |

Մխիթարի

Չորաթան գյուղն այս նահիյեի համեմատաբար խոշոր բնակավայրերից էր: Ինչպես նշել ենք, այստեղ նախորդ դարում՝ 1682 թ., կառուցվել էր նոր եկեղեցի: Հայկական աղբյուրներում այդ բնակավայրի մասին այլ տեղեկություններ չկան: Չորաթան գյուղը վճարում էր 3.240 աքչե իսփենջ՝ 120 իսփենջ մեկ շնչի հաշվով: Այստեղ կար նաև մեկ ջրաղաց, որից հարկվում էր 120 աքչե: Գյուղից գանձվող ընդհանուր հարկերը կազմում էին 30.000 աքչե³⁶⁶:

Ախնջայի նահիյեի ոչ հայաբնակ գյուղերից հիշատակվում է Ղուշու բնակավայրը (Ղուշանջը, Քուշանջը): Գյուղի բնակիչները իրենց արտերը ոռոգում էին Ասրիք և Ղաջաբ տեղանքներից: Գյուղում հաշվառված են 26 հարկատուներ, 2 ջրաղաց: Գյուղից գանձվող հարկերը կազմում էին 26.000 աքչե³⁶⁷: Հաջորդ և վերջին մահմեդական բնակչություն ունեցող Ղուշու Օջաքլու գյուղն էր՝ 8 հարկատուներով: Նրանք վճարում էին 21000 աքչե հարկ³⁶⁸: Այս գյուղերի բնակիչների ցեղային պատկանելության վերաբերյալ հարկամատյանում տվյալներ առկա չեն: Ախնջայի նահիյեում անմարդաբնակ, դատարկված գյուղերը 10-ն էին: Դրանք են՝ Ալիջալու³⁶⁹, Զողալու, Ահմադլուբան³⁷⁰, Մեհրաբ, Գոշիդեյիրման, Չիֆթ, Ալմալըք, Բիչանաք, Մեծ Ախնջա, Փոքր Ախնջա³⁷¹: Այս գյուղերի մի մասը դժվար է տեղորոշել: Վերջին երկու գյուղերը համապատասխանում են Բերդ խոշորացված

³⁶⁶ COA, No. 903, էջ 265:

³⁶⁷ Նույն տեղում, էջ 266:

³⁶⁸ Նույն տեղում, էջ 268:

³⁶⁹ Նույն տեղում, էջ 263:

³⁷⁰ Նույն տեղում, էջ 266:

³⁷¹ Նույն տեղում, էջ 267:

համայնքի Այգեձոր գյուղից 5-6 կմ արևելք ընկած գյուղատեղիներին³⁷²: Ինչ վերաբերվում է Մեհրաբ գյուղին՝ Ախնջի գետի օժանդակ Խնձորուտ գետի հոսանքում, ջրամբարից մոտ 1,5 կմ հյուսիս-արևելք ընկած տեղանքն այժմ էլ հայտնի է Մեհրաբ անունով: Այժմայլըք (այժմ՝ թուրքերենից թարգմանաբար նշանակում է խնձոր) բնակավայրի անունը հուշում է, որ այն նույնպես պետք է գտնվեր Խնձորուտ գետի ավազանում:

Այսպիսով, Ախնջայի նահիյեում եղել է ընդհանուր 15 բնակավայր: Այս բնակավայրերի մեծամասնությունը՝ 10 գյուղեր, լքված էին ու անարդարնակ: Մնացած 5 գյուղերից 3-ը հայաբնակ էին, 2-ը բնակեցված էին մահմեդականներով: Հայկական 3 գյուղերում հարկատուների թիվը միասին կազմում էր 58 անձ: Մահմեդական բնակչությամբ երկու գյուղերը միասին ունեին 34 հարկատու: Հայաբնակ երեք գյուղերը միասնաբար օսմանյան գանձարան էին վճարում 65.000, իսկ մահմեդական բնակչությունը 47.000 արքե հարկ: Ընտանիքի միջին թվաքանակ ընդունելով 7-ը, գյուղախմբի հայերի մոտավոր թիվը կստացվի 406 անձ:

զ) Հասանսուի նահիյե

Այս նահիյեի մարդաշատ բնակավայրերից է Բալլուղայա (Բալլուքիա, Բալլըղայա, Բալլըքիա) գյուղը, որն ուներ 29 հարկատու.

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1. Ավագ՝ որդի Սահակի | 7. Կիրակոս՝ նրա եղբայրը |
| 2. Սարգիս՝ որդի Ասատուրի | 8. Իսախան՝ որդի Դանաբեքի |
| 3. Հովսեփ՝ նրա որդին | 9. Մելիք՝ որդի Սարխանի |
| 4. Օշին՝ որդի Ներսեսի | 10. Ավագ՝ որդի Դավթի |
| 5. Մխիթար՝ որդի Թանանի՝ | 11. Աբրահամ՝ նրա որդին |
| 6. Բաբա՝ որդի Սարգսի | 12. Բաղի՝ որդի Գրիգորի |

³⁷² Տե՛ս Ի. Չանգլյան, *Այլ. աշխ.*, էջ 42:

- | | |
|----------------------------------|-----------------------------|
| 13. Միտիչ՝ նրա եղբայրը | 21. Վարդան՝ որդի Հովհաննեսի |
| 14. Գրիգոր՝ որդի Հովհան-
նեսի | 22. Մելքոմ՝ որդի Մալամի՝ |
| 15. Մխիթար՝ նրա որդին | 23. Ալիխան՝ որդի Սարգսի |
| 16. Հովհաննես՝ որդի Ալի-
խանի | 24. Հակոբ՝ նրա որդին |
| 17. Իսախան՝ որդի Հակոբի | 25. Հովհաննես՝ որդի Մխիթարի |
| 18. Ազատ՝ որդի Նազարի | 26. Հովհաննես՝ որդի Մխիթարի |
| 19. Մկրտիչ՝ որդի Սարխանի | 27. Անտոն՝ որդի Գրիգորի |
| 20. Սարխան՝ նրա որդին | 28. Սարգիս՝ որդի Սարխանի |
| | 29. Հովհաննես՝ որդի Գրիգորի |

Աղբյուրների բացակայության պատճառով այս բնակավայրի տեղորոշումը դժվար է: Գյուղից հարկվող մշակաբույսերի տեսակները հուշում են, որ այն տեղակայված էր բարձրադիր շրջանում: Կարող ենք միայն ենթադրել, որ այն գտնվում էր Վարագաջուր գետի վերին հոսանքում՝ ներկայիս Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Վերին Ծաղկավան գյուղից վերև, որտեղ պահպանվել են մի քանի գյուղատեղի: Գյուղից գանձվում էր 3.480 աքչե իսփենջ՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով: Բոլոր հարկերը ընդհանուր կազմում էին 27.000 աքչե³⁷³:

Գյուղ Մուխարախաչ (Մոխարախաչ), ուներ 12 հարկատու.

- | | |
|---------------------------|-----------------------------|
| 1. Ուլուխան՝ որդի Մկրտչի | 7. Իսախան՝ որդի Կարապետի |
| 2. Շմավոն՝ նրա եղբայրը | 8. Սարուխան՝ նրա եղբայրը |
| 3. Մկրտիչ՝ որդի Ուլուխանի | 9. Մխիթար՝ որդի ... |
| 4. Հակոբ՝ որդի Բաբայի | 10. Հակոբ՝ որդի Սարուխանի |
| 5. Սահակ՝ որդի Սարգսի | 11. Բաղի՝ որդի Մելքոնի |
| 6. Կարապետ՝ նրա որդին | 12. Խաչատուր՝ որդի Բալասանի |

Այս բնակավայրը նույնպես չենք կարող հստակ տեղորոշել: Կըրկին դատելով մշակաբույսերի տեսակներից՝ կարծում ենք, բարձրա-

³⁷³ COA, No. 903, էջ 242-243:

դիր բնակավայր է: Կարելի է ենթադրել, որ այն համապատասխանում է Վերին Ծաղկավան գյուղից մոտ 1 կմ հարավ գտնվող Բախրիխաչ գյուղատեղին: Գյուղից գանձվում էր 1.440 աքչե իսփենջ՝ մոտ 120 աքչե շնչի հաշվով: Բնակավայրում հարկվում էին նաև երկու ջրաղացները՝ 240 աքչե: Բոլոր հարկերը միասին կազմում էին 30.000 աքչե³⁷⁴:

Գյուղ Մաթոս, ուներ 11 հարկատու.

- | | |
|----------------------------------|----------------------------|
| 1. Հակոբ՝ որդի Օհանի | 6. Զաքարե՝ նրա որդին |
| 2. Կարապետ՝ որդի Օհանի | 7. Մելքոմ՝ որդի Մաթևոսի |
| 3. Պետրոս՝ որդի Վարդևանի | 8. Խաչատուր՝ որդի Մխիթարի |
| 4. Հովհաննես՝ որդի Ամիր-
խանի | 9. Օհան՝ որդի Վարդանի |
| 5. Սարգիս՝ որդի Վելիխանի | 10. Մխիթար՝ նրա որդին |
| | 11. Թահրան՝ որդի Բաղդասարի |

Բնակավայրի տեղադրությունը պարզ չէ: Հարկատուները վճարում էին 1.080 աքչե իսփենջ՝ մոտ 98 աքչե մեկ շնչի հաշվով: Բոլոր հարկերը միասին կազմում էին 15.000 աքչե³⁷⁵:

Գյուղ Խաչբուլաղ (Խաչաղբյուր), ուներ 13 հարկատու.

- | | |
|---------------------------------|------------------------------|
| 1. Զանիկ՝ որդի Ալիխանի | 7. Հովհաննես՝ որդի Մխիթարի |
| 2. Ավագ՝ նրա եղբայրը | 8. Հովհաննես՝ որդի Սարուխանի |
| 3. Իսախան՝ որդի Կարա-
խանի | 9. Մանուել՝ նրա որդին |
| 4. Բեդի՝ որդի Հովհաննեսի | 10. Բաղի՝ որդի Հակոբի |
| 5. Հովսեփ՝ որդի Հովհան-
նեսի | 11. Օհան՝ որդի Մելքոմի |
| | 12. Միրզա՝ որդի Քուլիի |
| | 13. Ղազար՝ որդի Հովհաննեսի |
| 6. Առաքել՝ որդի Դավթի | |

Բնակավայրի տեղագրությունը որոշելու հարցում օգնում է Մակար Բարխուդարյանցի մի հիշատակություն: Նկարագրելով Շխմու-

³⁷⁴ COA, No. 903, էջ 243:

³⁷⁵ Նույն տեղում, էջ 244:

րատի վանքը՝ նա գրել է. «Վանքիցս բաւական վերեւ վտակածորիս ձախ կողմում կայ Քարագեղ, Աղսու եւ Խաչբուլաղ անուն գիւղատեղի, հանգստարան եւ կիսաւեր ու աներակ եկեղեցիներ»³⁷⁶: Հետևաբար կարող ենք արձանագրել, որ գյուղը գտնվում էր Վարագաջուր գետի վերին ավազանում՝ Շխմուրադի վանքից որոշ հեռավորության վրա: Հավանաբար, գյուղն իր այդ անվանումը ստացել է՝ վանքի հարևանությամբ գտնվելու պատճառով: Գյուղի հարկատուները վճարում էին 1560 աքչե իսփենջ՝ 120 մեկ շնչի հաշվով: Խաչբուլաղ գյուղում կար նաև մեկ ջրաղաց, որից գանձվում էր 120 աքչե հարկ: Ընդհանուր հարկերը միասին կազմում էին 12.000 աքչե³⁷⁷:

է) Հասանսուի նահիյեի մահմեդական բնակչությունը

Հասանսուի նահիյեի ցածրադիր շրջանները բնակեցված էին մահմեդականներով, որոնց զգալի մասը պատկանում էր գյոջալի ցեղին: Այս ցեղի ներկայացուցիչները, համաձայն 1593 թ. համառոտ դաֆթարի, բնակվում էին Բարդայի շրջակայքում: Սակայն ժամանակի ընթացքում նրանք հայտնվեցին Վարագաջուր գետի ստորին հոսանքի շրջանում և աստիճանաբար ամուր արմատներ գցեցին³⁷⁸: Թյուրքական ցեղերին նվիրված ուսումնասիրություններով հայտնի Ֆարուք Սյումերը գյոջալիներին համարում է օթուզիքների տոհմերից մեկը³⁷⁹: Վերջիններիս զբաղեցրած գյուղերից առաջինը հիշատակվում է Գյոջալու գյուղը՝ 69 հարկատուներով: Հետաքրքրական է, որ սրանք նստակյաց էին, իսկ գյուղի մշակաբույսերի ցանկում առկա էր նաև բամբակ: Նույն ցեղի բնակիչները հաշվառված էին նաև

³⁷⁶ Բարխուտարեանց, էջ 331:

³⁷⁷ COA, No. 903, էջ 244–245:

³⁷⁸ *Sl'ü Ganca-Qarabağ əyalətinin icmal dəftəri*, էջ 11:

³⁷⁹ Faruk Sümer, *Safevi Devletinin kuruluşu ve gelişmesinde Anadolu Türklerin rolü (Şah İsmail ile Halifeleri ve Anadolu Türkleri)*, Ankara, 1976, s. 198.

հարևան Ուղուրլու գյուղում՝ 13 հարկատու: Մուլլա գյուղը նույնպես բնակեցված էր գյոջալիներով և ուներ 2 հարկատու: Հաջորդը Մահմեդուլու գյուղն է՝ 15 հարկատուներով: Գյոջալու ցեղին էր պատկանում նաև Ղայիբ գյուղը, որն ունեցել է 1 հարկատու: Այս միակ հարկատուի հոր անունը Ղայիբ էր, ինչը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու մեր այն ենթադրությունը, որ եկվոր թյուրքական բնակչությունը հետևողականորեն թյուրքականացնում էր տեղի բնակավայրերը՝ հորինելով նոր անուններ: Թյուրքական անունների գործածությունը բնականաբար ավելի հարազատ էր հարկահաններին և անշուշտ խրախուսվում էր օսմանյան պաշտոնյաների կողմից:

Գյոջալիներով էր բնակեցված նաև Վալիոզա գյուղը՝ 3 և Փիրմահամմադ գյուղը՝ 5 հարկատուներով: Գյոջալիներին պատկանող գյուղերը միասին գանձարան էին վճարում 135 հազար աքչե հարկ³⁸⁰: Այս ցեղի ներկայացուցիչների զբաղեցրած տարածքի վերաբերյալ հարկամատյանում առկա են ուշագրավ տվյալներ: Վերջիններս փաստորեն բնակվում էին Վարագաջուր գետի ստորին հոսանքի շրջանում և սահմանակից էին Ղազախի սանջակին: Բացի Ղազախի սանջակից, այստեղ հիշատակվում է նաև Քասամալ գետի մոտակայքում ընկած Շամշադինը, որտեղ նույնպես բնակվում էին գյոջալիները³⁸¹:

Հասանսուի նահիյեի մյուս մահմեդական ցեղը թաթլուն էր, որը ինչպես նշեցինք զուլքադար ցեղի մի ճյուղն էր և հաշվառված էին նաև Թավուս նահիյեում: Սրանք հիմնականում զբաղեցնում էին գյոջալի ցեղի բնակավայրերից դեպի վեր՝ ներկայիս ՀՀ Տավուշի մարզի Բերդի խոշորացված համայնքի Պառավաքար գյուղից ներքև ընկած շրջանները: Թաթլու ցեղով բնակեցված էին Թաթլու՝ 24, Աշաթան՝ 1, Ամիրդուլու՝ 23, Միքայելիի և Յարբադալիի՝ 40 հարկատու ունեցող

³⁸⁰ COA, No. 903, էջ 233–237:

³⁸¹ Նույն տեղում, էջ 237:

գյուղերը: Թաթուրու գետով բնակեցված այս 5 գյուղերը միասին վճարում էին 68.000 արչե հարկ³⁸²:

Հասանսուի մահմեդական բնակչություն ունեցող գյուղերից էր Բայազեդլու բնակավայրը: Այստեղ հաշվառված 32 հարկատուները պատկանում էին բայազիդլու գեղին: Գյուղից գանձվում էր 52.000 արչե հարկ³⁸³:

Նահիյեի մշտական բնակավայր չունեցող քրդլիհաջու գեղից հաշվառվել են 40 անձ: Մրանք ձմեռն անց էին կացնում Քուլաղաջ և Քարիչլու անունը կրող ձմեռակացերում, իսկ ամառները բարձրանում էին Համզա³⁸⁴ լեռան շրջակայք: Այս գեղի վճարած հարկերի մասին տվյալներ առկա չեն³⁸⁵:

ը) Անմարդաբնակ գյուղեր

Հասանսուի նահիյեում անմարդաբնակ գյուղերի քանակը հասնում է 25-ի: Դրանք էին՝ Աղունաք, Մեծ Գյունաշ, Փոքր Գյունաշ, Քուլիջան, Քըլըչահ, Գյոքքիլիսա, Քուլքենդի, Քուզլու, Հարամ հնուց ավեր, Ալիխանքենդի, Ղուզան, Բարսում, Համզաքենդ³⁸⁶, Ղարամքենդ, Շեյխմուրադ՝ վաղուց ավեր՝ Մաթոս, (Մոխրախաչի մոտ) Սալքիդ, Մուլա Նադդալի, Թադ, Բոյալջը, Սաքլաշեն, Բիշաք, Թորոս, Ալիալիդ, Հախումքենդի, Քոնախ Գյորմեզ³⁸⁷: Այս բնակավայրերի մի մասի տեղորոշումը ձեռքի տակ եղած աղբյուրներով

³⁸² COA, No. 903, էջ 237–241:

³⁸³ Նույն տեղում, էջ 242:

³⁸⁴ Լեռը գտնվում է Տավուշի մարզում՝ Աղստև և Վարազաջուր գետերի ջրբաժան Վարազի (Հախում, Պայտապար) լեռնաշղթայի գագաթներից մեկն է:

³⁸⁵ COA, No. 903, էջ 248:

³⁸⁶ Այս գյուղը հիշատակվում է նաև 1728 թ. Թիֆլիսի վիլայեթի դաֆթարում, որտեղ կազմողներն այն ներառել են այլ նահիյեի կազմում: Տե՛ս *Тифлис эвалетинин муфәссәл дәфтери*, Борчалы во Газях (1728—чи ил), Кириш, тәрчүмә вә гејдләрин муәллифи тарих елмләри намизәди Шаһин Мустафәјев, Бақы, 2001, էջ 241:

³⁸⁷ COA, No. 903, էջ 243–248:

անհնար է: Մեծ և Փոքր Գյունաշ բնակավայրերը հավանաբար գտնվում էին ներկայիս Պատավաքար գյուղից դեպի հյուսիս-արևելք՝ Ներքին Կարմիրաղբյուր տանող ճանապարհից ոչ հեռու: Վավերագրում նշված է, որ այս գյուղերն ավերվել են ղարաչոլունների (լեզգի՞) կողմից³⁸⁸: Հարամ գյուղատեղին գտնվում է Տավուշ գյուղից արևմուտք³⁸⁹, մոտ 3 կմ հեռավորության վրա՝ Վերին Ծաղկավան գյուղից Տավուշ տանող ճանապարհին: Մինչ այժմ տեղացիներն այդ վայրը կոչում են Հարամ ձևով: Հախումքենդին համապատասխանում է Հին Հախում գյուղատեղին, որը գտնվում է Բերդ խոշորացված համայնքի Վարագավան գյուղից մի փոքր դեպի արևելք³⁹⁰: Ղուզան գյուղատեղին գտնվում է ներկայիս Չինչին գյուղի վարչական սահմաններում գտնվող «Ղուզանի քար» կոչվող վայրում: Այստեղ դեռևս նախորդ դարի 30-ական թվականներին տեսանելի էին եկեղեցու պատերի մնացորդները³⁹¹:

Հարկամատյանի հեղինակները Գյոքքիլիսա բնակավայրը տեղադրում են Ղուզան գյուղի հարևանությամբ: Գյոքքիլիսա բնակավայրի անվանումը թուրքերենից թարգմանաբար նշանակում է Կապույտ եկեղեցի: Ղուզանից ուղիղ գծով 3 կմ հարավ-արևմուտք, Վարագաջուր գետի աջ ափին մինչ օրս կանգուն է կապտավուն բազալտից կառուցված և Կապտավանք անունը ստացած XII դ. եկեղեցին: Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք պնդել, որ Գյոքքիլիսա՝ Կապույտ եկեղեցի անունը կրող բնակավայրը գտնվել է հենց Կապտավանքի հարևանությամբ: Հավանաբար այս գյուղատեղիներից դեպի ներքև գտնվում էր ղարաչոլունների (լեզգի՞), կողմից ավերված մյուս բնակավայրը՝ Ղոզլուն կամ Քուզլուն³⁹²: Համզաքենդ գյուղատեղին պետք է ընկած լիներ համանուն լեռան շրջակայքում:

³⁸⁸ COA, No. 903, էջ 243:

³⁸⁹ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, *Աշվ. աշխ.*, էջ 306:

³⁹⁰ Նույն տեղում, էջ 306:

³⁹¹ Նույն տեղում, էջ 237:

³⁹² COA, No. 903, էջ 245:

Շեյխմուրադ գյուղատեղին անկասկած գտնվել է Տավուշի մարզի Վերին Ծաղկավան գյուղից 6-7 կմ հեռավորության վրա գտնվող Շխմուրատի վանք անունով հայտնի վանական համալիրի մտակալքում: Այս գյուղատեղին հիշատակում է նաև Բարխուդարյանցը. «Վանքիս արեւելեան կողմում, ոչ այնքան հեռի, կայ գիւղատեղի եւ հանգստարան Շխմուրատ անուն»³⁹³: Գյուղատեղին նկատելի էր դեռևս անցյալ դարի 30-ական թթ., որտեղ պահպանված էին տների, թոնիքների հետքեր, XII-XVII դդ. գերեզմանատուն: Հարկամատյանում հիշատակված Շեյխմուրադ ավերակ գյուղը հաստատում է հարցին անդրադարձած մասնագետների այն կարծիքը, համաձայն որի՝ վանքն այժմյան անունը ստացել է երբեմնի գյուղատեղից³⁹⁴:

Զոնախ Գյորմեզ գյուղատեղին համապատասխանում է Պառավաքարի ջրամբարին մերձակա տարածքին: Այն տեղացիները մինչ օրս կոչում են Դոնաղ Գյորմազ անունով: Մինչ այժմ պահպանվել են մատուռի և գերեզմանների մնացորդներ: Հավանաբար այս գյուղը նույնպես ավերվել էր լեզգիների կողմից:

Այսպիսով, Հասանուի նահիյեում կար ընդհանուր 42 բնակավայր: Այս բնակավայրերից 4-ում հաշվառված է հայ բնակչություն: Մահմեդական բնակչություն ուներ 13 գյուղ, անմարդաբնակ էին՝ 25-ը: Հայկական գյուղերում ընդհանուր հաշվառված էր 65 հարկատու, ովքեր վճարում էին ընդհանուր 84000 աքչե հարկ: Հասանուի նահիյեի մահմեդական բնակավայրերի հարկատուների թիվը կազմում էր 228: Մշտական բնակության վայր չունեցող քրզըլհաջու ցեղից հաշվառվել են 20 հարկատու: Նահիյեի մահմեդական բնակչությունն օսմանյան գանձարան էր վճարում 255000 աքչե հարկ: Լքված

³⁹³ Բարխուտարեանց, էջ 331:

³⁹⁴ Տե՛ս Գ. Սարգսյան, *Շխմուրատի վանքը*, «Էջմիածին», 1956, № 9, էջ 22: Հեղինակը նաև նշում է Վերին Ծաղկավան գյուղից Վարազաջուր գետի հոսանքն ի վեր մոտ 20-ի հասնող գյուղատեղիների առկայության մասին: Այս գյուղատեղիների մեծ մասն այժմ աննկատ է, սակայն տեղացի տարեցների հիշողության մեջ դեռևս պահպանվել են դրանց մասին պատմություններ:

բնակավայրերի ցանկը բավականին ընդարձակ է՝ 25 գյուղ: Մրանց մեծամասնությունը ոչ վաղ անցյալի հայաբնակ բնակավայրեր են, որոնց դատարկվելը մեծամասամբ կարելի է պայմանավորել լեզգիների ավերիչ արշավանքներով ու պարսկա-օսմանյան պատերազմներով:

Հասանսուի նահիյեի հարթավայրային շրջանները, որոնք սահմանակից են Ղազախի սանջակին, համապատասխանում են Թիֆլիսը Գանձակին ու Արցախին կապող երթուղուն: Ժամանակ առ ժամանակ այս շրջանները գտնվելով տարբեր բանակների զորաշարժերի երթուղում՝ դատարկվել էին: Հայկական բնակավայրերի մեծ մասը տեղակայված էր Վարազաջուր գետի վերին հոսանքի շրջանում: Մյուս նահիյեների հետ համեմատելով՝ ակնառու է դատարկված գյուղերի քանակը: Կարելի է ենթադրել, որ աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ այս բնակավայրերը մշտապես իրենց վրա են վերցրել լեզգիների, օսմանյան, իրանական ու վրացական զորքերի առաջին հարվածները:

թ) Ասրիկ և Յալ նահիյե

Այս նահիյեի բնակավայրերի մեծ մասը գտնվում էին Խորանաշատ վանական համալիրից ոչ մեծ հեռավորության վրա: Աղբյուրների սակավությունը թույլ չի տալիս պատասխանելու այն հարցին, թե արդյոք այս գյուղախումբը որպես առանձին վարչամիավոր Սեֆյանների օրոք գոյություն է ունեցել, թե՛ ոչ: Բացի օսմանյան դաֆթարից, այն որպես գավառակ վկայված է նաև ավելի ուշ շրջանին վերաբերող հայկական մի սկզբնաղբյուրում³⁹⁵: Այս նահիյեի տարածքը ներկայումս ամբողջովին գտնվում է Ադրբեջանի Հանրապետության կազմում: Հետագա տասնամյակներում բնակավայրերի հայաթափվելու և

³⁹⁵ ՄՄ, № 7501, 231 p:

այնուհետ մահմեդականներով բնակեցվելու, ինչպես նաև աղբյուրների լուծությամբ պայմանավորված, Ասրիկի գյուղերի մեծամասնությունը դժվար է տեղորոշել:

Հարկամատյանի կազմողները հետագա շարադրանքում նախընտրել են նահիյեն նշել միայն Ասրիկ ձևով՝ այլևս դուրս թողնելով «Յալ» բաղադրիչը: Հետևաբար կարող ենք արձանագրել, որ գավառն ունեցել է երկու անվանում: Համաձայն վավերագրի՝ Ասրիկի գյուղերն էին՝

Գյուղ Քեշիշքենդ, ուներ 5 հարկատու.

- | | |
|------------------------------------|-------------------------|
| 1. Սարգիս քահանա՝ որդի
Մելքումի | 4. Գասպար՝ որդի Մարկոսի |
| 2. Սարգիս՝ որդի Մարկոսի | 5. Օհան՝ նրա եղբայրը |
| 3. Թահմազ՝ նրա եղբայրը | |

Հավանաբար համապատասխանում է Բարխուդարյանցի հիշատակած ավերված գյուղատեղի Իրիցշենին, որը գտնվում էր Խորանաշատից ոչ հեռու³⁹⁶: Այս ենթադրության օգտին է վկայում երկու հանգամանք: Նախ՝ նահիյեն ընկած է Խորանաշատի հարևանությամբ, երկրորդ՝ Քեշիշքենդ անվանումը թուրքերենից թարգմանաբար բառացի կստացվի «Քահանայի գյուղ»: Հետևաբար Իրիցշեն-Քեշիշքենդ նույնացումը կասկածից վեր է: Կարելի է նաև ենթադրել, որ գյուղի հարկատուների անվանացանկում հիշատակված Սարգիս քահանան Խորանաշատի հոգևոր սպասավորներից էր: Գյուղից գանձվող իսփենջը կազմում էր 600 աքչե՝ 120 աքչե մեկ շնչի հաշվով³⁹⁷: Բոլոր հարկերը միասին կազմում էին 9000 աքչե³⁹⁸:

Գյուղ Ղսլամաքենդի (Քըսլամաքենդի, Ղշլամաքենդի, Քըշլամաքենդի, Ղալաքենդի՝) ուներ 14 հարկատու.

³⁹⁶ Բարխուտարեանց, էջ 326:

³⁹⁷ COA. No. 903. էջ 268:

³⁹⁸ Նոյն տեղում, էջ 269:

- | | |
|--------------------------|-----------------------------|
| 1. Միրզա՝ որդի Գասպարի | 8. Կիրակոս՝ նրա եղբայրը |
| 2. Ավագ՝ նրա որդին | 9. Հովհաննես՝ որդի Կիրակոսի |
| 3. Չալուս՝ որդի Բաղիի | 10. Քիքի՝ որդի Չալուսի՝ |
| 4. Ոսկան՝ նրա եղբայրը | 11. Բաղի՝ որդի Սուքիասի |
| 5. Չալուս՝ որդի Մելքումի | 12. Մարտիրոս՝ նրա որդին |
| 6. Նազար՝ նրա որդին | 13. Սարուխան՝ որդի Ազարիայի |
| 7. Սարգիս՝ որդի Բաքոսի | 14. Ղազար՝ որդի Խաչամի |

Բնակավայրի մասին աղբյուրներում տեղեկություններ չկան, իսկ վերծանությունը որևէ բան չի հուշում: Կարող ենք միայն կոռահել, որ այն ընկած էր Ասրիկ գետի ձախ ափին և տեղակայված պետք է լիներ ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի Չինարի գյուղից ոչ հեռու: Բնակավայրից գանձվում էր 1.680 արչե իսփենջ՝ 120 մեկ շնչի հաշվով: Բոլոր հարկերը միասին կազմում էին 13000 արչե³⁹⁹:

Գյուղ Շարքենդի՝ այլ անունը՝ Քոշաջա՝ (Ղուշաջա), ուներ 7 հարկատու.

- | | |
|--------------------------|------------------------|
| 1. Ոսկան՝ որդի Խաչատուրի | 5. Ավագ՝ նրա եղբայրը |
| 2. Բեքրի՝ որդի Վարդանի | 6. Ջուլա՝ որդի Ղազարի |
| 3. Ավագ՝ որդի Հովհաննեսի | 7. Ղազար՝ որդի Վարդանի |
| 4. Զալ՝ որդի Բարեմբեքի | |

Այս բնակավայրի գտնվելու մոտավոր վայրը հուշում է Բարխուդարյանցը: Վերջինս, թվարկելով Խորանաշատին մոտակա լքված գյուղատեղիները, հիշատակում է նաև Ղոշաջի անունով գյուղ⁴⁰⁰, որն էլ համապատասխանում է հարկամատյանում նշված բնակավայրի մյուս անվանմանը: Գյուղից գանձվող իսփենջը կազմում էր 840 արչե՝ 120 մեկ շնչի հաշվով: Բնակավայրն օսմանյան գանձարանին վճարում էր ընդհանուր 12.000 արչե հարկ⁴⁰¹:

³⁹⁹ COA, No. 903, էջ 269:

⁴⁰⁰ Բարխուտարեանց, էջ 326:

⁴⁰¹ COA, No. 903, էջ 269–270:

Գյուղ Չամուրթույու՝, ուներ 21 հարկատու.

- | | |
|---------------------------|----------------------------|
| 1. Քիքի՝ որդի Մաթևոսի | 12. Մանուր՝ նրա որդին |
| 2. Բաղի՝ նրա եղբայրը | 13. Բաբախան՝ որդի Գագիկի |
| 3. Մաթևոս՝ որդի Քիքիի՝ | 14. Գագիկ՝ նրա որդին |
| 4. Սարգիս՝ որդի Սահակի | 15. Բաբա՝ որդի Շմավոնի |
| 5. Մարութ՝ նրա եղբայրը | 16. Սարուխան՝ նրա եղբայրը |
| 6. Հովհաննես՝ որդի Սարգսի | 17. Ղազար՝ որդի Մխիթարի |
| 7. Բաղալ՝ որդի Սախուրի | 18. Մկրտիչ՝ որդի Սարիբեկի |
| 8. Մելիքսեթ՝ նրա որդին | 19. Սերդար՝ նրա եղբայրը |
| 9. Ավան՝ որդի Մարկոսի | 20. Մանուր՝ որդի Հախնազարի |
| 10. Սարգիս՝ նրա որդին | 21. Բալասան՝ որդի Ավագի |
| 11. Հախնազար՝ որդի Ղազարի | |

Բավական մեծաքանակ բնակչություն ունեցող այս գյուղի տեղորոշումը դժվար է: Օսմաներենից դժվար ընթերցումը թույլ է տալիս զգուշավոր ենթադրություն անել, որ գյուղը Բարխուդարյանցի հիշատակած Չիլքիլու⁴⁰² ավերակ գյուղատեղին է: Այս գյուղից գանձվում էր 2.520 արչե իսփենջ՝ 120 արչե մեկ հարկատուի հաշվով: Բոլոր հարկերը միասնաբար կազմում էին 13.000 արչե⁴⁰³:

Գյուղ Աբբուլաք՝ (Աղբուլաղ), ուներ 19 հարկատու.

- | | |
|-----------------------------|----------------------------|
| 1. Սարգիս՝ որդի Կիրակոսի | 11. Վարդան՝ որդի Մելիքխանի |
| 2. Խաչատուր՝ որդի Ղազարի | 12. Կիրակոս՝ որդի Ավանի |
| 3. Ավագ՝ որդի | 13. Նազար՝ որդի Բաղիի |
| 4. Հովհաննես՝ որդի Թուրջանի | 14. Ազարիա՝ նրա եղբայրը |
| 5. Ղազարիամազ՝ նրա որդին | 15. Սարգիս՝ որդի Ղազարի |
| 6. Կիրակոս՝ որդի Հովհաննեսի | 16. Բարջամ՝ նրա եղբայրը |
| 7. Բեկնազար՝ նրա որդին | 17. Արուսիս՝ որդի Մխիթարի |
| 8. Մինաս՝ որդի Աբրահամի | 18. Կիրակոս՝ որդի Սարգսի |
| 9. Ազարիա՝ նրա եղբայրը | 19. Հովհաննես որդի Հակոբի |
| 10. Սարգիս՝ որդի Մինասի | |


⁴⁰² Բարխուտարեանց, էջ 326:

⁴⁰³ COA, No. 903, էջ 270:

Տավուշ գավառն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաժթար»-ի

- Տավուշ գավառի սահմաններ
- - - - - Հարակից սահմանների սահմաններ
- ⋯⋯⋯ հայկական լիվայի սահմաններ
- Հայաբնակ գյուղեր
- Լքված գյուղեր
- Մահմեդական գյուղեր
- ✕ Կաթնաբուծական վանք
- ⌘ Ամրոց
- I Հասանաուհի սահիյե
- II Տ(Թ)ավուա (Տավուշ) սահիյե
- III Ախրեսայի սահիյե
- IV Արիկ և Յալ սահիյե

Մասշտաբ 1: 300 000



Զարտեգի հեղինակ՝ Անդրանիկ Եսայան
 Զարտեգագիր՝ Գեներիկ Խաչատրյան

Աղբուլաղ բնակավայրը ամենայն հավանականությամբ համապատասխանում է ներկայիս ԱՀ Թովուզի շրջանի Աղբուլաք գյուղին: Այն գտնվում է ՀՀ պետական սահմանից մոտ 1,2 կմ հեռավորության վրա: Բարխուդարյանը Խորանաշատին մերձակա գյուղատեղիների շարքում հիշատակում է նաև Աղբուլաղը⁴⁰⁴: Հավանաբար XVIII դ. վերջերից գյուղը հայաթափվել է, այնուհետև տարածքը յուրացվել և բնակեցվել մահմեդականներով: Գյուղից գանձվող իսպիենջը կազմում էր 2.280 արչե՝ 120 մեկ շնչի հաշվով: Աղբուլաղ գյուղում գործում էր նաև 2 ջրաղաց⁴⁰⁵, որոնցից գանձվում էր 200 արչե հարկ: Բոլոր հարկերը միասին կազմում էին 13.000 արչե⁴⁰⁶:

Ասրիկ նահիյեի կազմում հիշատակված է նաև լակերի ցեղը, որն ուներ 39 հարկատու: Վավերագրում մասնավորապես նշված է. «Լաք հանրույթը Ախնջա ու Ասրիք նահիյեներում է ձմեռում, իսկ յայլայի համար գնում՝ Ղարաղայայի նահիյե: Բացի այդ, այն ձմեռում է նաև Դումաքլուում և Քուրի մոտակայքում, ինչպես նաև յայլայի համար գնում Ներքին և Վերին Ջաքամ»⁴⁰⁷: Փաստորեն նրանք ձմեռակացի ու ամառակացի համար երկուական տեղ են ունեցել: Ինքնին ուշագրավ է լակերի՝ նշված տարածքներում հայտնվելու հանգամանքը, եթե հաշվի առնենք, որ վերջիններս համարվում են դաղստանյան էթնիկ խմբերից մեկը: Նրանց ձմեռակացի վայրերից դատելով՝ կարող ենք ենթադրել, որ սկզբնապես զբաղեցնելով Կուրի առափնյա շրջանները, առավել հարմարավետ արոտավայրեր որոնելու նպատակով հայտնվել էին Միափորի լանջերին՝ հետագայում յուրացնելով նաև հարևան Ջակամ և Ղարաղայա (Միափոր գավառ, Գետիկ

⁴⁰⁴ Բարխուդարեանց, էջ 326:

⁴⁰⁵ Նշված ջրաղացներից մեկի ավերակների մասին հիշատակում է նաև Սամվել Կարապետյանը: Տե՛ս Ս. Կարապետյան, *Էջվ. աշխ.*, էջ 282:

⁴⁰⁶ COA, No. 903, էջ 271:

⁴⁰⁷ COA, No. 903, էջ 272:

գետի հովիտ) նահիյեների արոտավայրերի մի մասը: Լակերը օսման-
յան գանձարան վճարում էին 7.000 արչե հարկ⁴⁰⁸:

Ասրիկ նահիյեի դատարկված, լքված գյուղերն էին՝ Մունլա Առիջ՝ (Մոլա Առիջ), Ասրիք, Չիդուրթալա⁴⁰⁹, Քուլաքիր, Ալթաշ՝ (Սպի-
տակ քար), Քարաթաշ (Ղարաթաշ-Սն քար), Քիրանի, Բոյլուլաք⁴¹⁰,
Չաթախ, Քուլ⁴¹¹: Քուլաքիր վայրը համապատասխանում է Խնձորուտ
գետի վրա գտնվող ջրամբարից մոտ 2 կմ հարավ ընկած հատվածին:
Հավանաբար հիշյալ ավերված գյուղը գտնվել է մոտակայքում և ժո-
ղովրդի հիշողության մեջ դեռևս պահպանվել է անվանումը: Քիրա-
նին, ամենայն հավանականությամբ, ներկայիս ԱՀ Կիրան բնակա-
վայրն է, որն ընկած է Ասրիկի աջ ափին: Ղարադաշ գյուղը ենթադ-
րաբար գտնվել է ՀՀ Չինարի գյուղի՝ ԱՀ հետ սահմանագոտում ըն-
կած համանուն սարի մերձակայքում: Ասրիկ գյուղը հավանաբար հա-
մապատասխանում է ԱՀ Ասրիկ Ջրդիսան բնակավայրին, որը ՀՀ Չի-
նարի գյուղից գտնվում է 2,5 կմ հեռավորության վրա: Մինչև անցած
դարի վերջերն այնտեղ պահպանվել էին եկեղեցու, խաչքարերի ու
գերեզմանատան հետքեր⁴¹²: Չաթախ գյուղն անկասկած XVII դ.
սկզբին լքված հայաբնակ գյուղն է, որի բնակիչները անհայտ հան-
գամանքների բերումով տեղափոխվեցին Ջակամ գավառի Մեծ Ղա-
րանուրատ գյուղ⁴¹³: Մնացած բնակավայրերի տեղորոշումը ձեռքի
տակ առկա աղբյուրներով անհնար է:

Այսպիսով, համաձայն հարկամատյանի՝ Ասրիկ նահիյետում կար
ընդհանուր 15 բնակավայր: Սրանցից բնակեցված էին 5 գյուղեր,
որոնք միասնաբար ունեին 66 հարկատուներ՝ բոլորը հայեր: Այստեղ
ձմեռող լակերի թիվը 39 էր: Ասրիկ նահիյետում անմարդաբնակ, դա-

⁴⁰⁸ COA, No. 903, էջ 272–273:

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 271:

⁴¹⁰ Նույն տեղում, էջ 272: Գյուղի անվանումը հավանաբար կապ ունի լակ ցեղի
հետ:

⁴¹¹ Նույն տեղում, էջ 273:

⁴¹² Ա. Քարտաշյան, *Քարհատ-Ղուլախի-Այգեձոր*, Երևան, 1999, էջ 315:

⁴¹³ *Հայերեն ձմեռգրերի ՏԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.)*, հ. Ա, էջ 367:

տարկված բնակավայրերը 10-ն էին: Հայ բնակչությունն օսմանյան գանձարանին վճարում էր 60.000 աքչե հարկ, իսկ լակերը՝ 7.000 աքչե: Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակ ընդունելով 7-ը՝ նահիյեի մոտավոր հայ բնակչության համար կստանանք 462 անձ:

ժ) Անփութում

Այսպիսով, Տավուշ գավառը կազմող Տավուշ, Հասանսու, Ախնջի և Ասրիկ նահիյեներում կա ընդհանուր 99 բնակավայր: Սրանց մեծամասնությունը՝ 55 գյուղ, դատարկ ու ավերված են: Մնացած 44 գյուղերից 19-ը ունեն հայկական բնակչություն, իսկ 25-ը՝ մահմեդական: Հայկական գյուղերի հարկատուների ընդհանուր թիվը կազմում է 414 հոգի: Մահմեդական 25 գյուղերում հաշվառված են 381 հարկատու: Տարբեր քոչվոր ցեղերից հաշվառված է 334 անձ: Հայկական բնակավայրերը միասնաբար օսմանյան գանձարան են վճարում 380.000 աքչե հարկ: Մահմեդական բնակչության վճարած հարկերը կազմում են 539.000 աքչե: Այս նահիյեների հայ բնակչության մոտավոր թիվը, եթե ընտանիքի միջին թվաքանակ վերցնենք 7-ը, կստանանք 2.898 անձ:

Հարկամատյանի՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները, թեև ընդհանուր պատկերացում են տալիս երկրամասի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ, սակայն ենթադրելի է, որ իրականում բնակչության թիվն ավելի շատ պետք է լիներ: Անկասկած, բնակչության մի հատված խուսափել է հարկահաններից: Կարելի է ենթադրել, որ մի մասը փախել է անմատչելի վայրեր, մի մասն էլ կաշառքով խուսափել հաշվառումից: Բացի այդ, տարածաշրջանում նոր էին ավարտվել ռազմական գործողությունները, և բնակչությունը դեռևս լիարժեք չէր վերադարձել խաղաղ պայմանների կենսակերպին: Այս համատեքստում կարելի է նաև հաշվի առնել նահիյեում հաշվառված քոչվոր բնակչության հանգամանքը: Հավանական է, որ պատերազմական գործողությունների պայմաններում վերջիններս

իրենց կենսաձևով պայմանավորված Տավուշ նահիյեի տարածք էին եկել այլ վայրերից:

Հարկամատյանի տվյալները որոշակի պատկերացում են տալիս նաև հայ բնակչության տնտեսական գործունեության վերաբերյալ: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Մշակվում է հիմնականում ցորեն, գարի, կորեկ, վարսակ և այլն: Ավելի ցածրադիր Տավուշ և Կոզեն գյուղի բնակիչները զբաղվում են նաև շերամապահությամբ ու բամբակի մշակությամբ: Կարելի է ենթադրել, որ այն հետագայում վաճառվում էր երկրամասի կենտրոն համարվող Գանձակ քաղաքում:

Տարածված զբաղմունքներից է նաև այգեգործությունն ու անասնապահությունը: Որոշ բնակավայրերում զբաղվել են նաև մեղվապահությամբ: Մահմեդական բնակչությունը, զբաղեցնելով ցածրադիր շրջանները, հիմնականում պարապում է ավելի շահութաբեր համարվող շերամապահությամբ ու բամբակի մշակությամբ:

Տավուշ գավառի բնակավայրերում գործում էին մեծ քանակությամբ ջրաղացներ, որոնք նույնպես հարկվում էին: Հարկամատյանի տվյալների քննությունից պարզվում է, որ 4 նահիյեների հայաբնակ գյուղերում միասին վերցրած կա 24 ջրաղաց⁴¹⁴: Տեղական բնակչության հիմնական բերքը հացահատիկային մշակաբույսեր էին, որոնց հետագա սպառումն առաջացնում էր ջրաղացի պահանջարկ: Տարածաշրջանի խիտ գետային ցանցը թույլ էր տալիս բավարարել այդ պահանջարկը: Ավելորդ չէ նշել նաև, որ այս ջրաղացներից գանձվող հարկերը Օսմանյան կայսրության այլ վայրերի համանման հարկերի հետ համեմատած նույնպես բավականին բարձր են⁴¹⁵: Օսմանյան իշ-

⁴¹⁴ Տավուշ գետի ջրաղացների մասին տե՛ս Ա. Մելյան, *Հուշատետր Շամշադինի պատմա-սոցիալական նյութերից*, Երևան, 2018, էջ 83:

⁴¹⁵ XVI-XVII դդ. այս հարկատեսակը հիմնականում կազմել է 60 աքչե, տե՛ս Mehdi Ilhan M., *Amid (Diyarbakir) 1518 Tarihli Defter-I Mufassal*, Ankara, 2000, էջ 31, Ahmet Köç, *Mülkiyet Bakımından Silistre Sancağı'nda Değirmenler (XVI. ve XVII. Yüzyıllar)*, Vakıflar Dergisi, Ankara, Yıl: Haziran 2020, Sayı: 53, էջ 35:

խանութիւնները չնչին բացառութիւններով տարածաշրջանի յուրաքանչյուր ջրաղացից հարկել են 120 աքչե:

Հայ բնակչության զբաղեցրած տարածքներն ավելի անբարենպաստ էին (ինչը արձանագրում են նաև դաֆթար կազմողները⁴¹⁶), իսկ հողերի սակավութիւնն ու օսմանյան կոշտ հարկային քաղաքականութիւնն ավելի անտանելի պայմաններ էին ստեղծում: Այս հանգամանքով կարելի է նաև պայմանավորել մի շարք բնակավայրերի՝ հետագա տարիներին լքվելն ու բնակչության գաղթն այլ շրջաններ:

Մահմեդական բնակչութիւնն ունեցող գյուղերը և քոչվոր բնակչութիւնը զբաղեցնում էին հիմնականում Վարազաջուր և Տավուշ գետերի ստորին հոսանքների հարթավայրային՝ դեպի Կուր գետ ընկած շրջանները: Վերջիններս գլխավորապէս զուլբադար և օթուզիքի ցեղային միավորումների տարատեսակ ճյուղեր էին: Նշված 4 նահիլեների բարձրադիր գոտիներն ամբողջովին հայաբնակ են: Գյուղերում հաշվատված բնակչութեան առումով հայերը կազմում են մեծամասնութիւն՝ 416 հայ, 381 մահմեդական հարկատու:

Պատմական տարբեր շրջափուլերում հարթավայրային շրջանները ամբողջությամբ յուրացվել են քոչվոր բնակիչների կողմից: Ավելին, Սեֆյան շահերի օրոք այս տարածքի մահմեդական բնակչութիւնը «նոր համալրում» է ստացել: Հետևաբար, հատկապէս Տավուշ և Վարազաջուր գետերի ստորին հոսանքների բնակչութիւնը, որը չնչին բացառությամբ արդեն ամբողջովին մահմեդական էր⁴¹⁷, ընդհանուր առմամբ փոխում է ժողովրդագրական պատկերը: Հայաբնակ շրջանները՝ ի տարբերութիւն քոչվոր ցեղերի, ավելի շատ են տուժել լեզգիների արշավանքներից: Մահմեդական քոչվոր ցեղերն ավելի շահեկան վիճակում էին, քանի որ նրանք պարբերաբար տեղից-տեղ տեղափոխվելով, կարողանում էին վտանգի պահին արագ

⁴¹⁶ *Օսմանյան օրէնքների Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանոնաւաններ)*, էջ 120:

⁴¹⁷ Բացառութիւն է Կոզեն գյուղը:

հետևալ: Մեր մոտավոր հաշվարկներով՝ տարածաշրջանի մահմեդական բնակչությունը տեղաբաշխված էր 980 կմ քառակուսի տարածքի վրա: Հայաբնակ գյուղերը զբաղեցնում էին մոտ 400 կմ քառակուսի տարածք: Ըստ Օսմանյան դաֆթարի Տավուշ գավառի՝ այժմ ՀՀ Բերդ խոշորացված համայնքը կազմող տարածքն ամբողջությամբ հայաբնակ էր:

Հայ բնակչությունից մեկ շնչի հաշվով գանձվող հարկի քանակն ավելին էր, քան մահմեդականներինը: Ինչպես նշվեց, հիմնական հարկատեսակը՝ իսփենջը, այստեղ մեծ թիվ էր կազմում: Փոխարենը՝ մահմեդական բնակչության պարագայում, դրան համարժեք բեննաք հարկատեսակը կազմում էր եռակի քիչ՝ 40 աքչե⁴¹⁸: Ինչ վերաբերում է քոչվոր կյանք վարող ցեղերի վճարած հարկերին՝ ապա դրանք աննշան թիվ են կազմում և անհամեմատելի են հայ բնակչության վճարած հարկերի հետ: Երկարատև պատերազմներին հաջորդած դադարը, որը կարծես պետք է կայունացներ բնակչության ծանր տնտեսական վիճակը, հակառակ ազդեցությունն ունեցավ: Օսմանյան կայսրության կողմից իրականացրած հարկային ծանր քաղաքականությունն էլ ավելի պետք է խորացներ տնտեսական խնդիրները՝ իր ուղղակի ազդեցությունը թողելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական պատկերի վրա:

⁴¹⁸ Օսմանյան օրենքների Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանոնադրություններ), էջ 121:

ՎԵՐՋԱԲԱՆ

XVII դ. սկզբին Տավուշն անցավ Մեֆյան Իրանին: Ի տարբերություն Հայաստանի այլ շրջանների՝ Տավուշից լայնամասշտաբ ռնագաղթ չիրականացվեց: Ամիրգունա խանի հետախուզական արշավանքի հետևանքով հյուսիսարևելյան Հայաստանից գերեվարվել ու գաղթեցվել է Գանձակի շրջակայքի հայ բնակչության մի հատվածը: Տավուշ գավառն ընդհանուր առմամբ զերծ է մնացել համակարգված բռնագաղթից:

Տավուշն ու հարակից շրջանները բավականին տուժել են մերթընդմերթ լարվող վրաց-իրանական հարաբերություններից: Դրա հետևանքով ավերվել ու թալանվել են Տավուշի որոշ բնակավայրեր: Շահ Աբասը, զգուշանալով վրացական խռովությունից, սկսեց հայվրացական սահմանին ավելի ամրապնդել թյուրքական ցեղերի իշխանությունը: Վերջիններս ժառանգական տիրույթներ ստանալով տարածաշրջանում՝ աստիճանաբար սկսեցին յուրացնել հարթավայրային շրջանների հողերը՝ հայկական բնակչությանը մղելով դեպի լեռնային գոտիներ: Ընդ որում, լեռնային շրջաններն էլ այս ցեղերի համար ծառայում էին որպես ամառային արոտավայրեր:

Երկարատև խաղաղության շրջանը բարերար ազդեցություն ունեցավ տարածաշրջանի համար: Հայաբնակ մի շարք գյուղեր ընդգրկված էին Տավուշի մելիքության կազմում: Հոգևոր մշակութային կյանքում նույնպես զգացվեց որոշակի ակտիվություն: Կարգավորվեց Խորանաշատը կենտրոն ունեցող Տավուշի թեմի գործունեությունը: Ժամանակի ընթացքում հայ բնակչությունը սկսեց սովորանալ և կարիք առաջացավ նոր եկեղեցիների կառուցման: Խորա-

նաշատի առաջնորդ Հովհաննես Եպիսկոպոսի ակտիվ ջանքերով XVII դ. երկրորդ կեսից տարբեր բնակավայրերում սկսեցին կառուցվել եկեղեցիներ:

Շուտով Սեֆյան Իրանում սկսվեց քաղաքական ու տնտեսական ճգնաժամ: Սուլթան Հուսեյնի ծանր հարկային քաղաքականությունն էլ ավելի արագացրեց երկրի թուլացումը: Իրանի տարածքների նկատմամբ հավակնություններ ունեցող Օսմանյան կայսրության և Ռուսաստանը շտապեցին օգտվել այս ամենից: Նախքան բացահայտ առճակատման գնալը՝ թուրքերը լեզգիներին ուղղորդում էին կողոպտիչ արշավանքներ իրականացնել դեպի Վրաստան ու հյուսիսարևելյան Հայաստան: Այս արշավանքների հետևանքով Տավուշի բնակավայրերի մի զգալի մասը կործանվեց, բնակիչները կոտորվեցին կամ գերեվարվեցին: Մեծ կորուստներ կրեցին նաև հոգևոր հաստատություններն ու դրանց սպասավորները: Օսմանյան կայսրության՝ Ռուսաստանի համաձայնությամբ, 1725 թ. նվաճեց տարածաշրջանը: Թուրքական նվաճումները նույնպես ուղեկցվում էին գերեվարությամբ ու կողոպուտներով:

Թուրքերի իրականացրած աշխարհագրի տվյալները Տավուշի պատմության, ժողովրդագրության ու տնտեսության ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր են: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ աշխարհագրոյցյան Տավուշ գավառի բարձրադիր շրջանները՝ ներկայիս Բերդ խոշորացված համայնքն ու ԱՀ կազմում գտնվող Ասրիկ գետի ավազանը, բացառապես հայերով էին բնակեցված: Իսկ ահա հարթավայրային հատվածում գերակշռում էր մահմեդական բնակչությունը: Նստակյաց բնակչության առումով հայերը գերակշռում էին: Վավերագրում վկայված տարածաշրջանի լքված գյուղերի անունները հուշում են, որ դրանց մեծամասնությունը նախկինում հայաբնակ է եղել:

Օսմանյան իշխանությունները տարածաշրջանում կիրառել են աննախադեպ ծանր հարկային քաղաքականություն, ինչն էլ ավելի է

քայքայել սոցիալ-տնտեսական վիճակը: Ի տարբերություն հայերի՝ եկամուտ մահմեդականներն ավելի նպաստավոր պայմաններում էին: Հարկամատյանի մահմեդական որոշ բնակավայրերի հարկատեսակները հուշում են, որ նրանց մի մասը սկսել էր անցնել նստակեցության:

Քոչվոր ցեղերի՝ Տավուշ գավառում հայտնվելու հանգամանքը, ռետագա տասնամյակներում ժողովրդագրական գործընթացների վրա լուրջ ազդեցություն ունեցավ: Հաջորդող տարիներին եկամուտ մահմեդականները հետևողականորեն սկսեցին բնակեցնել հայերի՝ մարդաթափ եղած գյուղերը և աստիճանաբար յուրացնելով ավելի ընդարձակ հողեր՝ նստակեցության անցնելու հող նախապատրաստեցին: Հենց այս բնակչության զբաղեցրած հայկական տարածքն էլ հետագայում դարձավ Ադրբեջանի Հանրապետության մի հատվածը: Ուստի պատահական չէ, որ ՀՀ Տավուշի մարզի սահմանակից աղըրբեջանական բնակավայրերի մեծամասնությունը կրում են 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ում հիշատակված ցեղերի անվանումները՝ Թաթլու, Գյոջալի, Օքսուզլու, Հաջիալու և այլն:

ՀԱՎԵՆ ՎԱԾ

ա) Աղյուսակներ

Տավուշ նահիյե			
Բնակեցված գյուղեր	Քրիստոնյաներ (հայեր)	Մուսուլմաններ	Դատարկված գյուղեր
Ղոչալու	41		Սաաթլու
Արմուդլու (Տանձուտ)	17		Քյոսալար
Չինչին	32		Քուլաջա
Տավուշ	41		Ղամիշլու
Մովսես	11		Քըզըլ Բուլաք
Ղալաթավուս	74		Քամալ
Քիրզան (Կոզեն)	9		Գիրզանթալա
Խալիֆալու		9	Քարաչլու
Շարշափալու		1	Յանըքչինար
Քաչարալի		10	Չինար
Ալիբեյլու		15 (թաթլու)	
Իմամբուլիբեք		14 (թաթլու)	
Դուրախան		25 (օքսուզլու)	
Ֆարզալի		5	
Քալիչալի		1	
Արաբլու		22 (ամիրլու)	
Քարախանլու		17 (ամիրլու)	
Բնակեցված գյուղերի թիվը	17	Դատարկված գյուղերի թիվը	10
Հարկատուների ընդհանուր թիվ			344
Հայ	225	Մուսուլման	119
Ախսջայի (Ախսջի) նահիյե			
Բնակեցված գյուղեր	Քրիստոնյաներ (հայեր)	Մուսուլմաններ	Դատարկված գյուղեր
Չինար	5		Ալիջալու

Դիգեդիս (Տղատես)	26		Զողալու
Չորաթան	27		Անմադյուրան
Ղուշու		26	Մեհրաբ
Ղուշու Օջաքլու		8	Գոշիդեյիրման
			Չիֆթ
			Ալմալըբ
			Բիչանաբ
			Մեծ Ախնջա
			Փոքր Ախնջա
Բնակեցված գյուղերի թիվը	5	Դատարկված գյուղերի թիվը	10
Հարկատուների ընդհանուր թիվ			92
Հայ	58	Մուսուլման	34

Հասանսուի նահիյե			
Բնակեցված գյուղեր	Քրիստոնյաներ (հայեր)	Մուսուլմաններ	Դատարկված գյուղեր
Բալլուդայա	29		Աղունաբ
Մոխարախաչ (Մոխարախաչ)	12		Մեծ Գյունաշ
Մաթոս	11		Փոքր Գյունաշ
Խաչբուլաղ	13		Քուլիջան
Գյոջալի		69 (գյոջալի)	Քըլըչչահ,
Ուդուրլու		13 (գյոջալի)	Գյոթթիլիսա
Մահմեդդուլու		15 (գյոջալի)	Քուլքենդի
Ղայիբ		1 (գյոջալի)	Քուզլու
Վալիոգա		3 (գյոջալի)	Հարամ
Փիրմահամմաղ		5 (գյոջալի)	Ալիսանքենդի
Թաթլի		24 (թաթլու)	Բարսում
Աշաթան		1 (թաթլու)	Համգաքենդ

Ամիրդուլու		23 (թաթու)	Ղարամբենդ
Միքայելի և Յարբադալի		40 (թաթու)	Շեյխմուրադ
Բայազետլու		32 (բայազիդլու)	Սալքիդ
Մուլլա		2 (գյոջալի)	Մուլլա Նադդալի.
			Թաղ
			Բոյալջը
			Սաքլաշին
			Բիշաք
			Թորոս
			Ալփալիդ
			Հախումբենդի
			Քոնախ Գյորմեզ
			Ղուզան
Բնակեցված գյուղերի թիվը	17	Դատարկված գյուղերի թիվը ..	25
Հարկատուների ընդհանուր թիվ			293
Հայ	65	Մուսուլման	228

Ասրիկ և Յալ նահիյե			
Բնակեցված գյուղեր	Քրիստոնյաներ (հայեր)	Մուսուլմաններ	Դատարկված գյուղեր
Քեշիշքենդ	5		Մունլա Առիջ՝ (Մուլա Առիջ)
Ղալամաքենդի, (Քըսլամաքենդի)	14		Ասրիք
Շարքենդի	7		Չիղուրթալա
Չամուրթուլու՝	21		Քոլաքիր
Աքբուլաք (Ադբուլադ)	19		Աղթաշ
			Ղարաթաշ

			Քիրանի
			Բոլլուլաք
			Չաթախ
			Քուլ
Բնակեցված գյուղեր	5	Դատարկված, լքված գյուղեր	10
Հարկատուների ընդհանուր թիվ			107
Հայ	68	Մուսուլման	39 (լակ)

Տավուշ գավառի քոչվոր ցեղերը	
Թավուս (Տավուշ) նահիյե	
Հաջիալի	39
Բայախմադլու	18
Կարակոյունլու	171
Բինաքլը	27
Հասանուլի նահիյե	
Քըզըլիհաջլու	40
Ասրիկ և Յալ նահիյե	
Լակեր	39
Ընդհանուր	334

Տավուշ գավառի հայաբնակ գյուղերի մագրաները	
Թավուս (Տավուշ) նահիյե	
Գյուղ	Մագրա
Թավուս (Տավուշ)	Սոքուփ՝
Մովսես	Մովսես
Ղալաթավուս (Բերդ)	Այթալասին
	Չանաք
Ընդհանուր	4

բ) Հարկատուների ցանկեր

Թավուս նահիյե

Ղոչալու

1. Ներսես՝ որդի Մելիքսեթի
2. Փարսադան՝ նրա եղբայրը
3. Մանուչեհր՝ նրա եղբայրը
4. Գրիքոր՝ որդի Ներսեսի
5. Մելիքբեք՝ որդի Փարսադանի
6. Միրզա՝ որդի Մխիթարի
7. Արուֆին՝ որդի Շմավոնի
8. Ալեքսան՝ նրա եղբայրը
9. Խաչադուր՝ որդի Ջաղումի՝
10. Ենգիբար՝ որդի Բուդաղի
11. Բաղի՝ որդի Մարութի
12. Բեդրոս՝ նրա որդին
13. Էսքանդար՝ որդի Թումանի
14. Սարդար՝ նրա եղբայրը
15. Սարքիս՝ նրա եղբայրը
16. Վարթան՝ նրա եղբայրը
17. Արուֆին՝ որդի Էսքանդարի
18. Շարմազան՝ որդի Խաչադուրի
19. Բաղի՝ նրա որդին
20. Խաչադուր՝ որդի Քուսարի
21. Քուլի՝ նրա որդին
22. Բայանդուր՝ որդի Սարքսի
23. Ենգիբար՝ որդի Չարխանի
24. Վարթան՝ որդի Բայանդուրի
25. Սարքիս՝ որդի Թարխանի
26. Մխիթար՝ որդի Խաչադուրի
27. Ամիրբեք՝ որդի Մովսեսի
28. Գրիքոր՝ նրա որդին
29. Ավաք՝ որդի Թավանսարի
30. Սարիադ՝ որդի Ղազարոսի
31. Նազարբեք՝ նրա որդին
32. Սարքիս՝ որդի Թավանսարի
33. Խաչադուր՝ նրա եղբայրը
34. Առաքել՝ որդի Քարաբեդի
35. Սարքիս՝ նրա որդին
36. Սարուն՝ որդի Թավանսարի
37. Բեդրոս՝ նրա որդին
38. Ավաք՝ որդի Քուրաջանի
39. Օվանես՝ նրա որդին

40. Ծվանես՝ որդի Օհան
քեշիշի

Արմուդյու

1. Սարքիս՝ որդի Դավդի
2. Մխիթար՝ որդի Ավաքի
3. Մարքարե՝ նրա որդին
4. Գասբար՝ որդի Սարխանի
5. Բալասան՝ նրա եղբայրը
6. Բարաս՝ նրա որդին
7. Առաքել՝ որդի Բողոսի
8. Սարքիս՝ նրա եղբայրը
9. Օհան՝ որդի Շմավոնի

Չինչին

1. Աթաբեք՝ որդի
Մանուչեհրի
2. Քարադաշ՝ նրա եղբայրը
3. Ծվանես՝ որդի Դողերի՝
4. Սարքիս՝ նրա եղբայրը
5. Նազարբեք՝ նրա որդին
6. Բաղի՝ որդի Քարախանի
7. Սարքիս՝ նրա եղբայրը
8. Մխիթար՝ նրա որդին
9. Մքրդիչ՝ որդի
Բայանդուրի
10. Փիրամ՝ նրա եղբայրը
11. Բաբախան՝ որդի
Օվանեսի
12. Առաքել՝ նրա եղբայրը
13. Մխիթար՝ որդի
Բաբախանի

41. Ծվանես՝ որդի Ներսես
քեշիշի

10. Միքայել՝ որդի Օվանեսի
11. Սարքիս՝ նրա որդին
12. Սարքիս՝ որդի Միսխամի
13. Յաղուր՝ որդի Մրավի
14. Օհան՝ նրա որդին
15. Սահաք՝ որդի Սարքսի
16. Բաղի՝ որդի Առաքելի
17. Արսլան՝ որդի Միսխամի

14. Սարքիս՝ որդի Դավդի
15. Ալիխան՝ որդի Աղբալի
16. Քարախան՝ նրա եղբայրը
17. Բալասան՝ որդի
Թաբանի՝
18. Աբրահամ՝ որդի Մարքոսի
19. Բայանդուր՝ նրա որդին
20. Ավաք՝ որդի Խաչիքի
21. Քիրաքոս՝ նրա որդին
22. Ղազար քեշիշ՝ որդի
Օվանեսի
23. Մաթոս՝ որդի
Բաղդասարի
24. Բաղի՝ որդի Սարքսի
25. Ծվանես՝ որդի Վրդանեսի
26. Արուսին՝ որդի Մանուքի
27. Ալիխան՝ որդի Սարքսի

28. Դողեր՝ որդի
Դողուխանի
29. Քիրաքոս՝ նրա եղբայրը
30. Մանուչեհր՝ որդի Դավդի

31. Արուֆին՝ որդի Այվազի
32. Գրիքոր՝ որդի
Խաչադուրի

Թավուս

1. Թարսամ՝ որդի՝ Սարքիս
քեշիշի
2. Նազար՝ նրա եղբայրը
3. Խոսրով՝ նրա որդին
4. Սարքիսքեշիշ՝ որդի
Աղիբեքի
5. Աղամ՝ նրա որդին
6. Բեդրո՝ որդի Փիրքարի
7. Բաղի՝ որդի Ամիրխանի
8. Բալասան՝ որդի Ադայի
9. Խոսրով՝ նաև որդին
10. Մխիթար՝ որդի Միրզայի
11. Օվսեփ՝ նրա եղբայրը
12. Մարդիրոս՝ որդի

- Գրիքորի
13. Շմավոն՝ որդի Օվանեսի
14. Մքրդիչ՝ նրա եղբայրը
15. Մարդիրոս՝ որդի

- Շմավոնի
16. Աղուք՝ որդի Ալիխանի
17. Ղազար՝ նրա եղբայրը
18. Մանուչեհր՝ որդի

- Խաչումի
19. Սարխան՝ որդի Մարդիհի՝
(Մարդիրոս)

20. Ասլիբեք՝ որդի
Քարափեթի
21. Ազադ՝ որդի Սարքսի
22. Մելքոմ՝ նրա եղբայրը
23. Վարթան՝ որդի Ազադի
24. Արուֆին՝ որդի Շմավոնի
25. Աբրահամ՝ նրա եղբայրը
26. Բալասան՝ որդի Աղիբարի
27. Մարդիրոս՝ նրա եղբայրը
28. Օհանես՝ որդի Մքրդչի
29. Մաթոս՝ նրա եղբայրը
30. Սարքիս՝ որդի Անդոնի
31. Մխիթար՝ որդի

- Քարազյոզի
32. Արուֆին՝ նրա որդին
33. Գասպար՝ որդի

- Վարթանի
34. Սուրաբար՝ որդի

- Օհանեսի
35. Քիրաքոս՝ որդի Օհանի
36. Գրիքոր՝ նրա որդին
37. Օվանես՝ որդի Բալասանի
38. Շմավոն՝ որդի

- Մարդիրոսի
39. Օվանես՝ նրա եղբայրը

40.Շահնագար՝ որդի
Ներսեսի

Մովսես

1. Մարդիրոս՝ որդի
Մաթոսի
2. Սարքիս՝ որդի
Խաչատուրի
3. Աղիբեք՝ որդի Մանասի
4. Ջահի՞՝ նրա եղբայրը
5. Յաղոբ՝ որդի Իսախանի

Ղալաթավոս

1. Ավաք՝ որդի Աթաբեքի
2. Օվանես՝ նրա որդին
3. Սարքիս՝ որդի Օվանեսի
4. Աղաբեք՝ նրա եղբայրը
5. Մեհրիար՝ որդի
- Մարդիրոսի
6. Արութին՝ նրա որդին
7. Թաթոս՝ որդի
- Մարդիրոսի
8. Սևաքնաս՝ որդի Բաղլիի
9. Ավաք՝ նրա որդին
10. Մուրադխան՝ որդի
- Մարգարեի
11. Օվանես՝ նրա եղբայրը
12. Խաչատուր՝ նրա որդին
13. Դավիդ՝ որդի Քիրաքոսի
14. Սարքիս՝ որդի Ուլուբեքի
15. Ուլուբեք՝ նրա որդին

41. Միրզա՝ որդի Սերդարի

6. Մուրադ՝ որդի Վարթանի
7. Դավիդ՝ որդի Հանեսի
8. Յաղոբ՝ նրա եղբայրը
9. Վարթում՝ որդի
Գիրաքոսի
10. Վարթան՝ որդի Բողոսի
11. Դավիդ՝ նրա որդին

16. Այվազխան՝ որդի
Գուսանի
17. Առաքե՝ նրա որդին
18. Մարդոս՝ որդի Սարքսի
19. Ավանես՝ նրա որդին
20. Դավիդ՝ որդի Բալասանի
21. Ավանես՝ որսի
Մարդիրոսի
22. Էսքանդար՝ որդի
Մանուքի
23. Դանիել քեշիշ՝ որդի
Ազարիայի
24. Աղիբեք՝ որդի
Քուրդամարի՝
25. Քուրդամար՝ նրա որդին
26. Մելիքսեթ՝ որդի
Օվանեսի
27. Ղազար՝ նրա եղբայրը

28. Մանուել՝ որդի

Մելիքսեթի

29. Մինաս՝ որդի Սահաքի

30. Սարքիս՝ նրա որդին

31. Աթաբեք՝ որդի Թիմուրի

32. Այվազ՝ որդի Մքրոչի

33. Մքրոչիչ՝ որդի

Մարդիրոսի

34. Օհան՝ որդի

Քարամուրադի

35. Ազարիա՝ որդի Սահաքի

36. Ավաք՝ նրա եղբայրը

37. Մխիթար՝ որդի Ավանեսի

38. Ավանես՝ նրա որդին

39. Սարքիս՝ որդի Ավանեսի

40. Բալասան՝ որդի Յաղուբի

41. Յաղուբ՝ որդի Շմավոնի

42. Նազար՝ նրա որդին

43. Սարքիս՝ որդի Առաքելի

44. Ավանես՝ որդի Քիրաքոսի

45. Նազար՝ նրա որդին

46. Բաղի՝ որդի Սարքսի

47. Խաչում՝ որդի Ալթունի

48. Ավանես՝ նրա որդին

49. Ալեքսան՝ որդի

Սարուխանի

50. Անդոն՝ նրա եղբայրը

Քիրզան

1. Ալիխան՝ որդի Աթանի

2. Վելիխան՝ նրա որդին

51. Արութին՝ որդի Ավանեսի

52. Աղուբ՝ որդի Սարքսի

53. Նուրի՝ նրա եղբայրը

54. Բաղի՝ որդի Առաքելի

55. Ղազար՝ նրա եղբայրը

56. Սարքիս՝ որդի Սահամի

57. Միրամխան քեշիչ՝ որդի

Քուլիի

58. Սարիբեք՝ որդի

Վարթանի

59. Ավանես՝ որդի Մաթոսի

60. Քուքի՝ նրա որդին

61. Բալասան՝ որդի Մաթոսի

62. Սարդա՝ որդի Օհանեսի

63. Էսքանդար՝ նրա որդին

64. Մխիթար՝ որդի Օվանեսի

65. Սալա՝ որդի Մաղոսի

66. Օվանես՝ որդի

Բաղդասարի

67. Գասպար՝ նրա որդին

68. Խոսրով՝ որդի Սահամի

69. Մելիքսեթ՝ որդի Բաղիի

70. Սահաք՝ նրա եղբայրը

71. Բաբախան՝ նրա որդին

72. Օհան՝ որդի Բաբախանի

73. Օհան՝ որդի Մքրոչի

74. Գալուսթ՝ նրա եղբայրը

3. Միրզախան՝ որդի

Փարիի՝

4. Իսախան՝ նրա եղբայրը

- | | |
|---------------------------|-------------------------|
| 5. Սարուն՝ որդի Քուրսաբի՝ | 8. Մանուչեհր՝ նրա որդին |
| 6. Աբրահամ՝ նրա որդին | 9. Ավաք՝ որդի Սերդարի |
| 7. Խաչեմ՝ որդի Քաղիմի | |

Ախընջայի (Ախնջի) նահիյե

Չինսար

1. Մանուչեհր՝ որդի Նազարի
2. Արութին՝ նրա եղբայրը
3. Նազար՝ որդի Մանուչեհրի
4. Մանուել՝ որդի Բաղլիի
5. Արութին՝ որդի Ալիխանի

Դարդադիս (Դիդեդիս)

- | | |
|------------------------|---------------------------|
| 1. Ղազար՝ որդի Թորոսի | 14. Մլխիթար՝ որդի Նազարի |
| 2. Սարքիս՝ նրա որդին | 15. Նուրի՝ որդի Խաչատուրի |
| 3. Մաթոս՝ որդի Առաքելի | 16. Բանու՝ նրա որդին |
| 4. Իսախան՝ որդի Սարքսի | 17. Արութին՝ որդի Սարքսի |
| 5. Գիորգի՝ նրա որդին | 18. Ավաք՝ նրա եղբայրը |
| 6. Մքրդիչ՝ որդի | 19. Ղազար՝ որդին |

Մարդիրոսի

7. Սարքիս՝ նրա եղբայրը
8. Յաղուբ՝ որդի Մարադի
9. Մանուել՝ որդի Մխիթարի
10. Ավանես՝ որդի Մլխիթարի
11. Նազար՝ որդի

Բաղդասարի

12. Մլխիթար՝ որդի Սարքսի
13. Օվանես՝ նրա որդին

Վարթանի

20. Մելի՝ որդի Մարամզայի՝
21. Օվանես՝ որդի

Մարդիրոսի

22. Բեդրոս՝ նրա որդին
23. Ադոմ՝ որդի Սարքսի
24.՝ որդի Մարքարեի
25. Փափի՝ որդի Գասպարի
26. Սարքիս՝ որդի Գասպար

Չորաթան

- | | |
|-------------------------|------------------|
| 1. Իսախան՝ որդի Յաղուբի | 3. Քարափեթ՝ որդի |
| 2. Յեղիա՝ նրա որդին | Յուսեփի |

4. Միրզա՝ նրա որդին
 5. Վարթան՝ որդի
- Վարթանի
6. Մխիթար՝ որդի Նազարի
 7. Սարուխան՝ նրա որդին
 8. Քուրղամար՝ որդի

- Քարախանի
9. Ավաք՝ նրա որդին
 10. Ալիխան՝ որդի Սարքսի
 11. Արուֆին՝ նրա որդին
 12. Մելիքսեթ՝ որդի

- Բաբախանի
13. Սարուխան՝ որդի

- Նազարի
14. Օվանես՝ նրա որդին
 15. Խաչադուր՝ որդի

Քարախանի

16. Մխիթար՝ նրա որդին
17. Մանուել՝ որդի Ավաքի
18. Բադալ՝ նրա որդին
19. Մխիթար՝ որդի

Խաչադուրի

20. Սահաք՝ նրա որդին
21. Սարքիս՝ որդի Անթոննի
22. Սարքիս՝ որդի Մրավի
23. Բաղի՝ որդի Քարագյոզի
24. Քեչիչ Ներսես՝ որդի

Մխիթարի

25. Մքրդիչ՝ նրա եղբայրը
26. Սարքիս՝ որդի

Սարգարեի

27. Մախնամ՝ որդի

Վարթանի

Հասանսուի նահիյե

Բայրուդայս

1. Ավաք՝ որդի Սահաքի
2. Սարգիս՝ որդի Ասադուրի
3. Օսուփ՝ նրա որդին
4. Օշին՝ որդի Ներսեսի
5. Մխիթար՝ որդի Թանանի՝
6. Բաբա՝ որդի Սարգսի
7. Քիրաքոս՝ նրա եղբայրը
8. Իսախան՝ որդի
Դանաբեքի
9. Մելիք՝ որդի Սարխանի
10. Ավաք՝ որդի Դավդի
11. Աբրամ՝ նրա որդին
12. Բաղի՝ որդի Գրիքորի
13. Միդիչ՝ նրա եղբայրը
14. Գրիքոր՝ որդի Օվանեսի
15. Մխիթար՝ նրա որդին
16. Օվանես՝ որդի Ալիխանի
17. Իսախան՝ որդի Աղուբի
18. Ազադ՝ որդի Նազարի
19. Մգրդիչ՝ որդի Սարխանի
20. Սարխան՝ նրա որդին
21. Վարթան՝ որդի Օվանեսի

22. Մելքում՝ որդի Մալամի՝
23. Ալիխան՝ որդի Սարգսի
24. Յաղուբ՝ նրա որդին
25. Օվանես՝ որդի
Մխիթարի

26. Օվանես՝ որդի Մխիթարի
27. Անդոն՝ որդի Գրիքորի
28. Սարգիս՝ որդի Սարխանի
29. Օվանես՝ որդի Գրիքորի

Մոխարախաչ (Մոխրախաչ)

1. Ուլուխան՝ որդի Մգրդչի
2. Շմավոն՝ նրա եղբայրը
3. Մգրդիչ՝ որդի Ուլուխանի
4. Յաղուբ՝ որդի Բաբայի
5. Սահաբ՝ որդի Սարքսի
6. Քարափեթ՝ նրա որդին
7. Իսախան՝ որդի

8. Սարուխան՝ նրա եղբայրը
9. Մխիթար՝ որդի
10. Յաղուբ՝ որդի
Սարուխանի
11. Բաղի՝ որդի Մելքունի
12. Խաչաղուր՝ որդի
Բալասանի

Քարափեթի

Մարթու

1. Աղուբ՝ որդի Օհանի
2. Քարափեթ՝ որդի Օհանի
3. Բեդրոս՝ որդի

7. Մելքում՝ որդի Մաթևոսի
8. Խաչաղուր՝ որդի
Մխիթարի

Վարթանի

4. Օվանես՝ որդի Ամիրխանի
5. Սարգիս՝ որդի Վելիխանի
6. Զաքարե՝ նրա որդին

9. Օհան՝ որդի Վարթանի
10. Մխիթար՝ նրա որդին
11. Թահրան՝ որդի
Բաղդասարի

Խաչքույաղ

1. Զանիք՝ որդի Ալիխանի
2. Ավաք՝ նրա եղբայրը
3. Իսախան՝ որդի

6. Առաքել՝ որդի Դավդի
7. Օվանես՝ որդի Մխիթարի
8. Օվանես՝ որդի

Քարախանի

4. Բեղի՝ որդի Օվանեսի
5. Օսուփ՝ որդի Օվանեսի

- Սարուխանի
9. Մանուել՝ նրա որդին
10. Բաղի՝ որդի Աղուբի

11. Օհան՝ որդի Մելքումի
12. Միրզա՝ որդի Քուլիի

13. Ղազար՝ որդի Օվանեսի

Ասրիկ և Յալ նահիյե

Քեշիշքենդ

1. Սարգիս քեշիշ՝ որդի Մելքումի
2. Սարքիս՝ որդի Մարդուսի
3. Թահմազ՝ նրա եղբայրը
4. Գասպար՝ որդի Մարդուսի
5. Օհան՝ նրա եղբայրը

Ղաթմասքենդի՛

1. Միրզա՝ որդի
Գասպարի
2. Ավաք՝ նրա որդին
3. Չալուս՝ որդի Բաղլիի
4. Ուքան՝ նրա եղբայրը
5. Չալուս՝ որդի Մելքումի
6. Նազար՝ նրա որդին
7. Սարքիս՝ որդի Բաքուսի
8. Քիրաքոս՝ նրա եղբայրը

9. Օհանես՝ որդի
Քիրաքոսի
10. Քիքի՝ որդի Չալուսի՛
11. Բաղլի՝ որդի Սուքիասի
12. Մարդիբոս՝ նրա որդին
13. Սարուխան՝ որդի
Ազարիայի
14. Ղազար՝ որդի Խաչամի

Շարքենդի

1. Ուքան՝ որդի Խաչադուրի
2. Բեքրի՝ որդի Վարթանի
3. Ավաք՝ որդի Օվանեսի
4. Զալ՝ որդի Բարեմբեքի
5. Ավաք՝ նրա եղբայրը
6. Զուղա՝ որդի Ղազարի
7. Ղազար՝ որդի Վարթանի

Չամուրթուլու՛

1. Քիքի՛՝ որդի Մաթոսի
2. Բաղլի՝ նրա եղբայրը
3. Մաթոս՝ որդի Քիքիի՛
4. Սարքիս՝ որդի Սահաքի
5. Մարուք՝ նրա եղբայրը
6. Օվանես՝ որդի Սարգսի

7. Բադալ՝ որդի Սախուրի
8. Մելիքսեթ՝ նրա որդին
9. Ավան՝ որդի Մարդուսի
10. Սարքիս՝ նրա որդին
11. Հախնազար՝ որդի

Ղազարի

12. Մանուր՝ նրա որդին
13. Բաբախան՝ որդի Գագիքի
14. Գագիք՝ նրա որդին

Աքբուլաք (Աղբուլաղ)

1. Սարգիս՝ որդի Գիրաքոսի
2. Խաչադուր՝ որդի

Ղազարի

3. Ավաք՝ որդի
4. Օվանես՝ որդի Թուրջանի
5. Ղազարիամզա՝ նրա

որդին

6. Գիրաքոս՝ որդի Օվանեսի
7. Բեքնազար՝ նրա որդին
8. Մինաս՝ որդի Աբրամի
9. Ազարիա՝ նրա եղբայրը

15. Բաբա՝ որդի Շնավունի
16. Սարուխան՝ նրա եղբայրը
17. Ղազար՝ որդի Մխիթարի
18. Մքրդիչ՝ որդի Սարիբեքի
19. Սերդար՝ նրա եղբայրը
20. Մանուր՝ որդի

Հախնազարի

21. Բալասան՝ որդի Ավաքի

10. Սարգիս՝ որդի Մինասի
11. Վարթան՝ որդի

Մելիքխանի

12. Գիրաքոս՝ որդի Ավանի
13. Նազար՝ որդի Բաղիի
14. Ազարիա՝ նրա եղբայրը
15. Սարգիս՝ որդի Ղազարի
16. Բարջամ՝ նրա եղբայրը
17. Արուֆին՝ որդի Մխիթարի
18. Գիրաքոս՝ որդի Սարգսի
19. Օվանես՝ որդի Յաղուրի

q) Fluqhr inbpun

The manuscript page contains handwritten text in a cursive script, organized into two columns. The text is written on a light-colored background with a dark border. The page is numbered '114' at the bottom center. The text is arranged in several lines, with some lines starting with a horizontal line and a small mark above it, possibly indicating a section or a specific type of text. The script is dense and appears to be a form of shorthand or a specific dialect of a language.

114

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

Handwritten musical notation on a staff with a treble clef. The notation includes various rhythmic values and accidentals. Below the staff, there are several lines of text in Persian script, including the word "مقام" (Maqam) and other musical terms.

~~此~~
此

此

此

